



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

35

LGN

1082

11/984

1999

ՄՐԱԳԻՈՒ ՀԵՐԿՈՒԱՆ

ՅՈՒՂԻԱՆԵ

ԳՕՄԱԿԱ

ՊՈՂՈՍ ԵՒ ՎԼԻՌԳԻՆԻԱՆ

— 1864 —

Ա. ՀԱՐԱԴՐԱՅԻՆ ՏՊԱՆ ԹԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՕԾ. ԲԻBLԻՈՏԵԿԱ



29. 1082
41082-60



Քանի մի բարեկամաց հրապուրանօք անցեալ ձմեռ
Պողոս եւ Վիրդինիայի թարգմանութիւնս Բէրայի Արե-
ւելեան թատրոնին մէջ ներկայացնել տուի , եւ բաւա-
կան յաջող ելք ունեցաւ . այս տարի նոյնն տպագրու-
թեամբ հրատարակելով , յուսամ հստարակոթեան հա-
ճոյ ըլլայ . թէալէտ Պէրնարտէն տը Ան Բիէրի վէպն ,
ուսիից այս թատրերգութիւնս քաղուած է , կրկին զե-
ղեցիկ թարգմանութեամբք մեր ազգին ծանօթ է : Այս
առթիւ պէտք է իմ շնորհակալութիւնս յայտնեմ , թէ
Հայ ժողովրդեան կրկին եւ կրկին ներողամիտունինդրու-
թեանն , եւ թէ այն զերասաններուն որ այս խաղս
ներկայացուցին :

Պօղոս եւ Վիրդինիայի հետ հրատարակեմնաեւ սլըզ-
տիկ քնարերգական Ողբերգութիւն մի գրաբառ, Յուլի-
անէ անուամբ . որուն նիւթ բոլորովին մտացածին է, եւ
որ 1857ին տպած քերթուածոցս գիրքէն դուրս էր մնա-
ցեր . — թերեւս տաղաչափական քանի մի նորութիւնք,

Բ

Եթէ յաջողած ըլլամ, այս քերթուածս մասամբ հասա-
րակութեան ներելի ընեն.

Նոյն կարգի է նաեւ Յսովանի Գօմալա քերթուածին
վրայ ըրած փորձս, զոր Մագրէրոընի Անգղիական ար-
ձակ գրութենէն աշխարհաբառ ոտանաւորի վերածեցի,
անհրաժարելի սեպուած էւ, ի՞ո մասնիկներն մէկ դի ձը-
գելով, եւ ջանալով միանգամայն օրինակիս հաւատա-
րիմ մնալ.

Գրքոյկս համառօտ է, որով թէ համակրութեան
արժանի չըլլամ, գոնէ ընթերցողներուս երկայն ձանձ-
րութեան առիթ տուած չեմ ըլլար.

ՍՐԱՊԻՈՆ ՀԵՔԻՄԵԱՆ

29 Նոյեմբեր 1863:

ՅՈՒՂԻՄՆԵՐ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՔԱՐԵՐԳԱԿԱՆ


ՅԵՐԻՍ ԱՐԱՐՈՒԱԾԱ

1850



ԴԵՐԱՍՈՑՆՔ

ՍՎԵԱԹՈՍԼԱՒ
ԵՏՄՈՒԴ
ՅՈՒԼԻԱՆԵ
ԿՈՐԻՆՆԱ
ՊԱՐՔ ԱՐԱՅ ԵՒ ԿԱՆԱՅ



- Ա. Տեսարանն ՚ի մերձակայս Գիշվայ :
Բ. " ՚ի Գիշվ :
Գ. " " և ՚ի վանս լինչ կուսանաց :



ՅՈՒԽԵԿԱՆԵ

ԱՐԱԲՈՒԹԱԾ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՅՈՒԽԱՆԵ. ԿՈՐԻՆՆԱ ԵՒ ԾԱԴԿԱՔԱԴ,
ՕՐԻՈՐԴԱՑ ՊԱՐ

(Դաշտ ընդարձակ, 'ի միջավայրս գետ սահուն, 'ի հեռուստ
նշմարին կաղամախիք և անտառ թաւուտ տերեախիտ, 'ի մուտս
անտառին գերեզմանք զիւղականաց, յորոց մին է շիրիմ մօրն Յու-
լիանեաց, առ որով և վարդենիք—հիւղք աստ անդ սփռեալք,
ուստի ելանեն դունդագունդ պարք մանկահասակ աղջկանց և
և քաղեն ծաղկունս :

Ոմանք 'ի պարուէն առ Յուլ.

Ե'կ, քոյր նաղելի,
Ի ծաղկանց, վարդից
Փռնջըս զեղալից
Աղէ կաղմեսցուք .

ԱՅԼՔ

Պսակ շնորհալի
Կաղմեսցուք վարդից
Փռնջիւք զեղալից
Լոյս ճակատոց շուք :

ԿՈՐԻՆՆԱ (Հայուցիւմ իւնչս ծաղկանց առ Յուլիանէ)

Ո՛ քոյր վայիկասոմ,
Ահա քեզ սլբսակ
Ածեմ երփին 'ի գոյն,
Զոր դիմացդ հանդոյն
Անոյշ սլարդունակ ,

ի հեշտ բոյր գարնան
զմնեն վարդք, շուշան .

ՊԱՐՆ ՈՂՋՈՅՆ

իցիւ թէ յասմիկն
Եւ վարդ գեղեցիկ
Ըղխինդ վերածեն ,
'ի առ մեղ զաչս անդրէն
Սիրով յառես :

ՅՈՒԼԻԱՆԵ

Սիրեմ ես ըղձեղ ,
Սիրեցից յաւէտ .
Ծաղկամրս հոտաւէտ
Ըղմթին ճակատո
Յարդարեցից ,
Եւ դուք ցանկ յերեսս
Սիրով ժպտեսջիք .
Զ' ինձ այլ սփոփանք չիք
Բայց սէր խանդակաթ
Թ' 'ի ձէնջ տեսից :

(Փարի պարանոցու Կորինայ : — ըստ Անդրեան պիրէ առ Հայր Տէ
Հայի առջ Շինուածու)

Երբեմն 'ի ձեղ :

Զըւարթագոյնն էի ես : (իս, Խորհրդածուն)

ՊԱՐՆ ՍԱՐՀ ՊՐԵԴԵՍԼ ՊՆՈՒՄ :
Խընդա՛ աղջիկ , վանեա՛ զմթին
Խորհուրդո 'ի մոսցըդ դառնադին .
Յուշ զի ոչ ցանկ յուղէ յալիս
Հիւսիս հողմուն ըսպառնալիս .

Ոչ ցանկ ամոլրոպք մրըրկեն զեթերս .
Զիաղրդ մնացցեն յար ցաւք յերեսս :

ՈՄԱՆՔ

Օ՛Ն Յուլիանէ զքո ցաւոց
Մեղ սպատմեա' զթել չարահոծ :

ՅՈՒԼԻԱՆԵ յառէ պաշ ճերիէր եւ արդասանէ :

Աղջկունք գիէվի ,
Ենորհազարդք գեղեցիկք ,
'ի դէմս Յուլիանեայ
Գլթութեամբ զի՞նայիք .

—

Աչք ձեր երկրասլիշ
Ուեն ինձ , ո'չ ընդէ՞ր
Գէմք ըո թալկահար ,
Է՞ր տրառում ես քոյր մեր :

—

Անմեղ օրիորդք ,
Մինչ կոյ ժամ խնդացէք ,
Յաւոց յիմ սրտիս
Է՞ր բաժինըս խնդրէք :

—

Հասցեն , ո'չ , աւորք ,
'ի անկարօտ զիտել զէրն ,
Այն թալուին եւ այն
Բախուծ աեսցին 'ի դէմս ձեր .

—

ԿՈՐԻՆՆԱ

Լիցին քո հողք խաղաղիկ
Լիցին զըրախտք շրջասփիւռ,
Փաղփուն ծաղկանց ճեմելիք
Եւ առուակին հեղիկ ջուր :

ՊԱՐԿ

Օ՞ն Յուլիանէ զքո ցաւոց
Մեղ պատմեա զթել չարակոծ :

ՅՈՒՆԻՑԱԿ

Հայր իմ 'ի մարտ գնայր անդարձ —
Եւ ոչ շնորհէր ինձ առ շիրմաւ ծընողիս
Լալ 'և ոռողելքցուրտ աճիւնսն իւր ողբովք :
Որշափ փառօք աճէր անուն Հարօլդայ
'ի անմահ ձայնէր բնիկ իրաւանցս ախոյեան
Համբաւ նորին յաղդս համայն ,
Նոյնչափ աւարտն իւր ծածկէր
Խորհրդափակ լուրջ 'ի ստուեր :

Ծնդ հուալ 'և 'ի մօրս անջատեցայ
ի քաղցրադոյն համբուրից .
ի ցուրտ շիրմն ոյն բացօթեայ
Կընքեալ զթարշամ յոյս տենջից :

(Խանդական դիմէ առ շէրիմն)

Ո՛վ դառնաղէտ տըխուր յուշ ,
Որ անալաշտական յարբունս կենաց
թէ յար կացի զուրկ 'ի ծնողաց ,
իւ ցոլանայ խինդ յաչս անոյշ :

ԿՈՐԻՆՆԱ

Մերժեա զտըխուր անցիցդ յուշ .

Թէսլէտ կենաց քոց յարշալոյս
Սնջատ կացեր 'ի ծնողաց ,
Ապագայն քեզ ժպտի փառաց :
9ի յարքունիս Սվետթուլաւ այ
Կալցիս գեղոյդ ըզմըրցանակ ,
9ի ո քան զքեզ 'ի դաշտս համակ
Առաքինի եւ գեղաչեայ :

ՊԱՐՆ

Եւ ո քան զքեզ 'ի դաշտս համակ
Կոյս փափիկասիրտ եւ գեղաչեայ :

ՅՈՒԼԻԱՆԵ

Բաւեն ինձ դաշտքս յերջանկութիւն . . .

ԿՈՐԻՆԱ

ԵՐՋԱՆԻԿԱ

Անդ զիտասցես եւ հաստել :

ՅՈՒԼԻԱՆԵ

Ցիս իրր յուսաս
Յառիցին լոկ արքայորդւոյն բիրք եւ կամք :

ԿՈՐԻՆԱ

Քան ըզսովորն արդ յաճախ
Գայ Սվետթուլեաւ 'ի մերձակայ անտառն յորս :
Եւ երբ 'ի դաշտս իջանէ
Բիր մըտախոհ բազեղնապատ ըզ քոյդ հիւղ
Զիփակ պատուհանս քո անձկութեամբ նըկատէ :

ՅՈՒԼԻԱՆԵ

— Եւ զի՞նչ առ այս —

ԿՈՐԻՆՅԱ

ՀԵՂԱՀԱՄԲՈՅՐ ՚ի քոյդ սիրտ
ԵՐՐԵՔ ՓԱՍՏԱԳ ոչ շողաց տենջ :

ՑՈՒԼՒԱՆԵ

ՈՉ ԲԸՆԱԼԻ յոսկեծըզի յասլարանո ,
ՀՈՎԱՂ գահոյից — սիրէ զխաղաղ սիրտ եւ սոռուեր :
ԱՅԼ տակաւին ոչ պատմէի ձեզ զամէն
իմ արհաւրաց եւ զանձկութեանցըս զառիթ :

ՊԵՐՆ

ԼՈՒԽՈՎԵՔ , իցիւ մեօք փոխեսցին խնդի՛ ժպիտ :

ՑՈՒԼՒԱՆԵ

ԵՐՐ նբրբագոյն ամակք յերիկոյս
Ըզհորիզոն պարուրեն ,
Եւ յետին շողք ըզբարձունս
Լոիկ բըլլոյն գունաւորեն ,
Գիշերադէմ ուրուական
Գայ ծանրուքայլ եւ հանգչի
Անդ առ շիրմաւն , որ օժեւան
Գողարիկ իմոյս է ծնողի :

ՊԵՐՆ

ԱՅՆ , այն , տեսաք եւ մեք
Նշմարելով յայն ահարեկ :

ՑՈՒԼՒԱՆԵ

Յեռանդն ՚ի մուտս արեգական
Ի խոնաւ ծոց լճակին :

Հեղդ քան զսովորն յօթեւան
Գայի ՚ի ձերդ , անյուշ վայրին .

Անցեալ ընդ հուպ առ շիրմաւ
Կողկողագին ՚ի կերկեր
Յունկն իմ անուն մօրս հնչեցաւ
՚ի ՚ի դուճս անկայ յաղօթել :

ՊԱՅՆ

Այո , այո , զի երբ դարձար
Յաշս արտասուաց կաթիւ շողայր :

ՅՈՒԼԻԱՆԵ

Ուրուականին հնչեալ էր զձայնն

ՊԱՅՆ

Խուսափեցե՞ր առ ժամայն :

ՅՈՒԼԻԱՆԵ

Այո , այլ զյետ իմ գոչեր .

* Մի ծօնես զսիրտ քո սկերձութեան :
Ո՛քորք , չարիք անկասկած
Մընան աւուրցս տպագայ .

Բարբառեցաւ բաղդն ՚ի շիրմաց

Մնան դառնութիւնք Յուլեանեայ :

ՊԱՅՆ

Այո , այո ցընորք սկատիր

Ազգեալ ՚ի քեզ են արհաւիր :

Խնդա , աղջիկ , վանեա զմթին

Խորհուրդս ՚ի մտացըդ դառնագին ,

Յուշ զի ոչ ցանկ յուղէ յալիս

Հիւսիս հողմունս ըսպառնալիս ,

Ոչ միշտ ամսպրոսկք մըրըրկեն զեթերո .
Զիարդ մնայցեն յար ցաւք յերեսս :

(ՄԵՐԻՆԻՆ և Խ-ՐԱՎԱՆԻ ՀԱՅՐԱԿ ու Քարջէ աւ Ա-ՌԱՎԱԿ Ճ-ՊԱՎԱՆԻ Հ-ՊԱՆԻ ՚ի հ-ՊԱՆ)

ՏԵՍԱՐԱՆ Բ :

(Յուլիանէ տխրութեամբ նկատեալ զառուակն)

Երբու զյետին նըւագ զայս րիբքս արտատօք
՚ի ողջունատուր հըրածեշտի դառնութեամբ
Նկատեն զափունաղ — Է՞ր բարախիւնքս անձկատրոփ,
Է՞ր տիորանոց այդ մելամաղձ յուղէ զիս .
Ոտք իմ նահանջ գնան ՚ի ուեմոց հըղեկիս
Երբ եղելոց նախազդած
Հնձ վերահաս մերձակայ դառըն դիարաց :

(Ը-Ձ-Ի սս-Ն Բն-Ն, աղա նորեալ սս սէմալ)

ՄԵՂՈՒՆ ՈՍԿԵԹԵՐՁ

Ի ծագաց վարդից ,
Ի շող գեղալից
Ալանայ մերժ ընդ մերժ
Ծնդ օդս հոսանուա
Առեալ ժիր սլրտոյս ,
Տըզզայ եւ բզզայ ,
Առ վարդըն դառնայ ,
— Ասպէս իմ խորհուրդք
Կոհակ յորձանուա ,
Ի սիւդ հեղ բնութեան
Կորնչին ՚դ սահմանն .

Այլ հողմն հարաւոյ ,
Բուռն շունչ սիրոյ ,
Վերադարձ յափունս
Փշէ ՚ի մանունս :

(ՀՆԱԼԻՆ ՊՐԱԿՐԴ ԴԱՂՄ)

Գայ նա — ո՞չ բանք կորիննայ
Թերեւո տնհիմըն չէին ,
Եւ ոչ խակ կեղծ՝ ուրեմըն սէր վեհազնին . . . —
Փախեացց , թերեւո եւ ոչ խարկան զուժ շիրմին :

(ԴԻ ՀԱՍՏԱԵԼ ՊՐԱԿՐԴ ՎՐԱ
ՅՆԱԼԻՆ ԽՄԱՆ ՚Ի ՀԻՆՉՆ Է-Ը)

ՏԵՍԱՐԱՆ Գ .

ՊԱՐ որսորդաց , ապա ՍՎԵՆԹՈՍԼԱՎԻ և ԵՏԻՄՈՎ

ՊԱՐՆ

Օ՞ն յորս երէոց
Զհետ նապաստակին
Ընդ թուփս անտառին ,
Ընդ դէզ տերեւոց
Զոր սիւք աշնայնի
Սփոեաց ՚ի յերկրի .

Օ՞ն յորս երէոց
Զհետ նապաստակին
Ի բարձունս վիմին
Ընդ ծաղըս բլրոց ,
Ընդ ժայռս անմատոյց
Յարձաթ՝ ՚ի ոառոց .

Օ՞ն յորս երէոց
Զհետ նապաստակին

Դիմեմք խնդագին
 Ընդ մարդ . ծաղկանոց ,
 Ընդ սկարարտ այգի
 'ի ընդ խոռոչս երկրի :
Զի՞ յորս երէոց
 Զհետ նապաստակին
 Ժամբք քաղցրիկ սահին . . .
 Երբ արփին 'ի ծոց
 Դիմէ մըկանանց՝
 Մէք 'ի գիրկս աղջկանց :
'ի վէպս երէոց
 Աղջկանն որսորդին՝
 Այտքն այլադունին ,
 Այլ անդրէն 'ի բոց
 Համբոյր սիրելոյն
 Փայլեն վարդք փաղփռն :

ՍՎԵԾԹՈՍԼԱԽ

(Առ Եպիմակ Քնչ այլ սիրահն ընդ Դաշնա)

Ոչ եւս զօրեն անդամք իմ ,
 Եկ , հանդիցուք դալարի
 Ընդ հովանեօքս առ վայր մի : --
 Զրգիտեմ է՛ր ոչյաջողեաց ինձ բընաւ .
 Այսօր նետիցս առնել ճարակ աղուէս ինչ :
 Լքանի ոյժս , ոչ եւս մարթիմ զհետ պնդիլ ,
 Երիցս 'ի թուփրս թագուցեալ նետահար
 Երիցս անյայտ 'ի ծերպս երկրի խորափուտ
 Զերծաւ առոյզն 'ի մահարեր հարուածոյն :
 Զուր ընդ անտառն ընթացայ .
 Միտք ցընորեալ թըւին եւ սոք սնկիրթ յորս .

Խորհուրդ ինչ ծանր յար դեղերի ՚ի միտս իմ;
Եւ յայն ըզրաղ ՚ի նսլատակէն խոտորիմ:

ԵՏՄՈՆՏ

Եւ ո՞ր . . .

ՍՎԵՅԱԹՈՍԼՎԻ

Սիրեմ ես, Եսոմնատ.
Եւ օրիորդն այն նաղելի ցանկ աշացո
Երեւի — ո՞վ ծնունդ շնորհաց — ,
Բանք իւր քաղցրիկ հնչէին
Զերդ ձայն ներդաշնակ
Զուարթնոց պարուց ՚ի նղւագ,
Եւ ՚ի դէմս նորին
Զերջանկութիւն իմ տեսի ,
Եւ յաչսն ըզկէս զիմ հոգի :

ԵՏՄՈՆՏ

Ծանր է այս, Տէր, այդ խորհուրդ ընտրութեան
Զի անզրաւ երջանկութիւն
Եւ կամ աղէտս անզրաւ տածէ մի վայրկեան .
Զայնդ յԱզատացն իսկ ՚ի պարուն շըշընշէր .
Այլ զվեհ կուսին ոչ ոք դանուն յորջորջէր :

ՍՎԵՅԱԹՈՍԼՎԻ

Լրասցին այսօր կիրք յետախոյզ Ազատացս .
Առ հարսանիս դարձ արտացուք ՚ի դաշտացս :

ԵՏՄՈՆՏ

Եւ ո՞ զեռանդն ՚ի սիրտ քոյին արկ սիրոյ .

ՍՎԵՍԹՈՍԼԱՎԻ

Կրց գեղազարդ գեր քան ըզտես մահացուի :
 Զերբն իւր առոյգ ետ քեզ բնութիւն ,
 Եւ վարդենին զիւր կարմրութիւն .
 Զանմեղութիւնն իւր մանուշակ ,
 Եւ յասմիկն ետ զհոտն անուշակ--
 Ըզսոյն ես քեզ ետու զոիրտ իմ
 Հարեալ 'ի տես գեղոյ քոյին :
 Կամարես ըզհիւղն այն .

(ԱՅՆԱՐԴԵՄԱՆ ՎՇԻՆՉ ՅԱՆԼԻԱՆԵԱՅ)

ԵՏՄՈՒՏ

ԱՌԱԴ ֙ (ԽԱՆԱԳԻ)

ՍՎԵՍԹՈՍԼԱՎԻ

ԾԱՆԷՐԱՌ--

ԵՏՄՈՒՏ

—ԱՀ .

Արւոյ թէ որր կեայ հէքն ուրոյն . . .

ՍՎԵՍԹՈՍԼԱՎԻ

ԱՅԴ կրկին

Ծ ինձ խրախոյս . . .

ԵՏՄՈՒՏ

Անպատուհան արձակման ,
 Թէ տաղտկութիւն կամ սայրաստր երգիծանք
 Տանջեն ըզքեզ Ազատացդ . . .

ՍՎԵՅՑԹՈՍԼԱՒ

Ո՞ ժալրհեսցի :

Գեր քան զթագս արքունական

ինձ տարփալի է կոյսն այն .

Ո՞ քան զիս գրեսցի յերկրի երջանկաւէտ

թէ ՚նդ փափուկ կուսին զուղիմ 'ի զօդ յաւէտ

ԵՏՄՈՆՏ

(Ո՞ քան զիս գրեսցի յերկրի այր ցաւաղէտ

թէ ՚նդ փափուկ կուսին զուղիս 'ի զօդ յաւէտ :)

(ՍՀՀան . գնու առ Յուլ . յայսմ Հայրի օբիրուտ + 'ի հըանել քուշակ եւ նուսագարանաց եւսնէն 'ի պար , խառնեալ ընդ արանց) :

ՏԵՍԱՐԱՆ Պ.

ՊԱՐՔ աղջկանց , որսորդացն . ԵՏՄՈՆՏ մոտախոչ :

ԿՈՐԻՆՆԱ ապա ՍՎԵՅՑԹՈՍԼԱՒ և ՅՈՒԵՒԱՆԵ :

ՊԱՐՆ ՈՐՍՈՐԴԱՅ

Աղջկունք զուարթաղէմ

Ոլորեցէք պարս .

Վաղիւն եղեալ դէմ

Դառնամք 'ի մեր վայրս :

ՊԱՐՆ ԵՂՋԿԱՅԱՑ

Որսորդք զուարթաղէմ

Օ՞ն հիւսեսցոք պարս .

Զեր կուռ լանջաց դէմ

Անվրէսլ ունիմք լարս :

ԱՄԵՆԵՐԵԱՆ

Այլ ուր մատաղ կոյսն օրիորդ
Որ մեր սլարուցս էր ուահահորդ .
ՍՎԵԱԹՈՍԼԱՀԻ (Մաքաղեաւ ընդ Յաւեանեայ պահապահը)
Ահա չքնաղ կոյսն օրիորդ ,
Զոր մեր թաղիս կարգեմք հաղորդ .

ԿՈՐԻՆՆԱ

Հրճուխմք ընդ բաղդ քո , օրիորդ ,
Այլ իշեսցե՞ս զանձկոցդ հաղորդ .

ՑՈՒԼՅԱՆԵ

Ո Կորիննա , ո՛ օրիորդք .
Խընդի փառացս եկայք հաղորդք .

ԵՏՄՈՒՏ

Տիսուրդ անցեալ ինձ ուահահորդ
Լիցի՞ս 'ի վրէժ' թէ յարտօսր յորդ .

ՎԵՐՃ Ա. ԱՐԱՐՈՒԵԱՌՅԱ



Ա. ԲԱՐՈՒ Ա. Ե ԵԿԵՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Պալատն աբքունի — սրահ գեղեցիկ սիւնազարդ :

ՊԱՄՆ

Ա. Անդ ուր վըտակք բեղնարեր
Ծաւալանան բընութեան,
Մինչ դու դէտ ակըն կայիր
Զարդոցն ՚ի տես հրաշաղան,
Ընդ նրբափայլքո մարմին
Շող թափանցեաց ինչ նորին
Եւ ըզգեցար լոյս գեղոյ .
Եռանդն յաշկունոըդ խաղաց,
Զքեզ պատեցին պարք չնորհաց,
Եւ արքային պերճ որդւոյ
Հարան յայն նետք սիրակէզ,
Որ ՚ի վեհ տաճարն ըզքեզ .
Տանէր սիրոյ ողջակէզ :

Բ. Մինչ աստեղաց գունտ հրավառ
Թափէր ակունըս լուսոց,
Եւ խաղաղիկ վեհափառ
Ժալտէր լուսին ՚ի յամազոց .
Գուցէ ընդ դաշտըն լըռիկ
Թափառէիր միայնիկ ,

Եւ ընդ շրքեղ տեսարանն
Առ տարփալիդ խոկայիր .
Հուալ քեզ ունել ցանկայիր .
Քանիցս 'ի թեւս ապաստան ,
Դու այերին հոսանուտ
Յանձնեցեր զանձուկս ոգւոյդ
Յունկըն տանել սիրելոյդ :

Գ. Արակէս լուսին զերկնից մութ
Աէր վանեսցէ զմոայլս ոգւոյդ .
Ի հանգստեան կայարանն
Ուր հաճոյից բոյլք քեզ մնան ,
Մատիր քընքուշ օրիորդ .
Խոնարհեաւ զուլդ ընդ լըծով ,
Եւ ըղհամբոյլսն 'ի զորով
Ա՛ռ 'ի սիրոյ սրտէնյորդ :

ՏԵՍԱՐԱՆ Բ .

ՆՈՅՆՔ . ՅՈՒԼԻԱՆԻ . ՍՎԵՍԹՈՍԼԱՎ ԵՒ ԿՈՐԻՆԵԱ

ՍՎԵՍԹՈՍԼԱՎ

Իմ ես յառէտ (Քարի կը Յաւալ :)

ՅՈՒԼԻԱՆԻ

Խօսեաց ոչը .

ՍՎԵՍԹՈՍԼԱՎ

Մինչ կաս դու հուալ երջանկութեան գահոյից
Ուստի մարթիս խրոխս յապագայն բարերաստ ,

Հայիլ 'և աւուրս դիտելքարեաց վարդահիւս ,
Ընդէ՞ր տրոփիէ սիրտ քո , եւ ծոց ձիւնաթոյը
Թուի անձկանօք շնչելըզսիւք այերին :

ՅՈՒԼԻՑՆԵ

Մինչ զուրկ քաղցրիկ 'ի տեսոյդ
Հառաչէի 'ի դաշտին ,
'ի 'ի տերեւոց թանձր 'ի մութ
ինձ ձայն խօսէր սոխակին .
Անյոյս բնաւին վայելել
Ըզմիրդ սիրոյ փափկասուն
Զուգեալ հանգոյց քեւ յանեղ ,
Անձուկք եղեն ինձ բնութիւն :
Զերդ վարուժնեակ թափառիկ
Յօդս 'ի զուգոյն մեկուսի ,
Թէ ժամն հասցէ երջանիկ
Յոր տարփածւոյն դիալեսցի ,
Ընդ պերճն իւր բաղդ անվստահ
Շըփայ հիքին սիրտ խռովեալ ,
Մի վերըստին կըրէ ահ ,
Բարձցի յանձնէ սիրեցեալն :
Ո՞հ , սիրեսցէն զիս դու յաւէտ :

ՍՎԵՆԹՈՍԼԱՎ

Յուլիանէ . .

Թէ սիրեցից :

ՅՈՒԼԻՑՆԵ

Գահ արքունին եւ պատիւ
Ոչ խէթս 'ի սիրտ յարուսցեն քո հպատակաց :

ՍՎԵՆԹՈՍԼԱՒ

ԵՐՊՆՈՒՄ 'Ի ԱԷՐՈ :

ՅԱԽԻՒԱՆԵ

Քաջ իսկ զիտես թէ իմ չիք
Ոչ ողատուանուն, ոչ բարձք տւագ 'ի հօրէ . . .
Դաշտք ինձ եղեն բնակարան
Եւ անդ կայ մօրն իմ դամբան :

Ո՛չ թէ երբէք գեղ վեհագոյն փառաղարդ
Ի սրտիդ քում յարոց յուզմունս սիրական,
Թէ կշտամբանս համարիցիս 'սէրն իմ արդ.
Օ՞ն մօռացիր ըզտըխուր գեղ Յուլեանեայն.
Ինքնին աղէ 'ի կասկանացդ արձակեմ,
Գնամ 'ի դաշտեր ողբալ վարել կեանս դժիկմ:

ՍՎԵՆԹՈՍԼԱՒ

Լըուեա, անգութ, մի տրխուր բանս յաւելուս,
Այդչափ իցէ սիրո իմ 'ի յաչսդ արհամարհ. լ
Թողից ըզքեղ կենաց իմ լոկ անեղ լոյս,
Թողից ըզքեզ . . . ոչ հարցէ զիս Դետն տրդար :
Ո՛չ ոչ գահոցք եւ ոչ Ռուսաց իսկ զայրոյթ
Զիս մեկնեցեն բնաւ 'ի սիրոյ փարելոյդ :

ԵՐԿՈՔԻՆ ԵՒ ՊԵՐՆ

Ի զօդ երջանիկ

Սիրոք ձեր }
Սիրոք մեր } միացին,

Ի զիրկս հուճոյից

Ի հսմբոյր սիրոյ .

Եւ վառք գտնոյից ,
Եւ կոյտ դէղ ոսկւոյ
Անկցին 'ի մոռաց .
Զի 'ի դրունա կենաց
Թողցեն խարուսիկ ,
Այլ ոէր երջանիկ
Յարատեւ կացցէ .
Գտն իւր յերկինս է :

ՍՎԵՆԹՈՍԼԱՎ

Վըստահ 'ի սէրս իմ օն հանդիր , Յուլիանէ ,
Յասլարանիցս է ճահ ինձ գնալ մեկուսի ,
Ի սուղ եւ եթ պահս ըզսիրոյ բացառեալ
Յօժար խորհուրդս՝ 'ի ոլետութեանս զրադիլ կարս :

ՅՈՒԼԻԱՆԷ

Հազիւ 'ի զիրկս իմ վերադարձ , դու անդրէն ,
Մեկնիցիս—ո՛հ —

ՍՎԵՆԹՈՍԼԱՎ

Միթէ զյուշ քո ո՞չ բառնամ
Ամենուրէք ինձ ուահակից 'ի սրտիս :

ՅՈՒԼԻԱՆԷ

Ամենուրէք քեզ ուահակից իդք սրտիս .
Այլ երր մենիկ յասլարանս
Մընամ քոյոյ գալստեանդ , ո՛հ , արհաւիրք
Ահեղ կասկածք անդուլ զողիս սկաշարեն .
Հազար հազար ըզգլիսովդ

Շողան վըտանդք , եւ նըկարին ցնորատանչ
Մըտացս հանդէս մահու արկածք . . . :

ՍՎԵԸԹՈՍԼԱԽ

Փարելիդ :

Յ . } Երթ դու ողջամբ
Երթունք . } կաց դու ողջամբ — եւ շառախղյորդ սիրոյս
Յոլացի յար
Զքեւթեւապար ,
Տաճելըզքեղ յերջանկութիւն եւ 'ի յոյս :

(Մէնի Սվետանուշտ շնորհանուն :)

ՏԵՍԱՐԱՆ Պ.

ՑՈՒԼԿԱՆԵ և ԿՈՐԻՆՆ

ՑՈՒԼԿԱՆԵ

Կորիննա՛ , աղէ 'ի բաց ա՛ռ ըզթաղդ ,
Ծանր է քան զիսիղճ մեղաւորի դատապարտ .
Ի բաց կացցեն զարդք յինէն
Զի փուշք ըզսիրտ իմ պատեն .
Ո՛հ սլատիր ցնորք , դու երջանիկ յուսացի ,
Այլ այն չէ ձօն տրւեալ երբէք մահացուի :

(Տայ բանաւ պատառականն , և նշանին 'ի հետապն գեղնոի
Դաշտ Բլբաղբրդ :)

Թոնլ , զի հեղիկ հողմն ընթասցի ընդ սըրահս
Եւ սրբեացէ զօդ մահաշունչ արքունեաց ,
Ո՛ հեղաշունչ սիւդ զովագին ,
Գուցէ ընդ դաշտըս մարդածին

Թափառուեցար, ուր Յուլեանեայ
Երջանկութեան յոյս թաղեալ կայ:
Եւ զուցէ վարդըն նազելի
Որ շիրմի մօրս էր հովանի,
Տերեւաթափ թառամեալ կայ . . . —
Ի զարդուցս ես խել պրկեցայ : —

(Լուկ, առաջին Առաքելութեամբ)

Կորիննա՛ —

ԿՈՐԻՆՆԱ

Ընդէ՞ր կասկածք տանջեն զքեզ :

ՅՈՒԼԻԱՆԵ

Անարդ եմ յաչո արքայորդւոյն :

ԿՈՐԻՆՆԱ

Եւ զիազրդ,
Ո յարքունիս զեղեցկազոյն քան ըզքեզ :

ՅՈՒԼԻԱՆԵ

Երբէք քան զիս ո՞ անքստգիւտ ծածկէր խանդ .
Ոչ եւըս ոէր խազոյ յաչկունս խր 'ւ եռանդն . . .
Այլ ի՞ւ յանցեայ . . .

ԿՈՐԻՆՆԱ

Մի յուսահատ արտասուես :

ՑԱՏԼԵԱՆԵ

Հրեշտակ սփոփիչ . . . եկ փարեցայց ըզքեւ եռ . . .
Դու ըզյուսոյ բառբառին .
Քաղցր է ինձ ձայն քո առ իս ,
Թէպէտ եւ բան զհակառակն
ինձ տայ կարծել հաւաստի .

ԵՐԿՈԲԵԱՆ

Դարձիր , դարձիր , անուշակ ,
Թէպէտ խոցեալ ցուագար ,
Առ քեզ սլանայ { Ամրա իմ յար
Ամրան իւր յար .
Դարձիր , դարձիր եւ անդրէն
Խռավք { ի սրտէս փախիցեն :
ի սրտէն փախիցեն

ՏԵՍԱՐԱՆ Պ.

ՆԱՅՆՔ և ՍՊԱՅ ՈՄՆ

ՍՊԱՅՆ

Յանկայ Ետմոնտ ընդ դշխոյիդ բարբառիլ :

ՑԱՏԼԵԱՆԵ

ԱՂԵ Լուիցուք :

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՑԱՏԼԵԱՆԵ ԵՒ ԿՈՐԻՆԵԸ

ՑԱՏԼԵԱՆԵ

Նա լոկ շրջի յարքունիս
Յանկ տիսրասկատ , խորհուրդք ըզմիտս իւր թրւին

Դասութիւն խորհուրդք յար պաշարեալ , եւ տըխուր
Եւ գըթալից նայեցիւք զաշա յառէ յիս :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԵՏՄՈՒՏ

ԵՏՄՈՒՏ

Ինձ չնորհեցի՞ առանձինն
Ընդ դժմոյիդ բարրառիլ :

ՅՈՒԼԻԱՆԵ

ԵՌԺ . Կորիննա ,
Հըսկել ընդ դարձ ամուսնոյս : (Մէինի Կորիննա :)

ԵՏՄՈՒՏ

Թէ դարձցի՞ նու :

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԵՏՄՈՒՏ ԵՒ ՅՈՒԼԻԱՆԵ

ՅՈՒԼԻԱՆԵ

Եւ ո՞ր առիթ մըդէ ըզքեզ դալ այսրէն ,
Եւ անվըկոյ ինձ բարրառիլ ,

ԵՏՄՈՒՏ

Կարեւոր : —

ՅՈՒԼԻԱՆԵ

Խօսեաց , Ետմոնտ :

ԵՏՄՈՆՏ

ԱՄԵԼՈՒԹԻՒՆ ՈԽ Եւ ԱՀՐ —

(ՄԵՐՅԵՇԵՎԱՆ ՅԱԼԻԱՆԵ ՀԱՅԻ ԱՆ ԿՐԱՆԿԱՋԻ , ԵՎ
ԽԱԼԱՎԱՆ ԿՅԵՎԱՆԵ ՆԵՐԱ ՄԻՐԱՀ :)

Ո՛հ , լաւագոյն , կոյս թշուառ ,
Անգէտ սիրոյ գոլ բնաւին ,
Քան ՚ի բաժակս հաճոյից
Մեղմ ըմպել մահ դառնազին ,
Ընդէ՞ր զալիս Գներերեայ ,
Է՞ր ըզծաղկանց դաշտօրէս ,
Է՞ր զանմեղուկ թողեր կեանս
Եւ ընդ թազին զուզեալ ես :

ՅՈՒԼԻԱՆԵ (ԽԱՆԱՀԱՆ :)

Իբրու գիտակ դու չարեաց
Եւ բանքով հնչեն աղէխոց .
Ո՛հ յաւելու ըզկառկածս
Յըզեցին զքեզ հիւրք դժոխոց :

ԵՏՄՈՆՏ

Իցէ՞ս զըւարթ , Յուլիանէ , յարքունիս :

ՅՈՒԼԻԱՆԵ

Զըւարթ . զի՞ տարօրինակ հնչեն հարցուածքդ ,
Ո՛հ ընդ դաղտնիս թափանձեցե՞ր դու արդեօք
Տառապազին իմ սրտիս : (ՎԱՐԱՆՆԱՑԱՋԻ)

Ոչ զիս հրապոյր գեղազարդ զահոյից ,
Եւ կամ գոռող տէնջ գոլոյ վեհազաս

Զիս ըղղեցին յարքունի ՚ի վառս այս :
Այլ սէր անեղ, բռնաւոր ցանկ սրտից :
Յորչափ Դիք այս ինձ յօժար թըւէին,
Երջանկութիւն, խինդ վառաց կից էին :
Յորչափ նայեացք սիրահար տարփածւոյս
Դիպեալք յիմումս ցայտէին շող կենաց,
Գոհ թըւէի եւ գոսող ընդ գահոյս,
Համայն այժմիկ մեկուսի յինէն զնաց.
Փուշ է պսակս՝ ոսկեծեփ հանդերձանքդ
Սոսկումն են ինձ, և արքունիք Ռուսաց բանդ :

TSURTS

Յո՞ղ զարքունիս , եւ բնութեան ձիրք անդրէն .
Զոր արհամարհ լոքեր քեզ ժայռիցեն :

(3-1-2. լուս, ապա յուղահանդիպ գիշեր)

801-1000

**Երդուաւ սէր — (ինդուէայ) գալութիւն անդրէն սէր
առ իս ,**

Եւ զրկախառն :

bSUTTS

ԱՇ. մի յուսարք, կոյս թշուառ .

Զեւ տակաւին գիտակ համայն աղիտիցդ ,
Աղբ , դարձիր 'ի դաշտս , ընկերս մանկութեանդ .
Քաղցրիկ հիւսել զաւուրս քո հօրդ :

ՑՈՒԼՄԱՆԻ

Հօրն իմում

Դանին յուշ . . . Հայր իմ . . . Հայր իմ

ԵՏՄՈՒՏ

Կեայ նա :

ՑՈՒԼՄԱՆԻ

Ուր իցէ :

Է՞ր յարքունիս Սվեաթոսլաւաց ոչ դիմէ ,
Ուր իցէ նա

ԵՏՄՈՒՏ

Ի գիրկըս քո :

ՑՈՒԼՄԱՆԻ

Հայր

ԵՏՄՈՒՏ

Դուստր իմ

ԵՐԿԻՆՔ ՊՐԺՎԱԾ ԱՐՏԱՍՈՎԱԿԱ
 ՀԵՂԵԱԼ ԸՆԴ ՃԻՊ ԱՄԱԳ ՀԱՐՍ ,
 ՀԱՏՈՎԵՐ ՊՊՈՎՍՏՐ ԻՄ | ՔԱՂՋՐԻԿ .
 ԻՆԾ ՀԱՏՈՎԵՐ ՊՀԱՅՐՍ }
 ՈՎ որ ըզվայրս ՀՆՈՐՀԵԳԵՐ ,
 ՏՈՒՐ ԻՆԾ Եւ սիրտ բաւական
 Այդշափ տանել ԽԱՆԴՈՒԹԵԱՆ :

ՑՈՒԼՄԱՆԻ

Այլ գու , Հայրիկ , ընդ ԽԱՆԴՈՒԹԵԱՆ ոչ խնդոս .

ի ծոցդ անշուշտ ասալընջական են գաղտնիք :
ի դստերէդ էր ծածկեռ ,
Եւ էր կեղծեալ կրես անուն .
ինձ դու Հարովդ , մինչ կոչեն զքերզ այլք Ետմննու :

ԵՏՄՈՒՏ

Յանցուած անուն իմ դատապարտ է եւ մահ :

ՅՈՒՆԻՑՆԵ

Եւ սակայն քաղցր էր համօրէն աշխարհիս :

ԵՏՄՈՒՏ

Քանզի քաջի —

ՅՈՒՆԻՑՆԵ

Թերեւս նախա՞նձն Ազատաց :

ԵՏՄՈՒՏ

Ազատոթեան ոէր եւ եռանդն իմ յանցուած : —

Յարդ անօրէն հրամանք Ըուսաց իշխանին
ի ձիւնապատ Ալբերիոյ 'ի սահման
ի խիստ շղթայս զիս կաշկանդեալ ունէին
Ըսպաս գանձուցն իւրոց տանիլ յարդարման .
Ըզ շողեալատ մինչ պէղէի սիրտ զերկրի
Յուշ քո եւ եթ մեղմէր զցաւոց դառնութիւն . . .
Փախստական ծպտեալ անուամբ զարքունի
Գահ գլորեալ ցարդ պակեայթափել զվրէժս համրուն,
Մի սուր որ զկեանս բարձցէ զմուսացն արքայի
ի քեզ զհատոր տեսեալ նորուն յագեսցի :

ՑՈՒԼՏԱՆԵ

Հայր . . . Ավետիքոսլու :

ԵՏՄԱՆՏ

Յո՞ր յաղիտից անկար վիճ .

Դո՞ւ ամուսին Ավետիքոսլուայ թշնամեռյս , —
Եւ ես հայր քո ցայս վայր անվրէժ ժուժայցեմ . —
Ո՞հ , յուսայի . . . խրատուցս 'ի սաստ ամոքել
Եւ 'ի չարեաց վըհէն զնա նահանջել .
Արդար ուշիմ տալ աշխարհիս դիտապետ . —
Այլ բարութեան ոգին ահա դիկնադարձ
Յաւէտ հրաժեշտ տայ նըմին ,
Եւ ոչ համեստ քո բարք սանձեն զքայլս նորին :

ՑՈՒԼՏԱՆԵ

Է՛ր սիրեցի զնա եւ սիրեմ . . .

ԵՏՄԱՆՏ

Ո՞հ , սիրես —

Մինչ նա 'ի գիրգ եւ կաշառեալ սէր ըզբաղ
Լըքեալ զհրեշտակդ՝ անարդանացն ըզբաժակ
ի պարզունակ հեղու վերայ ճակատուդ .
Ո՞վ Տէր , աղէտք անձինա չէին բաւական ,
Ոզբալընդ դուստր իմ եւ կենաց 'ի վրտանդ
Զիւրն լուծանել եւ զիմ իսկ վրէժ է ինձ անկ :

ՑՈՒԼՏԱՆԵ

Հայր . . . Ավետիքոսլու . . .

ԵՏՄՈՒՏ

Դու տակաւին զանօրէնն
Կրես 'ի սրտիդ , եւ շառագնիս ոչ ընդ սէր
Զոր դատապարտ գրեն եւ յամօթ հայրդ 'ւ եթերք :

ՅՈՒԼԻՇՆԵ

Խմ ամուսին

ԵՏՄՈՒՏ

ՄԵԼԻՆԵՍԵՆ զզոյդն հայրդ 'ւ եթերք — ,
Առւերաւս

ՅՈՒԼԻՇՆԵ

Ո՛չ ներեա նըմին եւ զիս հար :

(Ի ԳԱՎԱՆ ԱՆԻՇԱՆ)

ԵՏՄՈՒՏ

Պաղատիս դու գըթած հիքին գոլ կենաց ,
Մինչ նա ըզգեղ սլատիւ քոյին արհամարհ
Ի գիրկո այլում խնդրէ պարասր հեշտութեանց :
Զիմ վրէժ լուծից եւ զքոյդ

ՅՈՒԼԻՇՆԵ

Ի փողս շեշտեա զսուր ,
Քան զվատշըւէր անսրդանաց խմ տալ լուր :

ԵՏՄՈՒՏ

Նա մերձակայ 'ի պալատան Ազատացն
Հրձուի . . . անյուշ անմեղութեանդ եւ սիրոյդ :

ՅՈՒԼԻՇՆԵ

Ո՛չ անդանօր տար զիս փոյթ :

ԵՏՄՈՒՏ

Եկ փարելիդ զնասցուք 'ի լէհս ,
Մեղ անդ սլաշտապան լիցին օրէնք :
Եկ բարելիդ , եւ 'ի յերկիրէս
Զքոյդ անարգանս եւ զիմս յաւէտ բարձցեն զէնք :

ՑՈՒԼԱՆԿ

Այս , այս վրէժ ոխերիմ
Լուծից սիրոյս անարգանաց ,
Ահա ձայնի քո հետեւիմ . . .

Բարձցի աղէ ապիրատին շունչ կենաց :

(ՄԻՆ ԵՎՀԱՆՔ ԲԱՐՅԵՄԱԼ ՇՅԵՆԱՆԷ ԴԱՎԵՐՆ ԽԱՐԴ ՀԱՐԵԼՑՆ ՚Ի ԲԱՇ ,
ԴԺԻՄԱՅԻՆԱԼ ՌԱԴԵՆ ՅԱՆԼԻԱՆԵԱՅ ՀԻՆԿԱԼ ՊԵՐՆ)

ԵՏՄՈՒՏ

Եկ ըզ հետ իմ — (ԶԱՅՐԱԳԻՆ :)

ՑՈՒԼԱՆԿ

Ո՞չ , Սլեաթովաւ :

ԵՏՄՈՒՏ (ԸՆԴ ԳԱՐՆ ՌՃԵՄԱ ՎԱ :)

Տակաւին :

ՑՈՒԼԱՆԿ

Սիրտ իմ , աւանդ , թէ ապերախտ սիրէ զնա ,
Թողուլ ըզնա չէ ինձ ձահ :

ԵՏՄՈՒՏ

(Թօնաժինալ կբազուին Յառէանեայ , սպառնալից :)

Ապա գայցես զարդար դիտել նորին մահ :

ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՍՐԴԻ

ՄԱՍՆ Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Արահ գեղազարդ , աթոռք , սեղանք և բաժակք :)

ՊԱՐ' Ե ՆԵՐՔՈՒԹ

ՈՇ զի՞ քաղցրիկ
Աւուրք սահին ,
Թէ սէր 'ւ Աստղիկ
Ընդ մեզ բնակին :

ՊԱՐ արանց և կանանց որ ծագուել հասանեն

Այլք 'ի խնդիր չնշին գանձոց
Զըրավաստակ ժամս ծախեսցեն ,
Եւ ապաստան զանձինս ծովոց
Զհաճոյս եւ զյոյս յալիս հաստեն :
Այն ընդ անխօս թերթ գալարուն
Վարէ քնաթափ ըզկեանս ողջոյն ,
Եւ զի՞նչ յաճախիցէ արիտուր
Այդշափ ճըգանց աարեալ 'ի զուր .
Աւուրք մըթին թաղծանաց ,
Աքառոր եւ բանտ , մահուն ահ ,
Գլորեալ 'ի վիհս անձկութեանց
Սովալըլուկք սովամահ :

Մեք 'ի զինոյն կարմրորակ
Զանմահոթեան առցուք շուք ,
Տիալ դից՝ յաղջկանց 'ի դիմակ
Զապազայէն ճառեսցուք :

ՊԱՐ'Ն ողջոյն (ԴԻՆԵՐՆ)

Ո՛հ , զի՞ քաղցրիկ
Աւորք սահին ,
Թէ սէր 'ւ Աստղիկ
Ընդ մեզ բնակին :

ՏԵՍԱՐԱՆՆ Բ .

ՅՈՒԼՏԱՆԵ ԵՒ ԿՈՐԻՆՆ

(Երիսխն իսի 'ի սէսա հանդերձո , 'ի մէնիւ պարսան մէրիանան պահան :)

ՅՈՒԼՏԱՆԵ

(Ցուցեաւ պերդին որո՞ն)

Անդ ձայնք խնդի — (Կծեաւ անդուն)
Եւ աստ գեհեն հրատոշոր :

ԶԵՅՆՔ 'ի ներքուստ

ԿԵՐԳԵՇ , ԿԵՐԳԵՇ Ավեաթոսլաւ :

ՅՈՒԼՏԱՆԵ

Ո՛հ , Ավեաթոսլաւ . . . անուն երբեմն ինձ քաղցրիկ
Զոր սուրբ խանդիւ եւ պակուցմանը հնչէի .
Անուն՝ որ զամէն

Արթի էր մեղմել ըղդառնութիւնս իմ սրտիս . . . :
Զքեզ մահաշունչ անսուրբ լեզու պղծութեան
Ողէ շրթամբք անհամբոյր .
Ըզքեզ զոր դետք սկահապանք
Կարգեալ աւուրց մահացուի]
Ի ջերմեռանդն եւ սիրակէզ իմ աղօթս
Բազմիցս աւազ, վերամբարձին յանդիման
Սուրբ աթոռոյն Աստուածեան . . . :
Միրտ իմ . . . (Եստ :)

ԿՈՐԻՆՆԱ

Վայր մի սփոփեա զանձուկոդ, ո՛ դըշխոյ :

ՅՈՒԼԻԱՆԵ

Դշխոյ . . . դշխոյ . . . անարգեցայ ես, աւազ,
Հանգոյն ծաղկան թառամելց շնորհազուրկ
Զոր թերթ առ թերթ փետեալ սփուեն ընդ հողմունս
Ո՛հ, դու լաս — լաս — այո՛, չէր ինձ անկ այդպէս
Ըզքոյդ յուղել սիրտ աղիտիցս իմ 'ի տես :
Ո՞ մըղէ զքեզ 'ի դեռաբոյս հասակիդ
Թողեալ զհաճոյս արշալուսիդ յուսալիս ,
Ո՞ մըղէ զքեզ կարշապարացս իմ դալ զհետ ,
Եւ գոլ կըցորդ չարեացս : Աղէ . երթ, դարձիր . . . :

ԿՈՐԻՆՆԱ

Ես առանց քո . . . քան ըզսահմանըս մահուն
Անդր իսկ ընդ քեզ եկից ես :

ՅՈՒԼԻԱՆԵ

Դու լոկ ուրեմն 'ի յերկարի

կացցես հիքիս մըխիթար . . .
 Սակայն սիրտս այս տրոփիէր երբեմն առ խնդի .
 Երջանկութեան ցնորք ձայնէին ինձ յայնժամ,
 Ո՛հ միւսանգամ, միւսանգամ եւլս տեսից
 Տեսից որ զիմ զընթաց կենաց սլզառէր .

ԵՐԿՈՒՔԵԱՆ

Տես *լից* **ըղնա**, եւ ընդ քեզ
 Հրաժեշտ տուեալ աշխարհի,
 ի մենարան ամայի
 Արտասուք՝ հող մած յերես
 Յողրս 'ի հառաջ դառնազին
 Կենացս օրեր սահեսցին .

ՏԵՍԱՐԱՆ Փ.

ՍՎԵՍԹՈՍԼԱԽ, ՊԱՐՆ և ՆՈՅՆՔ (ԾԱԺԻԵՆ ԿԴԵՒ)

ՅՈՒԼԻԱՆԵ

Ո՛հ . . .

ԿՈՐԻՆՆԱ

Արութիւն . . .

ՅՈՒԼԻԱՆԵ

Ասլիրատն . . .

ՊԱՐՆ

Յանդամս սողոսկեա
 Ողի խնդութեան .

Եւ 'ի բաց վանեա
Ըզքող տրտմութեան
ի սրտից .
Զի յաւէտ
Բերկրաւէտ
Սահի գետ
Կենաց մեր :

ՍՎԵՆԹՈՍՏԱՆԻ

(ԴԻԳԵՆԻ ԿՅԱՆ. ԷՆ ՉԱՐԺԻՆ .)

Եւ ո՞ պատեալքս 'ի սեաւ հանդերձ ոըդական :
(ԱՐՅԻ ԱՌ ՆԱԽԱ)
Աղէ, ուրախ լերուք ընդ մեզ, խնդասցուք :
(ՄԱԳԻՆԵՆ. ԿԲԱԺՄԻՆ ԳԻՆԱՅԻՆ)

ՊԱՅԻՆ

Յանդամս սոլոսկեա
Ոգի խնդութեան ,
Եւ 'ի բաց վանեա
Ըզ քող տրտմութեան
ի սրտից .
Էլսարկան
Ասլադայն ,
Եւ միայն
Կեցցէ սէր :

ՅՈՒԼԵՎԱՆԻ

(ԱՆԵՆ. ԿԲԱԺՄԻՆ, ՀԱՅԻ 'Ի ԽԵՐԲԱՆԱ)

ԿՈՐԻՆՆԱ

Ո՛ ՀԵՐՎՈՐԴ —

ՊԱՄՆ

ՀԵՐՎՈՐԴ , ՀԵՐՎՈՐԴ : —

ՍՎԵԸԹՈՍԼԱՎ

ԴՊՂԴՈՂՈՅ

Այն ինչ զօրեն ձեռքն ըզբաժակըն ունել :

ՍՎԵԸԹ . ԵՒ ՊՈՅՆ

Թէ ոչ առնական
Ծածկէր զնա հանդերձ ,
Զերկիւղն իւր զաղջկան
Ասէի 'ւ ըզձեռս .

Ոտքն իւր դսղդողուն
Ընդհարկանին , ելիք ըզնէ զօրութիւն :

ՑՈՒԼՒԱՆԵ

(Սարսուռ որալիսի
Յանդամա իմ խաղայ .
Ոչ խայթ խակ խղճի
Խոռովէ զդէմս նորա .
Ոտք իմ դողդողուն
Ընդհարկանին , ելիք զիս բնաւ զօրութիւն :)

ԿՈՐԻՆՆԱ

(Ո՛հ , քաջալերեաց ,
Մի դաս յերեւան ,
Ի վայրէս 'ի բաց

Գնացուք առ ժամայն .
Ոտք քո դողդոջուն
Ընդ հարկանին , ելիք ըզքեզ զօրութիւն .)

ՊԱՅԻՆ

Յանդամա սողոսկեա
Ոզի խնդութեան ,
Եւ 'ի բաց վանեա
Ըզքող արտմութեան
Ի սրտից :

ՏԵՍՄԱՐԱՆ Դ

ԵՏՄԱՆՏ ծակտեալ և նոյնք

ԵՏՄՈՆՏ (առ ԱՀԵԿԱՆԱՀԱ)

Կազմ լեռ 'ի զէնս

ՊԱՅԻՆ

Ո՞ իցէ :

ԱՎԵՍԹՈՍԼԱՒ

Ո՞ իցես դու :

ԵՏՄՈՆՏ

Արդարութիւն Աստմայ .
Երկիր երկիր ասլիրատ ,
Լըցաւ կըշիռ եղերանցդ :

ՅՈՒՆԻԱՆԵ (Առ Կոբին .)

Ո՞հ , նոյնն որ մերձ մօլա չիրամին ինձ երեւէր .

Ո՞հ , արհամարհ ըղքոյդ զրեցի ես պատռւէր ,
Ըզ պատռհասն ահա տռժեմ զարժանին :

ԿՈՐԻԿՆԵԱ

Յնորիս դու , Երբ շիրիմք զաւարս մերժեցին :

ՍՎԵՍԹՈՍԼԱԿԻ

Ծանեար զիս , ո՞ անծանօթդ —

ԵՏՄՈՒՏ

Ա՞ստ մեծոթիւն .

Եթէ ոչ ցարդ նղկատեցեր զվատոթիւնն
Յոր շաղախեալ կասդ , օ՞ն , գամ մի շուրջ ըղքեւ
Ած (թէ ներէ մըսայլ զինւոյն) ըզրիր քո :

ՊԱՐԿ

Արհամարհես եւ զմեզ —

ԵՏՄՈՒՏ

Զձեզ , զախտ մեծատանց
Դատեն երկինք ,

ՍՎԵՍԹՈՍԼԱԿԻ

Կարկեաց , սիրոյ՝ բաժակի
Նուիրեալ են պահքու , այլ զարութիւն բնիկ առհմիս
Մերկացայ ոչ — զիտես ընդ ում մաքառիս ,
Կարկեաց :

ԵՏՄՈՒՏ

Սաստես — ան ըզսուրդ :

ՍՊԵՍԹՈՍԼՈՒ

Կազմ եմ — (Մէնայալուին) :

ԱՄԵՆԵՐԵՎԵՆ

ՈՎ ՏԵՐ :

ՅՈՒԼԻԱՆԻ (ՄԻՀԱՅԻՆ ԴԱՆՅԱՆ)

Ըղկոյ առէք :

ՍՊԵՍԹՈՍԼՈՒ (ԱՀՐՈՒՐԵԼ ՇԵԽՄԱՆՈՎ :)

Անկար դու :

Աղէ ասա , եւ դինչ պատճառ քո ոխոյդ :

ԵՏՄԱՆ

Վրէժ անձնական եւ վրէժ պատւյա : —

Դու անօրէն զիս 'ի յաքսոր

Ընդ ամս հոլովոս վարեցեր ,

Եւ 'ի տեսոյ ոմուսնոյա

Եւ յորդեկէս զրկեցեր .

Վրէժ ոխերիմ ահաւոր

Երդուայ , հուպ քեզ էի յար —

Դու խըրատուցս հեստ դըտար :

Յարտօսր 'ի վիշտ դատապարտ

Մատնեցեր զկոյս գեղազարդ .

Ծանիր յիս արդ զազէկանն հայր : (ՄԵՐԱԿԱՐ ԱՐԵՎՈ)

ՍՊԵՍԹՈՍԼՈՒ

Եսմո՞նտ :

ՅՈՒԼԻԱՆԻ (ՄԵՐԱԿԵԼ ԱՐԵՎՈ :)

Ո՞վ հայր , ես քո իենացըդ եւ եթ

իցեմ ոսոխ դաւաճան .
Մեռանիս դու . . .

ԵՏՄՈՆՏ (Փարէ Վահան)

Եւ դու աստ .

Քաղցրիկ պարզեւ է Անմահին
Զի՞ գիրկըս քո մեռանիմ ես .
Յուլիանէ , ներեցի քեզ .
Երդուիր մի եւս զուգիս նըմին .

ՅՈՒԼԻԱՆԻ

Անգութ , հար զիս , եւ անօրէն
Զեռք քո զիարդ հանդուրժիցեն .
Հօրն առ ոտիւք ըզէք աղջկանն
Սրփուեա զդիակին իսկ անկենդան ,
Ո ժողովուրդդ ահա դահիմն Հարօլդայ . —

ՊԱՐԵ

Հարօլդ — սլաշտպանն աղատութեան աշխարհիս .

ԵՏՄՈՆՏ

Զի՞նչ փառք — ցընորք անհստական — արդ շրդթայն
Որ զիս ընդ դարչ ածէր յերկրիս փշրեալ կայ —
Եկ դուստր . . . յետին այս համբոյր — ո՛հ —

ՊԱՐԵ

ԵՂԿԵԼԻՔ .

ՍՎԵԸԹՈՍԼԵՒ

Ներեա , Հարօլդ . եւ դու ներեա
Երրեմն ընկեր իմ սիրելի .

Հրեշտակդ Երկնից հիւր 'ի յերկրի ,
Զշարեաց իմ վիճ արդ իսկ ծանեայ :

Ո՛հ , ո՞ վոխան քո մահուդ
ինձ բիւր մահունըս չնորհէր ,
Ո՛հ , ո՞ վոխան ուղխերոյդ
Խոցիւք դիմ սիրտ կեղեքէր :

ՅՈՒԼԻԱՆԻ

Միրէի գքեզ գողոր 'ի սէր ,
Զընջել պարտիմ ըզսէրն այն .
Զի նդ իս 'ւ ընդ քեզ ցայտ արեան ,
Կանդնէ պարիսալ անվեհեր :

ԿՈՐԻՆՆԱ ԵՒ ՊԱՐՆ

Միրէր ըզքեզ գողոր 'ի սէր ,
Զընջել պարտի ըզսէրն այն ,
Զի նդ նէ 'ւ ընդ քեզ ցայտ արեան
Կանդնէ պարիսալ անվեհեր :

ՍՎԵՆԹՈՍԼԱՎ ԵՒ ՅՈՒԼԻԱՆԻ

(Օնուադիր առ Եռման)

Կերեան : —

ԵՏՄԱՆՏ

Կերեամ — ցածեաւ զայրոյթ , տենջ վրիժուց .
Զի զարհամարհ սրտիւս արեամբ իմ զնեցի .
Ծանրաթախիծ ծածկէ զաշոյքող ըզլոյս ,
Կեանք 'ի վիրացս հոսին . . . (Մեռանէ :)

ՍՎԵՆԹՈՍԼԱՎ , ՅՈՒԼԻԱՆԻ ԵՒ ԵՅՑԼԻ

Ո՛հ , սուզ դա նալի .

ՄԱՍՆ Բ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Վանք կուսանաց — սենեակ մթին լուսաւորեալ տղատնը շոյլիւք կանթեզին , որ առ սախւք խաչին կախելոյ զորմամբ — Յուլիանէ ՚ի մահճի և Կորիննաս մերձներա :)

ՅՈՒՆԱՆԿ ԵՒ ԿԱՐԲՆԱԸ . ՊԵՄ կուսանաց :

ՊԵՄ (Տ ԱՇԽԱՏԱԳ)

Ո՞՚ի կենաց յուսայր Հաճոյս խարուսիկ
Եւ ոչ պղտոր գնային աւորց իւր ալիք .
Սառնամանեաց Հանգոյն Հալին կեանք սպառին ,
Եւ ընդ երկիր բարձունք Համայն կործանին .
Շիջանին փառք իրրու արեգն ՚ի ձմերան ,
՚ի անհետանաց Համբաւ Հանգէտ փայլական ,
Եւ ընդ անցեալն եւ եթ չուք
Մընան տրխուր արտաստք .
Ո՞՚ի կենաց յուսայր Հաճոյս խարուսիկ ,
Եւ ոչ պղտոր գնային աւորց իւր ալիք :

ՅՈՒՆԱՆԿ

Ո՛ քոյր , նոքայ յերեկոյեան մըտադիր
Յաղօթս ըզմիտս վերամբառնան ՚ի յերկինս .
Միւսանգամ եւըս մարթացայց զիմս զուգել
Անմեղ շրթանցն աղօթից :
Ո՛հ , սյս յետին լիցի նուոդ . . .
Ոիրտ իմ սպառի . . . ոչ խօթութիւն է պատճառ ,
Ո՛հ , զու զժտակ ես իմ սրտի թախճանաց . . .
Յէջո իւր արեգն իմ տիսոր կենաց խոնարհի . . .

Սուղք եղեն տիւքս , ո՛վ Տէր , այլ լի զդառնութեան
Արրի զրաժակն , եւ ոչ ոգիքս իմ սարտեան
Ի քէն ձօնեալ ինձ յաղխախց հոյլց 'ի տես : —
Որպէս զողիս հաստեցեր քոյդ տիալ անրիծ
Հասուցանեմ քեզ անդրէն :

Ոչ , ոչ մեզանս ինձ համարիմ զի զոյատկեր
Կրեմ տակաւին ըզմահացւոյն 'ի սրտիս :

Ո՛վ Տէր , զի ' շնորհս քո երջանիկ կէի ես .
Թէ սուրբ ըզհուրն 'ի քէն աղղեալ արհամարհ
Ոչ ըզիսուտմունո եւ զիս լկտէր ստնակոխ . . .
Ելից ընդ հուզ սուրբ ատենիդ յանդիման
Վառ տակաւին եւ տօչորեալ նոմին հորբ —
Առ դու զայն յետո — 'ի յերկրի
Կայծ փոխարէն երկնից հըլրոյն ոչ զտցի .
Ա. Հ. Քահանայն

ԿՈՐԻԵՆԵ

Ահա զայ :

ՏԵՍԱՐԱՆ Բ .

ԿՈՅՆ Բ ԵԿ ՔԱՀԱՆԱՅՆ

ՅՈՒԼԻԵՆԵ

Ընդ մէջ երկնից եւ դամրանին
Զորս նշմարեմ 'ի մօտոյ ,
Առ պաշտօնեայդ աստուածային
Յայտնեմ զծածուկըս զոդւոյ :

ՔԱՀԱՆԱՅՆ

Ընդ մէջ երկնից եւ դամրանին
Զորս նըշմարես 'ի մօտոյ ,

իրրու յատեան աստուած ոյին
Յայտնեա զծածուկը զոդւոյ .

ՅՈՒԼԻԱՆԵ

(Ո՞ր ձայն :

ՔԱՀԱՆԱՅՆ

(Ո՞վ Տէր . Եցէ նոյն ինքն .)

ՅՈՒԼԻԱՆԵ

Աէր լոկ յանցու ած . . .

ՔԱՀԱՆԱՅՆ

Աէր . . .

ՅՈՒԼԻԱՆԵ

Թշուառ ,

Աէր զօր երկինք բնաւ երեք
Ոչ զըրեսցեն դատապարտ ,
Աէր որ տանջէ զանձն իմ հէք
Թէսլէտ ապախտ արկեալ ցարդ :

ՔԱՀԱՆԱՅՆ

(Յուշ դառնաղէտ :)

ՅՈՒԼԻԱՆԵ

Ո՞չ լուր ինձ .

Այու մեռայց , մեռայց ընդ հուալ ,
Ոչ սոսկամ բնաւ իսկ ընդ մահ ,
Հոկ ՚ի ժամուս պատէ զիս ահ

Ընդ բազդ տըևուր տարիածւոյս .
Ո՞չ , զիտէի՛ թէ եւ նա
Հարեալ 'ի խիղճ մրըրկածուփ
Տետոն ընդ թեւօք գըթոթեան
Արկեալ էր զանձն ապաստան :

ՔԱՆԱԿԵՅՑՆ

Մի՛ դու անձկոտ ընդ ապագայ
Մնաս ապերախտ տարիածւոյդ ,
Զի յարտաստու եւ կեանք նորա
Թաւալեցան իբրու զքոյդ .
Յուսաւ , յուսաւ , զի եւ նա
Հարեալ 'ի խիղճ մրըրկածուփ
Տետոն ընդ թեւօք գըթոթեան
Արկեալ է զանձն ապաստան ,
Յուլիանէ

ՅՈՒԼԻԱՆԵ

Տէր . . . ո՛քեզ զանունս
Ուսոյց հիքիս . . . ձայնդ . . . Ալեաթուլաւ . . .
Մատիր առ իս

ՍԱՆՅԱԹՈՍԼՈՅ (Տ ԳԱՅՆ ԱՆԻՇԱԼ)

Այլ նախ ներեաւ :

(ՅԱՆԻՇԱՆՔ ԴԱՐԻ ՉՆԱՀԱՆ :)

ՅՈՒԼԻԱՆԵ

Ոչ եւս մարթիմ զօրել խնդիր

ՏԵՍԱՐԴԱՆ Պ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊԱՅ ԿՈՎՈՎԻՆԱց

ԿՈՐԻԴՈՒՆ :

Դիմեցէք, օ՞ն 'ի նալաստ հիքին :

ՊԵՐՆ

Ոչ եւս մարթի զօրել խնդին .

Շունչ, ձայն հիքին — տեսէք սպառին :

ՍՎԵԸԹՈՍԼԵՒ

Երկինք գըթած եղեն ընդ իու ,

Զգեցաց զպաշտոն ըզդեստուս ,

Լալ եւ կոծել ընդ յորդ չարիս ,

Եւ 'ի գանձել զերկնից յոյս ,

Այլ դու ներեան . . . :

ՅՈՒԼԻԱՆԵ

Ո՞՛Ն ՆԵՐԵԱցԵՆ

Անշուշտ գըթած երկինք քեզ

Որոլէս ներեմս իսկ արդ ես . —

Ո՞՞ն, մի ինձ դու, սէր ,

Զանցեալըն յիշեր .

Եինդ անձառելի .

Թուզ զի իմ հողիս

Ի հաճոյս վայրիս

Տակաւ սլարարի .

Խուսափես յինէն . . .

Եկ, եկ ներեացեն

իմ հոյլք անձկութեանց ,
Աէր եւ ժամ մահուան ,
Եւ սուրբս օթեւան
Գրկախառնութեանց .

ՍՎԵԸԹ · ԵՒ ՊԱՐՆ

Աղբոք , տառապա՞նք ,
Աւուրք ողբականք
Զբյիշե՞ս ոչինչ ,
Լըքումն ապերախտ ,
Աէր , դրժեալ ապախտ ,
Համայն բընաջինջ .

ՍՎԵԸԹՈՍԼԱՒ

Ես 'ի պարզունակ
Ճակատ գեղասպակ ,
Ո' շուշանդ հովտաց ,
Ես իսկ ըզմաղձոտ
Սփոեցի զազոտ
Ամսլըս թախծանաց :

Ես իմ սակս այժմիկ
Զբըրօք գեղեցիկ
Պատէ գոյն մահու .
Իմ սակս 'ի մըթին
Գընաս վիհ շիրմին ,
Ներեսցե՞ս ինձ դու :

ՅՈՒԼԻԱՆԻ ՍՎԵԸԹՈՍԼԱՒ

Աստղ իսկ նոյն հրավառ
Որ յաւուր շողայր

Խմոյ ծըննդեան ,
 Նոյն ըզբաղդին մեր
 Հիւսեալ զընթացն էր
 Յիրեարց անրաժան .

ԱՄԵՆԵՔԵԱՆ

Ո՞ գրեցան յերկինք
 Զեզ { Ճամքիսաղաղիկ
 Մեզ { Աւորք դառինք .
 Յետ { Ցաւոց ոգւոյ
 { Գողտրիկ սիրոյ ,
 Եւ զորս անջատեաց
 Երկրիս սիւդ չարեաց
 Զուգին յԱստուծոյ .

ՅՈՒԼԻԱՆԵ

Ի վայրն յոր ըզտեռ
 Մերկացեալ յեթեր
 Սըլասի ոզիս ,
 Խնդութեամբ դիմեմ
 Ի դամբան նըսեմ
 Զի լացցես դու զիս .

ՍՎԵՍԹՈՍԼԱԿ

Ի վայրն յոր ըզտեռ
 Մերկացեալ յեթեր
 Ոգիդ սըլանայ ,
 Առ ոատան կենացդ
 Օ՞ն քաղցրահայեաց ,
 Հրեշտակըդ ներեան

ՅՈՒԼԻԱՆԵ

Եկ Սվեաթուղար, Եկ Կորիննա,
Մեռանիմ գոհ — առհաւատչեայ,
Իցիւ թէ Խինդ յետին վայրիս
Էր Վայելմանն յերկնից բարիս . (Մեռանի)

ՊԱՐՆ

ՀԵՔ Սվեաթուղար . . . ՀԵՔ Կորիննա
Շիջաւ 'ի լյու . . . առհաւատչեայ
Անշուշտ ժըպիտ յետին վայրիս
Էր Վայելմանն յերկնից բարիս .

ՎԵՐՃ ՅՈՒԼԻԱՆԵԱՑ

82-2

ԱԿ.

ԳՕՄԱԼԱ

ՔԵՐԹՈՒԱԾ ԹԱՏԵՐԱԿԱՆ

ՕՍՍԻՎՆԻ

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՆԴՂԻԱԿԱՆԵՆ

ՆՈՒԷՐ ՍԻՐՈՑ ԵՒ ՄԵՃԱՐԱՆՑ

ԱՌ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԱՄԵԱՆ

ՃԱՐՏԱՐ ԵՐԳԱՀԱՆ

—••••—

1863

36 ԿԸՀ-Ա-2

ԴԵՐԱՍՈՒՐ

ՓԻՆԿԱՆ
ՀԻՏԱՎԱՆ
ԳՈՄԱՆ
ՄԵԼԻԴՈՄԱ { ԴԱՄԵՐՔ Մօրնեայ :
ՏԵՐԱԿՐԵՆԱ {
ՊԱՐՏՔ ԳՈՒՄԱՆՔ

7557.57

ԳՕՄԱԼԱ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՏԵՐՍԱԿՐԵՆԱ ԵՒ ՄԵԼԻԴՈՄԱ

Վերջացաւ որսն , Երտիլինի մէջ այլ միայն
Հեղեղատին դըղըչալու լըսուի ձայն :
Դուստըր Մօրնեայ , հասիր Քրօնայ եղերքէն ,
Աղեղըդ թող , բուռն հար քնարիդ թելերէն .
Գիշերն երգովք թող սահի ,
'Ի Արտիլինի վրայ մեր խնդութիւնն հռչակի .

ՄԵԼԻԴՈՄԱ

Փութայ գիշերն , ովկ կապուտակ աչոտ կոյս ,
Աղօտ գիշերն հովտին վերայ մութ նստի .
Տեսայ եղնիկ մի Քըրօնայ տիանց մօտ ,
Մըթան մէջ թուէր գետին եղերք մամուազատ .
Ցաթկեց խոկոյն դնաց անհետ :
Օդերեւոյթ մի խաղայր
Խըր ոստաձեւ եղջիւրներուն բոլորտիք .
Եւ լուրջ դիմօք մեր նախնիք
Քըրօնայ դէզ ամսոց մէջէն նայէին .

ՏԵՐՍԱԿՐԵՆԱ

Անշուշտ ասոնք մահ դուշտեն Ֆինկալին .
Վահանաց Դետն ինկաւ , յաղթեց Գարագալ ,
Եւ , Գօմալա , բու ժայռէդ , Եւ արցունքով ,

Ո՛ Սարնեայ դուստր , ինկաւ սիրոյդ պատանի ,
իւր ուրուականն մեր բլրոց վրայ թափառի :

ՄԵԼԻԴՈՄԱ

Մենիկ նստած է Գօմաղայն . միխրատգոյն
իւր քովն երկու շրնիկ շարժւեն ականջնին .
Եւ վախուսիկ օդոյն դէմ սրեն ակուանին .
Կարմիր ծընօտն հանգչի բազկին իւր վերայ ,
Մաղերուն մէջ լեռան հողմիկըն խաղայ .
Խոստման դաշտին տանի կասլոյտ իւր տչեր .
Ո՞ւր ես , Ֆինկալ , չորս դին պատէ բարկ գիշեր :

ՏԵՍՍՐԱՅՆ Բ .

ԳՈՄԱՆ ԵՒ ՆՈՑՆՔ

ԳՈՄԱՆ

Ինչո՞ւ արեամբ , ո՞հ , ուռճացած
Գարունդ գետոց , գնանքու ջուրեր .
Շառաշն հնչեց պատերազմաց .
Մոռվէ՞ի դետն ՚ի քո՞ւն կայ դեռ .
Դուստրը երկնից , Ել , ո՞ւ լուսին .
Քու ամսլերուդ մէջէն շողան ,
Ել , որ խոստման դաշտից վերայ
Տեսնամ իւր փայլ սլողավատկին .
Կամ երեւոյթն օդոց , որ լոյս
Գիշերուան մէջ տայ մեր նախնեաց ,
Կարմիր շողովն առ խմա սիրած .
Առաջնորդէ իմ քայլերուս :

ԱՆՃԿՈՒԹԵԿԱՆԾ ՄԷջ ովինձ պաշտպան .

ՀԻՄԱԼԱՆՔՆ ով զիս փրկէ . —

Իւր վաշտից մէջ այլ գօմալոյն

Ֆինկալն ոչ եւս պիտի տեսնէ .

Պայծառ նըման առաւօտուն

Յօղիկ ամսլոց մէջ ծագելուն .

ՏԵՍԱՐԱՆ Դ .

ՀԻՏԱԼԱԸՆ ԵՒ ՆՈՑՆՔ

ՀԻՏԱԼԱԸՆ

Ո՛ մռայլապատ քրօնայ մէդ .

Ծածկէ շաւիզն արքային .

Իւր հետքն տչքէս , ո՛հ , հեռացուր , որ մսռնամ

թէ էր նա իմ բարեկամ :

Բազմի՛ վաշտերն այլ ցրուեցան , չեն տրովիեր

Ամբոխք ՚ի թինդ վահանին .

Աղէ , արեան վըտակներ

Թաւալէ , ո՛ գարուն գետ ,

Ճողովրդեանն , աւաղ , խոնարհ ինկաւ դետ .

ԳՕՄԱԼԱ

Ո՛ ծնունդդ ամալոտ զիշերոյն ,

Գարունի մօտ զըդըշաձայն ամիերուն ,

Ո՛հ , ո՞ ինկաւ — Արտվինի ձեան ոլէս սպիտակ .

Արդեօք շըքեղ էր՝ նըման

Ծիածանին աղեղան :

Նուրբ՝ ինչսլէս մէզն է բլրոյն ,

Գանգուր էին մաղերն ՚ի լոյս արեւուն .

Պատերազմաց մէջ նա երկնից է՛ր կայծակ ,

Իբր եղջերու անապատի ոտքն արագ :

ՀԻՏԱԼԱՅԻ

Ո՛հ , թէ գամմի զիւր սիրելին տեսնէի
յայռէն 'ի վայր երբ շնորհագեղ ծռած նայի .
Աչքըն կարմիր՝ արցունքներով նըսեմցած ,
Պակշոտ ծընօտն իւր կիսաւ չափ խոպոսկեաց
Ծամ ծալքերուն մէջ ծածկած .
Ո՛ հեշտ քամի , դու կուսին
Մէկ դի առ խիտ ծալք մաղին ,
Տեսնամ ճերմակ իւր թեւեր ,
Տեսնամ անձկոց մէջ սիրելի իւր այտեր .

ԳՈՄԱՆ

Ո՛ չարագոյժ Դետդ , ուրեմն
ինկա՞ւ որդի Գօմհալին :
Տես , բլրոյն վրայ
Շանթն որոտայ ,
Փայլակք հրեղէն
Թեւօք ճախուեն .
Գօմալայ բնաւ
Զեն աղղեր վախ ,
Քանզի մեռաւ
Ֆինկալն . . . աւաղ .
Ո՛ չարագոյժ Դետդ , ըսէ ,
Ըսէ , ինկա՞ւ վահաններու խորտակիչն . . .

ՀԻՏԱԼԱՅԻ

Ազգք եւ ազինք յիրենց լեռներ ցըրուեցան ,
Այլ արքային ոչ պիտի բնաւ լըսեն ձայն ,

ԳՕՄԱԼԱ

Աղմուկ եւ շիոթ հալածական
Հովտացըդ վրայ զքեզ վարեն .
Ով աշխարհի հրամանատար ,
Ըղքեզ աւերք սլաշարեն .
Սուղքայլերով հասնիս շիրմիդ ,
Կոյս մի քու վրադ , թող , ողբա՛ ,
Գօմալային պէս արտասուստ
Թարմ հասակին մէջ ըլլայ .
Ո՛ Հիտալլան , ինչո՞ւ ըսիր ,
Թէ իմ դիւցազնըս մեռաւ .
Քիչ մ'այլ թերեւս իւր դառնալուն
Յուսով մնայի ես տակաւ .
Կըրնայի զինք կարծել տեսնեմ
Այն հեռաւոր ժայռին վրայ .
Ծառ մի խարէր զիս — բլրոյն հով
Գոյցը ականջիս վողոյն ձայն .
Ո՛հ . ո՞ տանի զիս Գարունի առ եզերս
Որ տաքցընեմ արցունքներովս իւր երես .

ՀԻՏԱԼԼԱՆ

Նա պառկած չէ Գարուն գետին ախանց վրան .
Բաղք Արտվէնի վրայ կանդնեն իւր գերեզմանն .
Անոնց վերայ նայէ , լուսին , ամազերէդ .
Պայծառ նըշոյլդ անոնց կուրծքին վրայ զարնէ ,
Որ իւր զինուց շողշողման մէջ Գօմալա
Գամմ մի ֆինկալը աեսնայ :

ԳՕՄԱԼԱ

Որդիք շիրմին , կեցէք , տեսնամ , ո՛հ , իմ սէրս .

Որսին մէջ զիս մինակ թողուց · բընաւ ես
Զէի զիտէր թէ զոռ մարտից դաշտն իջաւ .
Գիշերուան հետ պիտի դառնար , խօսք տըւաւ .
Դարձան արքայն Արտիվինի :
Ո՞վ ապառաժ լերան ընակիչ դողդոջուն ,
Սիրոյս անկումն ինչո՞ւ ինձի շաղղեցիր .
Զինք պատանի արեանըն մէջ տեսար դուն ,
Բայց Գօմալա բան չ'ըսիր :

ՄԵԼԻԳՈՄԱ

Ի՞նչ է այդ ճայնն Արտիվինի վրայ — հովտին մէջ
Ո՞վ է այն լոյսն — ո՞վ գետոց գոյ նման ուժին ,
Երբ բարդ ջուրերըն լուսնին դէմ ծածանին .

ԳՕՄԱԼԱ

Ո՞վ · — Գօմալա սոսկ ոխերիմ թշնամի ,
Աշխարհակալ պետին զաւակըն դըժնեայ —
Դու ամսկերէդ զաղեղն ուղղէ Գօմալա ,
Ո՛ ուրուականդ Ֆինկալի ,
Անապատի եղջերոյն սէս թող իյնայ :

Ուրուականացն իւր ահա
Ֆինկալ խումբով սլատած գոյ .
Ինչո՞ւ , ո՞վ սէր , դաս վախով
Յուղել ողիս 'ւ հաճրյքով :

ՏԵՍԱՐԱԿ Դ.

ՖԻՆԿԱԼ , ՊԱՐՏԻ ԵՒ ՆՈՅՆՔ

ՖԻՆԿԱԼ

Երդեցէք , Պարտք — Ազրերականց Գարունի
Պատերազմաց վէալ ձեր երգովք հոչակւի .
Գոռողութեան դաշտերուն վրայ Գարադալ

Մեր զէնքերէն փախըստական ելաւ գնաց .
Գընաց հեռուն , օղերեւոյթ տեսլեան սկս
Որ զիշերոյ Ողի մ'իր ծոցն ամիսովիէ ,
Երբ սարերուն վերայ հողմունք դինք մըղեն ,
Եւ մութ անտառք աղօտ լոյսեր արձըկեն :
Զայն մի հնչեց — սարէն հողմցն շառածն էր .
Թէ Սառնօյի սպիտակաձեռըն դոտեր՝
Զայն շնորհագեղ որսորդուհւոյն Արտվենի : —
Քու ժայռերէդ նայէ , Աէր ,
Գօմալայի ձայնն ականջիս , ո՞հ , հնչէր .

ԳՕՄԱԼԱ

Քու հանգստեան քարանձաւիդ ՚ի ներքեւ
Տակ զիս , որդիդ դու մահուն :

ԹԻՆԿԵԼ

Ե՛կ հանգստեան իմ քարանձաւս , Ակ , արեւ
Յետ մըրըրկին Եյս ծագէ մեր դաշտերուն .
Որսորդուհիդ Արտվենի ,
Եկ յիմքարտյրս հանգստի :

ԳՕՄԱԼԱ

Իւր համբաւովն ահա դարձաւ — ահա զդամ
Զանն իւր մարտից յաղթական .
Բայց այս ժայռիս յանդիման
Մինչեւ ովւրյո փարատի վախ՝ հարկ է Յնամ .
Ո՞հ , քընարն ինձ մօտ բերէք ,
Աղջկունք Մօրնեայ , երգեցէք .

ՏԵՐՄԱԿԻՆԱ

Երեք եղնիկ Արտվենի մէջ գօմալա

Զարկառ — Կըրակ ժայռէն՝ ի վեր ցօլանայ .

Գօմալացի հանդէսին

Գնա, թագաւորդ անտառախիտ Մօրվէնին .

ՖԻՆԿԱԼ.

Որդիք երգաց , աղբերականց Գարունի

Պատերազմաց վէտ ձեր երգովք հռչակուի .

Հրճուի խմ կոյս սպիտակածեռն — մինչդեռ ես

Նկատեմ սիրոյս խմ հանդէս :

ՏԵՍԱՐԱԿ. Ե.

ՖԻՆԿԱԼ, ՊԱՐՏԻՔ ԵՒ ՀԻՏԱԼԱՅՆ

ՊԱՐՏԻՔ.

Գարունդ գետաց , սահե զըւարթ ալիքով ,

Պատերազմին որդիք փախան ամօթով .

Դաշտաց ՚ի ծիր

Նըժոյզներուն հետքերըն չեն տեսնըւիր :

Գոռողոթեան

Թեւերն յօտար

Թող տարածեն

Նոքա յաշխար :

Խաղաղոթեան

Վոսկ մեղ վայլեն

Արեւք ժըսլիտ ,

Եւ բերկրառիթ

Շաղով իջնեն

Ատուերք երիկոյն .

Որսոյ հրաւէր

Հնչէ միայն ,

Կուռ վահաններ

Գահլիճներուն

Կախետով մընան
Որմանց վրբան :

Մեզ ըզրօսանք Ովկիանու կըռիւներ .
Եւ Լօքլինի արեամբ ներկին մեր ձեռքեր .

Զուարթ ալիքով

Սահմ գարուն — փախան ըտղմիկքն ամօխով :


ՏԵՍԱԲՈՆ Զ .

ՆՈՅՆՔ ԵԽ ՄԵԼԻԴՈՒԱ

ՄԵԼԻԴՈՒԱ

Իջէք , իջէք , թեթեւ մըռայլք , եւ զոգին
Բարձէք , ո՛չ շողք լուսնեկին :
Ժայռերուն մօտ թալկահար
Դըրած է կոյսն — ո՛հ , գօմալա ոչ ես է :

ՖԻՆԿԱՆ,



Սպիտակածոց կոյսն իմ սիրոյս՝ գ. ծմբաւա
Մեռան , ո՛հ , դուսարըն լառնեայ . գ. թ. ս. թ. մ. թ.
Ծմակաց 'ի նիստ հանդիպէ ինձ , ու ալրդ իմ ,
Մենիկ ժայռիցս երբ գետերուն քով նստիմ :

ՀԻՏԱԼԱՆ

Դաղրեցաւ ձայն որսորդուհւոյն Արտվէնի .
Ինչո՞ւ փափուկ կուսոյն հոգին խռովեցի .
Ե՞րբ սնւամթուխո եղնիկներու որսոյն մէջ
Ուրախութեամբ սիսի տեսնամ ես ըզքեզ :

ՖԻՆԿԱՆ,

Ո՛ մըթայօն սլատանիդ՝ դու , դահլըճիս
Զի սիսի այլ դու հանդէսին մէջ բաղմիս ,
Ոչ յետամուղ ըլլաս որսոյս աղեղսվդ .
Իմ թշնամիք սիսի չիյնան քու սըրովդ :

Հանգստեան տեղն , ո՞հ , զիս տարէք , միւսանդամ
գեղեցկութիւնն իւր տեսնամ :
Կոյսըն ժայռի սլէս տժգոյն
Դըրած է — ցուրտ քամին խոռվէ ծալք մազուն .
Հովուն հարուած լարն հնչեցուց աղեղին ,
Փշեցաւ նեան անոր ինկած ատենին :
Սառնեայ աղջկան , գուսանք , գովեստ հիւեցեք ,
Անունն աւանդ երկնից հողմոց յանձնեցէք .

ՊԱՐՏՔ.

Կոյսըն , տես , օդերեւոյթք սլատեցին .
Լուսնին շողք վերսմբառնան իւր հողին .
Լուրջ դէմք նախնեց կուսին վերայ
Իրենց ամպէն 'ի վայր հակեալ
Հսկեն — մըթին են յօնք Սառնեայ ,
Ֆիտալլանի տչք հրաթաւալ .
Ճերմակ ձեռքդ , ո՞հ , ե՞րբ սիսոի բարձրանայ ,
Եւ լրսուի քու ձայնքդ մեր սարուց վրայ .
Ծմակաց 'ի նիստ ըզքեզ կուսանք
Պիտի փնտուեն , այլչի գտնան .
Երազնուն մէջ՝ հողւոյ սիսիանք
Մերթ սիսոի գաս դույերեւան .
Ականջնուն սիսոի հնչէ միշտ քուն ձայն ,
Խնդութեամբ յիշեն երազքն հանգստեան : —
Կոյսըն , տես , օդերեւոյթք սլատեցին ,
Լուսնին շողք վերհամբառնան իւր հողին .

ՊՈՂԱԾ ԵՒ ՎԻՐԳՈՒՆԻԱ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ Ի Ե · ԱՐԱՐՈՒԹՅՈՒ

ՔԱՂԵԱԼ

Պ · ՏՅ · Ս · ԲԻԵՐԻ ՎԻՊԵՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒՏԱԿԱԿԱԿԻՆ



1928

ԳԵՐԱՍՈՒՅՑ

ՏԻԿԻՆՆ ԼԱԹՈՒՐ	Յիսնամեայ
ՎԻՐԳԻՆԻԱ	19 ամեայ
ՊՕՂՈՍ	20 „
ԼԱՊՈՒՐՑՈՆՆԵ	Կղզւոյն տեղակալը
ԱԼՖՈՆՍՕ	Ծեր բնիկ
ՏՕՄԻՆԿՕ	Ծեր Խափշիկ
ԶՕՐԱԿԱՆՔ	
ԲԵՇՆԱԿԻՐՔ	Անխօս դերասաննեց
ՆԱԽԱՍՏՔ	

Տեսարանն է Բօր լուի կղզւոյն Արևելեան կողմը :



148-2015
19 188

7551-57
P

ՊՕՂՈՍ ԵՒ ՎԻՐԳԻՆԻԱ.

ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Ա.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Հովիտ անքնակ , ձախ կողմէն երկու հիւղ , և երկու ծառ .
մեծադոյն ծառը Պօղոսի հիւղին մօտ , և պղտիկը Վիրդինիայի
հիւղին մօտ , բարձր լեռ մը , ձախ կողմէն կղզի մը որուն մէջ ե .
կեղեցւոյ զանդակատուն մը կը տեսնուի :

Պօղոս է - Վիրդինիա լեռան ծայրէն ինընան , Վիրդինիա Պօղոսին
առնին է - Պողոս աւ պամպասի եղշդան ճը իրնած վար ինչնան :

ՊՕՂ . Քաջալերուէ , քոյր իմ ահա հասանք :
ՎԻՐ . Այո , — կարծես թէ ես քեզմէ առաջ քու հիւղի
չէի տեսած — բայց չուզեցի քեզի իմաց տալ :
ՊՕՂ . Անշուշտ զիս տագնապի մէջ թողլու համար , այն
պէս չէ :

ՎԻՐ . Զէ , սիրելի եղբայր , այլ քեզի յանկարծական
եւ հաճոյ զարմանք մը պատճառելու համար :

ՊՕՂ . Ասկայն ո՞ գիտէ մեր սիրելի մայրը , Ալֆոնսոն
եւ Տօմինկօն մեզի համար ի՞նչ տագնապներու մէջ
դեռ կը վարանին . ամբողջ օր մ'է որ տուն չ'
գացինք :

ՎԻԲ · Բայց բարի դարձ մը կատարեցինք :

ՊՕՂ · Որով զմեզ կորսնցունելնուն վրայ թերեւս հիմա կրկին միտիմարուին :

ՎԻԲ · Փութանք ուրեմն զիրենք արթընցունենք :

ՊՕՂ · Ինչո՞ւ իրենց անուշ քունք խոռվենք :

ՎԻԲ · Աղէկ ըսիր , հաս արեւուն ծագումը ապասենք , մինչեւ որ մերոնք ալ արթըննան . այն ատենք , նայէինչ աղէկ մտածմունք մը միտքս կուգայ . . . շուարեալ եւ տխուր կերպարանօք անոնք դուրս կելլան . . . մայրս Ալֆօնաօյին եւ Տօմինկօյին կը հարցընէ , « ի՞նչպէս կարելի է որ մինչեւ հիմա ես դարձած չըլլան ». այն ատենք մենք ուսերնին կը ցատկենք , զիրենք կը դրկենք . . . վուխոխակի կը համբռւրենք :

ՊՕՂ · Վիրդինեայդ իմ , եւ ո՞քու մեղրածոր չըթանցգ վրայ կը տեղայ այդշափ քաղցրութիւն , որով քու ամէն մէկ խօսքդ նոյն խակ կատակ ըրած ատենդ սիրտս կը զօրացնէ . . . կը ախտիէ . . . եւ զօրաւոր ներդործութիւն մը կ'աղդէ յիս , որով ինքինքս զերագոյն էակ մը կը կարծեմ .

ՎԻԲ · Կոյն աղջեցութիւնք կը ներդործեն յիտ արդ քու խօսքերդ , եւ շատոնց կուղէի պատճառն հարցունել քեզ :

ՊՕՂ · Շիտակը ճամբորդութիւննիս երկայն եւ շաղուկալի էր :

ՎԻԲ · Իրաւունք ունիս , մեր հաւատարիմ շունն ոլ տես ի՞նչպէս յոդնութենէն խոտին վրայ վիւուերէ , (աստին) : Այո , զրուցէ ինձի , ինչո՞ւ արեւուն ծագումն այնշափ զիտ չի զուարթացնէր որչափ քու ներկայութիւնդ : Ինչո՞ւ մօրս զգուանքն այնշափ

սիրտս չեն յուզեր , որչափ քու մէկ ակնարկութիւնդ : Ինչո՞ւ իմ ողիս հաճութիւն կըզգայ երբ դու գոհ ըլլաս , եւ տրամութիւն՝ երբ մելամաղձն յուզէ զքեզ : Վերջապէս ինչո՞ւ Վիրդինիայն յամենայնի Փօղոսը կը զտնայ իր սրտին մէջ :

ՊՕԴ . Եղբայր եւ քոյր եմք . հետեւարար սիրոյ ամենէն զօրաւոր հանգոյցովին իրարու կապուած եմք , ինչպէս որ կըսէ հայրերնիս այս հարցմունքն իրեն ըրած ատենս : Մեր ողիքը իրարու պարզըւելով գոհ կըլլան : Երբ բլրին ծայրէն կը զիտեմ զքեզ մինչզեռ այս հովտին մէջ կը քայլես , զքեզ թեթեւընթաց նազելի կաքաւուն կը նմանցընեմ . զքեզ պատող օդոյն մէջ , քու կեցած տեղերդ չեմ զիտեր ինչ հաճոյք կան որ զիս կըզմայլեցնեն : Երկնից կապոյտը քու աչքերուդ պէս չի հմայեր , Պէնկալիներուն երզը քու ձայնիդ չափ անոյշ չէ — վարդի նորածին կոկոն կը նմանիս . . . ո՞հ , Վիրդինիա , իմ թարմ հասակիս մէջ . . . ես երջանիկ էի . . . այլ արդ հեշտին մելամաղձ մը սիրտս . . . ո՞հ , Վիրդինիա , քու քովդ խօսքերուս թելն անզամ կը կորանցնեմ :

ՎԻՐ . Բայց մեք ինչո՞ւ զիրար այսչափ կը սիրեմք արդեօք :

ՊՕԴ . Կարծեմ այն ամէն անձինք որ մի եւ նոյն յարկին տակ կը մեծնան , պէտք է նոյն կերակով զիրար սիրեն : Կը տեսնո՞ւ մեր թոշունները , միթէ մի եւ նոյն բունին մէջ սնած չե՞ն . անոր համար մեզի պէս մէկզմէկ կը սիրեն : Չե՞ս լսեր ինչպէս զիրար կը կանչեն , եւ ծառէ 'ի ծառ իրարու խօսակից կըլլան , ինչպէս որ արձադանքը առ

Հովտիս մէջ երգած նողանակներդ խմ ականջս կը
բերէ , եւ ես լեռան ծայրէն քու երդիդ խօսքէ-
րը կը կրկնեմ : Նոյն խոկ հաւատարիմ շուներնիս
որ մեր մայրը մեզի հետ մեծցուցած է կարծես
թէ մեր լեզուն կը հասկընայ , մեր հաճոյիցը վը-
րայ կը հրճոփի , եւ մեր ցաւոց ատենին ինքն ալ
կը վշտանայ :

ՎԻՐ. Դիտեցիր երբ մեզ դիմաւորեց ինչպէս զուար-
թոթենէն կը խայտար :

ՊՕՂ. Առանց իրեն անհնարին սլիտի ըլլար որ ճամբանիս
զտնայինք :

ՎԻՐ. Լեռան վրայ ելած ատենիս երբոր զիս ուսդ տ-
ոիր , տեսար ինչպէս քեզ կը շցէր :

ՊՕՂ. Կարծես թէ ինձի կուզէր շնորհակալ ըլլալ որ խմ
յոգնած ըլլալուս շինայելով տղեցի քեզի յոդ-
նութիւն առնել տալ — եւ այս ինչո՞ւ — վասն զի
քու հիւզիդ մէջ կը սրասկի , վասն զի միշտ քու-
քովդ է . . . նոյն խոկ դաղանք՝ իրենց որջոյն
ընկերակից անասնոց վրայ՝ տեսակ մը սէր կու-
նենան :

ՎԻՐ. Ես ամէն օր մօրս , հօրս . Տօմինկոյին համար Առ-
տուծոյ աղօթք կընեմ , բայց քեզի համար որ տ-
ղօթեմ , կարծես թէ նոր ոյժ մը կը զօրացնէ զիս ,
եւ աւելի եռանդեամբ կաղօթեմ :

ՊՕՂ. Ուստի . . . :

ՎԻՐ. Կ'նչ զիտնամ . . . :

ՊՕՂ. Այս սէրը . . . :

ՎԻՐ. Կարծես թէ օրէ օր աւելնալու վրայ է :

ՊՕՂ. Ինչովէս քու զեղեցկութիւնդ կը զարդանայ , նոյն-
ովէս ալյիս դիտակցութեան զգացումը . զքեզ

տեսած առենս կը հիանամ, եւ հիանալով կը
սլաշտեմ զքեղ . եթէ դիմացդ գեղեցկութիւնը
բաղդատեմ հոգւոյդ անկեղծութեանն հետ, վա-
յելչութիւնդ առաքինութեանդ հետ՝ կը տես-
նամ որ այդ յատկութիւններդ օրէ օր աճելու վր-
բայ են . . . եւ ո՞հ, յետ Առտուծոյ կը հարկա-
դրիմ ամէն իղձերս քեզի նուիրելու :

ՎԵՐ. ՈՇ, այս խօսքերդ սրտիս մէջ անսովոր հաճոյից
կիրքեր կը յարուցանեն, բայց միանդամոյն ան-
ծանօթ տաղնառ մը կը նեղէ զիս . եւ . . . չէ,
մենք միշտ իրարմէ անբաժին պիտի մնանք :

ՊՕՂ. Եւ ո՞ կրնայ բաժնել զմեղ, եթէ իրարու համար
ծնած եմք, եթէ . . . տես, դիտէ մեր ծնած օ-
րը տնկուած քոքենիները, որոնց կոճղները մեր
տարիքներուն թիւը կը նշանակեն. ես քեզմէ
տարոյ մը չափ աւելի մեծ եմ. մեր ծնողքը
խանդաղատանօք մեր անունները այն ծառերուն
վրայ փորադրեր են. տես անոնց դադաթները
իրարու կը խառնուին, եւ մէկին տերեւնները միւ-
սին տերեւոց հետ հիւտած են, իբր թէ մեզ
զուշակելու համար, որ մենք ալ միշտ այսպիսի
սերտ զգացմամբ վառուած . . .

ՏԵՍԱՐԱԿԻ

SΟΥՄԿՈ (ՀԱՅԱՆ ՃԱՐԱԲԻՆ) և ՆՈՅՆՔ

ՏΟՄ. Ահա, ահա հոն են . (ԱԵՐԱԷՆ) :

ՎԵՐ. Եկան . . . վութանք . . .

ՊՕՂ. • Պահաւըսինք :
 ՎԻՐ. • ԶԵ . . . վերջը :
 ՊՕՂ. • Արդեօք զմեզ տեսան :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՏԻԿԻՆՆ ԼԱԹՈՒՐ, ԱԼՖՈՆՍՕ, ՏՕՄԻՆԻՕ (Հանէն
 Էլանէլլ) և նոյնը :

ՏԻԿ. • Գուստր իս . . . Պօղոս : (Ճնշգրին պիտեան սիրու :)
 ՎԻՐ. • Մայր իս :
 ՊՕՂ. • Ես ալ դրկեմ զքեզ :
 ԱԼՖ. • Աիրեցեալք իս :
 ՊՕՂ. • Մայր իս, Ալֆօնսօ, Տօմինիօ :
 ՏՕՄ. • Աիրելի տէր իս, զիտնայիր թէ մեզ որչափ քալե-
 ցուցիր . . . :
 ՏԻԿ. • Գիշերն ուր անցուցիք — մենք շրջակայ լեռնելլը
 թափառելով անքուն մնացինք :
 ՏՕՄ. • Ամէն կողմ ձեր անունը բարձրաձայն կը կանչէի,
 Պօղոս, Վիրդինիա :
 ԱԼՖ. • Եւ արձագանքը միայն մեր ողբոց պատախան
 կուտար :
 ՏԻԿ. • Ուր դացեր էիք :
 ՎԻՐ. • Բարեգործութիւն մը ընելու :
 ՊՕՂ. • Մեզի միշտ խրատ կուտաք, թէ մարդս միայն իր
 անձին համար սկառք չէ ապրի :
 ՎԻՐ. • Եւ թէ իր նմանեացն օդնելու է :
 ՊՕՂ. • Մենք ալ ձեր խրատը ի գործ դրինք . . . :
 ՎԻՐ. • Վասն զի Աստուած ալ բարեգործութիւնը կը

պատուիրէ :

- ՊՕՂ. Եւ բարեգործութիւնն առանց վարձատրելու չի
թողուր :
- ՏԻԿ. Բայց ո՞ր դացեր էիք :
- ՎԻՐ. Պատմեմ ձեզ . . . :
- ՊՕՂ. ինձ մտիկ ըրէք :
- ՏԻԿ. Յոդնած եմ, քիչ մը նստիմ : (Նորին)
- ՎԻՐ. Մօրս քովը ես սկսի նստիմ :
- ՊՕՂ. Երէկ առաւօտ երբոր Բամբամուսի մատուռը դա-
ցիք . . . :
- ՎԻՐ. Ես ճաշը պատրաստելու վրայ էի, եւ Պօղոսն ալ
պտուղ կը քաղէր . . . :
- ՊՕՂ. Խափիշիկ կին մ'անդիէն եկաւ, եւ հեծեծելով մեր
առջեւը ծունկ չոքեցաւ . . . :
- ՎԻՐ. Ես եւ Պօղոս խեղճուկը վեր վերուցինք, եւ այն
այն ալ գրեթէ ուժաթափ, մեղմէ քիչ մը հաց
ուղեց . . . :
- ՊՕՂ. Վիրդինիայն նախաճաշիկն հանեց անոր տուաւ . . .
- ՎԻՐ. Պօղոսն ալ ձեռքի պտուղները :
- ՊՕՂ. Ի՞նչ ըսեմ քիչ մոյժ առնելէն վերջը զվառն ե-
կած թշուառութիւնը պատմեց մեղի :
- ՎԻՐ. Իւր տէրը խեղճը աղէկ մը ծեծելէն վերջը զինքը
վոնուեր է :
- ՊՕՂ. Եւ զրեթէ մէկ ամիս այս անտառներուն մէջ թա-
փառեր է . . . :
- ՎԻՐ. Վայրի կաղին ուտելով . . . թշուան՝ կին :
- ՊՕՂ. Վերջապէս յուսահատելով միտքը դրեր է որ ինք-
զինքը ծովը նետէ :
- ՎԻՐ. Բայց աղէկ որ Նախախնամութիւնը զինքը մեղի
խրկեց :

ՊՕՂ. Վիրդինիայն խօսք տուաւ որ տիրոջը հետ զինքն
հաշոեցնէ :

ՎԻՐ. Ընդհակառակն Պօղոսը չէր ուզեր որ յանձնառու
ըլլամ :

ՊՕՂ. Պատճառաւ տեղւոյն հեռաւորոթեանը : Ի՞նչ կը
կարծէք . եռաստին լեռնէն անդին , եւ սեւ զե-
տին եղերքը կը բնակի եղեր :

ՎԼՅ. Պօղոսն իրաւունք ունէր :

ՏՕՄ. Թշուառական ալ ճամբայ մը :

ՎԻՐ. Ասկայն ես չի համոզուեցայ . . . բայց դու Պօղոս ,
չըլլայ որ նեղանաս . իրաւ է , այս անդամ քու
կամքիդ չի համաձայնեցայ , բարեգործութիւն մը
ընելու առիթը չէի կրնար փախցնել :

ՊՕՂ. Ես ալ անոր համար գլուխ ծուցի եւ քեզի ընկե-
րացայ :

ՏԻԿ. Վերջապէս իւր տէրը կըրցա՞ք դտնալ :

ՎԻՐ. Ի՞նչպէս չդտանք : Տանք սեմին վրայ կեցած իւր
շաքարի եղեղները մշակող գերիներուն հրաման
կուտար . ի՞նչ սոսկալի տղեղ մարդ . թոթակի
դէմք ունէր . խոժոռ կերպարանքով մը մեզ ըն-
դունեցու . . . :

ՊՕՂ. Բայց Վիրդինիայի աղաչանացը չկրցաւ դիմանալ :

ՏՕՄ. Խամիշիկը նորէն իր քովին առաւ :

ՎԻՐ. Հարկաւ :

ՊՕՂ. Շատ բռնադատեց որ հետը կերակուրի նստինք :

ՎԻՐ. Բայց ես չուզեցի կենալ , որպէս զի ըրած բարի-
քիս փախարէն մը ընդունած չի սեպոխմ :

ՊՕՂ. Միանգամայն թե որ ուշանայինք ձեր տադնապն
ալ միտքերնիս բերինք , ուստի անմիջապէս ճամ-
բայ ելանք :

ՏԻԿ . Բոլոր օրն ի՞նչպէս կըրցաք անօթի դիմանալ :

ՎԻՐ . Աստուած գիտէ թէ ի՞նչպէս ետ դարձանք : Լեռնէն դար վեր ելած ատեննիս շատ տեղ Պօղոս զիս ուսն առաւ :

ԱԼՖ . (Ո՛վ անմեղութեանն :)

ՊՕՂ . Ի դարձին պաղալից արմաւենի մը տեսայ , պառւղները փրցուցի ու կերանք :

ՎԻՐ . Յանկարծ առուածիի մը խոխոջանքը ականջիս դարկաւ , Պօղոսին խմաց տուի ու դացինք փոթով աղբերակը գտանք ու պայծառ ջորէն անոյշ անոյշ խմելով , կարծես թէ նոր կենդանութիւն առնի :

ԱԼՖ . Տեկին , չըսի ձեզ , Աստուած ոչ զոք Երեսի վրայ կը թողու , եւ անմեղ ողւոց վրայ մասնաւոր խընամք կունենայ :

ՏԻԿ . Բայց մօր մը սիրալ չէր կըրնար համազուելով հանդարտիլ :

ԱԼՖ . Տառապանաց մէջ միայն խոհականութեան ձայնին մտիկ ընելու ենք : Երջանկութեան մէջ ամէն մարդ գիտէ խոհական սրատդամներ տալ . բայց ճշմարիտ խոհականութիւնը թշուառութեանց մէջ կը տեսնուի : Երբար մատոէն դարձանք , եւ ըդ ձեզ հոս շիգտնելով՝ լեռներն ու անտառները կը թափառէինք , սիրտս լանջացս մէջ՝ կը տրոփէր , տիսուր արկած մը կատկածելով . բայց խոհականութիւնը կը հանդարտէր զիս յիշեցնելով թէ Աստուծոյ հսկող աչքը կառաջնորդէր ձեզի :

ՏԻԿ . Զեր առաքինական խօսքերը կըզմայլեցնեն զիս , եւ ցաւագին սրտիս վերքերը կարծես թէ կը գոցեն . . . եւ գուք միայն կընաք . . . Վիրգինիա

կուլան . . . ինչու համար :

ՎԻՐ · ի՞նչպէս շիլամ , քանի որ կը մոտածեմ որ իմ սլատ ճառաւս դուք այնչափ սրտմաշուք . . . այնչափ . . . ո՞չ , եղբացր մէջ մ'ալ չենք ըներ . . . :

ԱԼՖ · Մանաւանդ թէ ուրիշ անգամ ալ զնոյնը գործելու էք , բայց քիչ մը սլակաս արտորալով . թէ որ սպասէիք մեր մատուին դառնալուն , թոյլ կուտայինք որ Տօմինկօն հետերնիդ գայ , կամ ես ձեզի կընկերանայի :

ՎԻՐ · Հաւատարիմ շուներնիս եկաւ մեղ դտաւ :

ՏՕՄ · Շոնը . տեարք իմ , չըսի՞ ձեղի թէ շոնը անոնց քայլափոխներն հոտուրտով կերթար զիրենք կը դտնար :

ՊՕՂ · Թէ որ շոնը հետերնիս չըլլար . . . :

ՎԻՐ · Անշուշտ անտառին մէջը պիտի կորսուէինք :

ՏՕՄ · իսկ հիմա խեղճ շոնը ո՞ր է . . . ահա ահա զետինը լաւ մը փռուեր է :

ՊՕՂ · Խեղճը յոգնած է . . . :

ՎԻՐ · Թշուառ խափշիկ կնոջ արցունքներուն չի կրցայ դիմանալ :

ՊՕՂ · Թէ որ դուք ալ լոէիք ինչ սրտաշարժ բառերով իր դժբաղդութիւնները կը սլատմէր , թէ որ ուսերուն վրայ դուք ալ տեսնայիք իւր վայրագ տիրոջը տուած հարուածներուն նշանները . . . :

ՏԻԿ · Բաւէ որդեակք իմ : Գողտր որդեակք , տառապազին յիշատակի մը ո՛ անոյշ աւանդք , դուք բրլոր օրն իմ ցաւերս կարթնցնէք , բայց միանդամայն իմ երջանկութիւնս 'ի ձեղ է : Անցան չարիք , առաքինի գործոյ մը գոհութիւնը կը զուարթացնէ զձեղ , քանի որ դուք բազկացս մէջ էք՝ ես ալ երջանիկ եմ :

ՎԻՐ. Ուրեմն մեզի նեղացած չէք :

ՊՕՂ. Կը լնամ ձեր գիրկլը դիմել :

ՏԻԿ. Զբլայ որ երրէք խմ գրկես բաժնուիք . Երթանք ներս , մեր գոհոթիւնն Աստուծոյ մատուցանելու :

ՏՕՄ. Վերջն ալ կերակուր կուտենք . տեսնաք ձեզի այս առառու ինչ ախորժելի նախաճաշիկ մը պիտի կերացընեմ : (Եր՞այ շանկարել)

ՎԻՐ. Պօղոս չես կրնար երեւակայելթէ որչափ հողնած , եմ . — խիստ շատ . . . :

ՊՕՂ. Եւ ես բնաւ չեմ հողնիր , բաւական է որ քու աչքըդ ինձի դարձնես միշտ , եւ ես քու քովդ լւամ :

ՎԻՐ. Աիշտ :

ՊՕՂ. Երթանք : (Դրվակառան ճառնեն ՚ի հիւն :

ՎԵՐՃ Ա. ԱՐԱՐՈՒԱՃԱՌԱՋԻՆ



ԱՐԱՐՈՒԱՆ Բ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՏՕՄԻԿՈ աթոռները աեղաւորյնելով:

ԴՕՄ. Տօմինկօ փութա՛, այս առառ արեւը իր շրջանին
կէուը չի հասած ցորեկւան կերտակուրը տալու է :
Հարկաւ ամէնքո ալ հոգնած ենք, ալ, աք է
որ վայրկեան մ'առաջ քիչ մ'ուտելիք ծամճը-
մնք . Երբար առամոքը ձայն կուտայ, ճաշու-
ժամն այն առեննէ . . . ՚ի դարձին ամենէն առաջ
ես զիրենք տեսայ . ի՞նչ կոյտառ մանկախ . . .

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏԻԿԻՆ ԱՐԴՈՒՅ, ԱԼՖՈՆՍՕ ԵՒ ՆՈՅՆ

ՏԻԿ. Տօմինկօ, կերտակուրը փութա՛ սկատրաստէ . Եւ
սեղանը հոս դուրսը դիր :

ՏՕՄ. Շատ լու . քիչ մ'ալ զով օդ շնչելու որ ըլլանք,
ախորժակնիս աւելի կարթննայ . Եւ թէպէտ խոր-
տիկներու առատութեան մէջ չենք լողար, սա-
կայն քչիկ ճաշերնիս ալ զուարթութեամբ կու-
տենք . (ԿԵՐԸ-)

ԱԼՖ. Ուստի տիկին, մեր խօսակցութեան նիւթոյն դառ-
նալով, Պօղոսի եւ Վիրդինիայի նկատմամբ ի՞նչ
միտք ունիք : Այս զիշերուան դիպուածին վրայ
կարծեմ որոշեցիք որ զիրենք ամուսնացնէք : Մի

եւ նոյն յարկին տակ աճելով , մի եւ նոյն զդաց-
մունքներով կրթուած ըլլալով , իրենց սիրու ոյն-
սիսի ժամանակի յարակցութեամբ մը իրարու մի-
ացած է , որ իրենց ժամանակ հասակին մէջ եւ
զիրար եղրայր ու քոյր կարծելով , առանց զիտ-
նալու իրարու սիրահարւած են , անանկ որ դուք
խոկ պատշաճ կը սեսէք իրենց անմեղութիւնը
չի վրդովիլ . բայց եղրայրական մտերմաւթիւնը
մէկ մ' որ բուռն սիրոյ կիրքի ժամանի , կրնայ
բաւական թումբ մը սեպւիլ որ արգիլէ զիրենք
մոլորութեան մինը զահավիժելէն , մանաւանդ եր-
րոր իրենց վիճակին զիտակցութիւնն ունենան :
Հարկ է ուրեմն անհրաժեշտ որ իրենց անրիծ
սրայծառութիւնը քանի որ կորանցուցած չեն , սրր-
բազան կապով մը երկու գեղեցիկ հոգւոց առա-
քինութիւնը որսակէք :

ՏԻԿ . Ուրեմն կը կարծէք որ . . . :

ԱԼՖ . Առանց յապաղելու իրենց հարանիքը կարգադրե-
լու է . ուստի զոհ եմ որ հիմակընէ սկսեր էք
վիրզինիային հասկցնել որ Պօղոս իւր եղրայրը
չէ :

ՏԻԿ . Գիտէք որ այս պատրուակը . . . :

ԱԼՖ . Իրենց անմեղութիւնն ակահովցնելու համար ատե-
նօք հնարեցիք . Բայց հիմակ որ տարիքնին կը
հասուննայ եւ անոր հետ միատեղ կիրքերը կըս-
կըսին սրտերնուն անարդել տիպաննալ , հարկ է որ
հետերնին ուրիշ ընթացք մը բռնէք :

ՏԻԿ . Ո՛ մտերիմ բարեկամ ի՞նչ վէրքեր կը դրդուս .
Ես դուստր աղնուաստոհմ եւ հարաւոտ ընտանեաց
ի՞նչ օժիտ կրնամ տալ վիրզինիային , բայց եթէ

իմ արցունքս եւ իմ թշուառաթիւններս : Պօղոս
աղքատորդի եւ տալրելու միջոց մը չոնենալով ,
մեր մահւընէ վերջը , (յուսամթէ ուշ ,) ի՞նչ-
չով վիրգինիայն պիտի կարենայ խնամել : Կրենց
զաւակոց ի՞նչ ստացուածք պիտի թողուն . ի՞նչ
կրթութիւն պիտի կարենան տալ անոնց . ի՞նչ —
Ալֆօնսօ խորհրդածէ , որոշէ ի՞նչ ընելու եմ , եւ
օդնէ ինձի :

ԱԼՖ . Ուրեմն չէք ուզեր որ աղնուական անձանց դուս-
տըր եւ քեռորդի վիրգինիայն՝ սամկորդի Պօղո-
սին հետ ամուսնանայ :

ՏԻԿ . Լուեցէք , անոնք են :

ՏԵՍԱՐԱՆ Գ .

ՎԻՐԳԻՆԻԱ , ՊՕՂՈՍ ԵՒ ՆՈՅՆՔ

ՎԻՐ . Մեր մայրը թող զրուցէ

ՊՈՅ . Անշուշտ կը զրուցէ :

ՏԻԿ . Մեր վրայ կուգան : (— Ա. Ֆ. Օ. Ա.)

ՎԻՐ . Աիրելի մայր , դուք Պօղոսին հասկըցուցէք :

ՊՈՅ . Վիրգինիայն կը թէ մանք եղրայր եւ քոյր չենք :

ՎԻՐ . Աղօթքէն վերջն էր՝ մայրս ինքն ինձի այնալէս ը-
ստւ :

ՏԻԿ . Աիրելի որդեսկիք նառեցէք , եւ զրուցելու խօսքե-
րուս մասդիր եղէք :

ԱԼՖ . Ատիկ ըրէք , աշխարհիս փորձանքներէն խրառ
առէք : (Ն. Մ. Բ.)

ՊՕՂ. • Վիրդինիա, ի՞նչ պիտի ըսէ արդեօք | շած Յայեռն
ՎԻՐ. • Զը գիտեմ :

ՏԻԿ. • Հարկ է որ իմ ընտանեցս եւ իմ թշուառութեանց
ըլու զձեղ տեղեակ ընեմ, որպէս զի կենաց առ
սլարէզին մէջ իմ անցքերս ձեզի հայելի ըլլան :
Ես Մէրմի դուքսին աղջիկն եմ, որ Նորմանտիոյ
մեծահռչակ ընտանիքներէն մէկն է թէ ազ
նուականութեամբ եւ թէ հարսառութեամբ : Տը
լաթուր անուամբ ազատի մը սիրահարուելով
առանց իմ ծնողացս հրրամանին անոր հետ
ամուսնացայ, եւ զքեղ ծընաց սիրելիդ իմ
Վիրդինիա :

ՊՕՂ. • Իսկ իմ հայրու ո՞վէ :

ԱԼՅ. • Խօսակցութիւնը մի ընդհատեր :

ՏԻԿ. • Թէ քաղաքական եւ թէ զինուորական ասպարէզ
ներուն մէջ բաղդը Տըլաթուրին անյաջող ըլլալով
հարկադրուեցաւ հայրենիքը թողլու, ոչ այնչափ
լուագոյն բաղդի հանդիպելու յուսով՝ որչափ իւր
հայրենակցաց շարամիտ գուռզութենէն ինքզինքն
ազատելու համար : Եկաւ հոս Բօրլուի կղզին,
շաքարի եւ բամսպակի առուտուրով զբաղելու,
զորոնք ցանելու եւ մշակելու համար շատ թե
մբու կարօտ ըլլալով, պարտաւորեցաւ զերիներ
գնել . հետեւաբար Մատակասկար գնաց զիս հոս
թողլովյզի վիճակի մէջ : Գնաց բացց չի դարձաւ,
(շա) Ալֆօնսո, անկարելի է որ դառն յիշատակներ
անլաց պատմեմ :

ՎԻՐ. • Ի՞նչ եղաւ որ .

ՊՕՂ. • Մտիկ ընենք :

ԱԼՅ. • Խեղձը տարափոխիկ տէնդով մը զարնուելով, վախ
3

ճանեցաւ ՚ի Մատակասկար , ուր ինչպէս որ լսեցիք , գերիներ գնելու դացեր էր :

ՎԻՐ . Հայր իմ . (1.ա)

ՏԻԿ . Վիրդինիա , մի լար :

ՊՕՂ . Լոէ :

ԱԼՖ . Արցունքու սրբէ :

ՏԻԿ . Օտար երկրի մը մէջ անօդնական մնալով յետին թշուառութեան մէջ ինկայ , որովհետեւ ամուսինս ունեցած ստակը հեաը տարած էր :

ՊՕՂ . Ինչու ստակները չի սրահանջեցիք որ ետ դարձնեն :

ԱԼՖ . Որդեակ իմ , դու չես դիտեր թէ իր ընտանիքէն հեռու մեռնիլն ի՞նչ է :

ՎԻՐ . Բայց իր սպասաւորնե՞րը . . . :

ՏԻԿ . Խօսքս չերկնցունեմ . ամուսնոյս հետ ամէն ՚րան կորուսի , միայն Տօմինկօն մնաց հետս , աւելի բարեկամ քան թէ ծառայ : Յուսահատութենէս մայրաքաղաքը թողուցի , եւ եկայ այս հովտիս մէջ բնակելու , ուր իմ եւ խեղճ Տօմինկօյին աշխատութեամբը այս հիւզս շինեցինք , եւ ապրուստնիս ճարելու համար սկսանք սա կըտոր հողը մշակել , եւ առաջադրութիւն ըրի որ կեանքս այս մենաւոր տեղս աւարտեմ :

ԱԼՖ . Հոս քու մօրդ Մարդարիտային ծանօթացաւ , որ հազիւ զքեզ կաթէն կտրեր էր , եւ որ Վիրդինիայի ծննդեան Հատեն Տիկին կաթուրին քովն օդնական եղաւ . բայց քիչ ատենէն ետքը , իր թշուառութեանց բեռան տակն ընկճուելով Մարդարիտայն ալ վախճանեցաւ :

ՊՕՂ . Ո՛ աղետավի լուր . իմ մայրս ալ վախճանած է :

ՏԻԿ . Այս մտերիմ բարեկամը , որ մարդկան շարութէ .

ՆԵՆ տաղտկացած դիմացի հովիտը քաշուած էր :
 ԱԼՖ . Այս թշուառաթեան վրայ սիրտս խղճալով , եւ
 կայ Մարդարիտոցին տունը բնակութիւնս հաս-
 տատեցի , եւ զքեզ , սիրելիդ իմ Պօղոս , իմ որ-
 դւոյս պէս մեծցուցի :

ՊՕՂ . Խոկ հայրս .

ԱԼՖ . Պատշաճ ատենին իւր պատմութիւնն ալ կը դրու-
 ցեմ քեզի :

ՏԻԿ . Այն ատենէն 'ի վեր առաջադրեցինք որ զձեզ ի-
 րրեւ եղբայր եւ քոյր մեծցընենք , որպէս զի փո-
 փոխակի սիրով միատեղ աճիք , եւ եղբայրական
 ընտելութեամբ ասլրելով օր մը իրրեւ գողտր ա-
 մուսինք իմ վերջին հառաջանքս դուք ընդունիք :
 (Լառնական :)

ՊՕՂ . Վիրդինիա :

ՎԻՐ . Պօղոս :

ՊՕՂ . ԶԵՆՔ եղբայր եւ քոյր :

ՎԻՐ . Բայց ես զքեզ առջինէն աւելի կը սիրեմ :

ՊՕՂ . Ես ալ կըզգամ որ Վիրդինիային վրայ ունեցած
 սէրս կաւելնայ :

ԱԼՖ . Որդեակը իմ , որչափ որ ձեր սէրը անարատ պա-
 հէք , երկնից օրհնութիւնը վրայներնէդ անպա-
 կաս կըլլայ , տարակոյս մի ունենաք , ձեր հար-
 սանիքը կը կատարուի :

ՏԻԿ . Հազիւ որ քիչ մը վաստակ ճարէ . . .

ՎԻՐ . Սէրը կարծեմ : . . .

ԱԼՖ . Այս միութիւնը կատարելու միակ միջոցն . . .

ՏԻԿ . Բայց սէրը միայն չրաւէր ամուսնութեան լուծը
 տանելու համար . ձեր եւ ձեր որդւոց ասլրուս-
 տին բաւելու չափ պէտք է որ ստացուածք ալ
 ունենաք ,

ՊՕՂ. Ուրեմն ի՞նչ ընելու է :

ՎԻԲ. Ես Պօղոսին համար ամենայն աշխատոթեան յանձնառու կը լամ :

ԱԼՅ. Մտիկ ըրէք, Տիկինն Կաթոր առանց մասնաւոր նպատակի մը ձեր էական վիճակը այսօր ձեզի չի յայտնեց . Պօղոսը՝ որովհետեւ Վիրդինիայն այն-չափ կը սիրէ, ալէտք է որ երկու ամսոյ չափ Հնդկաստան երթայ, հոն մեր շաքարները եւ բամպակի հիւսուածքները ծախէ, եւ անոնց բերած ստակովը գերիներ գնէ, որով մեր մշակութիւնը կաւելնայ, եւ դուք ալ ապահով օժիտ մը ձեւացուցած ըլլաք ձեզի, եւթէ Աստուած չնորհէ, ձեր զաւակաց համար :

ՏԻԿ. Աիրելիդ իմ Պօղոս, ի՞նչ կը սե :

ՊՕՂ. Զէ այդ առաջարկութիւնն ինձի հաճելի չերեւար :

ՎԻԲ. Կարելի՛ է արդեօք այնպիսի հնար մը դտնալ որով Պօղոսէն չի հարկադրիմ բաժնուիլ:

ՊՕՂ. Զարմանալի չէ որ կուզէք զիս Վիրդինիային միացընել, եւ անմիջապէս զմեղ իրարմէ բաժնելէն գործի կը սկսիք : Բաց ՚ի ասկէց, սիրելի հայր իմ, դուք ինձի սորվեցուցած չէք որ մարդիկ ամենք եղբայր են եւ ալէտք է զիրար երջանիկ ընելու աշխատին : Եւ կուզէք որ իմ մեծութեանս որակէս զի միջոց մը մ' ըլլան՝ իմ նմանիքս ստակով զընեմ :

ԱԼՅ. (Գեղեցիկ ոգւոյ ազնուական զդացմունք :)

ՊՕՂ. Զէ, տարակոյս մի ունենաք . մեր քրտինք կը բաւեն մեր ապրուստը ճարելու . եւ ապրուստնիս ճարելէն վերջը ուրիշ բանի չենք փափաքիր :

Վիրդինիայն բամպակ կը հեռսէ , եւ եւ Տօմինչոն
մեր սնունդը հողէն կը հանենք , մեր զաւակ-
ներն ալ թող մեր օրինակին հետեւին . եւ ամէն-
քըս համաձայն կօրհնենք մեզ հովանի եւ օդնա-
կան երկինքը , եւ մեր միութեանն առիթ սիրե-
լի ծնողքնիս :

ՎԻՐ · ԱՅՆ՝ Պօղոսն իրաւունք ունի :

ՏԵՍՈՐԸՆ Դ .

ՏՕՄԻՆԿՕ

Բերէ զսեղանն և զսկուտեղս եւայլն , անձեռոց , տերես ,
կերակուրս , բրինձ երեալ , և գեանախնձոր :

ՏՕՄ · ԱՀԱ ամէն բան հոս է : Ուզեցիք որ բաց տեղը
ճաշու նստիք , ահա սեղանը կը պատրաստեմ ,
արեւէն այրելու վախ ալ չիկայ , կարծես թէ եր-
կինք կամաւ ամպոտեր են :

ՊՕՂ · Ավրելի մայր , պատասխան չէք տար . Հայր իմ ,
մօրս հակառակելուս պատճառաւ ձեզ նեղացու-
ցի արդեօք :

ՏԻԿ · Հիմա ճաշի նստինք , եւ վերջը այսօր . . . :

ԱԼՖ · Այսօր ջանանք ամեն բան կարգի դնելու :

ՏՕՄ · Ուրախացէք , որդեակիք , ցնծացէք :

ՎԻՐ · Բայց ակտք է որ Պօղոս միշտ . . . :

**ՊՕՂ · Քու քովէդ չի հեռանայ . թող , հայրս զմեզ կը
հողայ :**

ՏՕՄ · Ի՞նչ կայ . տխո՞ւր էք :

ՎԻՐ · Մայրերնիս կուզէ . . . :

ՏԻԿ · Վիրդինիս , կերակուրի : (Ամէն + նսդին :)

ՏՕՄ. Աեղանին վրայ ամէն գէշ մտածմունքներ մէկ դի թողլու է . (Բաժանէ պէտական :) նախ ձեզի , որովհետեւ ամէնէս աւելի հոգնած էք . . . վերջը տիկնոջս :

ՎԻՐ. Տօմինկօ դու նախ սկսէ ուտել , որովհետեւ ամենէս ծեր ես , եւ մեզմէ աւելի սննդեան սկտք ունիս :

ՏՕՄ. Կը սխալիք , ես ծեր եւ ամէնէդ աւելի խեղճուկ ըլլալուս համար ամէնէդ ալ աւելի վարժ եմ իմ ստամոքսիս հրամայելու . բայց ձեզի պէս երիտասարդներուն ստամոքսը խօսք չի հասկընար :

ՎԻՐ. Մօրս , Ալֆօնսօյին , եւ սիրելի Պօղոսիս կենացը : (Ընդու :)

ՊՕՂ. Վիրդինիս քու գաւաթդ ինձի տուր : Ես ալ այս բաժակս կառաջարկեմ . . .

ՏԵՍԱՐԱՆ Ե .

ՆՈՅՆԻՔ ԵՒ ՊՈՒՐՏՈՆՆԵ

Քանի մը զօրականաց հետ , որ գրամոյ մնառուկ մը բերեն :

ՊՈՒ. Բարի լոյս ձեզ , որդեակիք :

ՏԻԿ. Կղզւոյն տեղակալը . . . ինչ անակընկալ պատիւ . . . կը ցաւիմ որ . . .

ՊՈՒ. Նստեցէք , նստեցէք :

ՏՕՄ. Հրամեցէք , վրան անձեռոց մ'ալ դնեմ որ նստարաննիդ աւելի կակուդ ըլլայ :

ՏԻԿ. Արդեօք կը հաճէիք ներս հրամանել :

ՊՈՒ. Չէ , հոս ալ աղէկ : Այդ օրիորդը , թէ չեմ սրիալիր , ձեր աղջիկն ըլլալու է :

ՏԵԿ. Այս , նոյն իսկ զոր տղայական խանձարուրքնեւ-
րուն մէջ ձեզի ներկայացուցի իմ ապերախտէհօ-
րաքրոջս կողմանէ ինձի նամակ մը բերած օրեր-
նիդ , որ ընտրած ամուսինս ինձմէ ստորին ընտա-
նիքէ մը ըլլալուն պատճառաւ չուզեց բնաւ իմ
կարօտութեանս օդնել : Աակայն հօրաքրոյրս զիս
ձեզի յանձնարարեց , բայց դուք ալ իր օրինակին
հետեւելով , ամենայն ցրտութեամբ կը զրուցենք
կը նայինք . . . ըսելնուդ վրայ , չուզեցի անկէ-
վերջը ձեզի նեղութիւն տալ . . . ուտի :

ՊՕՂ. Մէկ մ'ալ իր ոտքը չի դացիք , եւ աղէկ ըրիք :

ՊՈՒ. Այս ովէ :

ԱԼՖ. Դժբաղդ մը , որ Վիրգինիային հետ մեծցած է :

ՊՈՒ. Իր վարմունքէն ալ դեղացի ըլլալը կերեւնայ ,
բայց Վիրգինիայն . . . :

ՊՕՂ. Վիրգինիայն Բնշպէս կերեւայ ձեզի :

ՊՈՒ. Թէպէտ եւ հայրը միջակ աստիճանի մարդ մ'է ե-
ղեր , բայց մօրն ազնուականութիւնը Վիրգինիա-
յին դէմքին վրայ կը վայլի :

ՊՕՂ. Ազնուականն ու ռամիկը Բնշպէս կը բնաք դէմ-
քերնէն զանազանել :

ՊՈՒ. Քեզի հետ շաղակրատելու ատեն չունիմ :

ՏԵԿ. Կղղւոյս տեղակալին հետ մեծարանօք վարւէ :

ՊՈՒ. Տիկին , ձեզի ուրախ լուր մը աւետելու եկայ , եւ
միանդամայն ձեզի հասկրցունելու համար որ թէ
ցարդ տառապանք քաշեցիք՝ սոսկ ձեր դէշ վա-
րուցը պատճառաւն էր : Զեր հօրաքրոյրէն նամակ
մը ընդունեցայ , կերեւայ թէ ծանր հիւանդու-
թեամբ մը պառկելով , իւրառաջին եւ ըստ ինք-
եան արդար խառութենէն զիջեր , եւ առաջադ-

բեր է որ բոլոր իւր հարատութիւնը Վիրդինիային թողու :

ՊՕՂ. · Ո՛ Վիրդինիայդ իմ, ի՞նչ ուրախավի լուր :

ՊՈՒ. · Դու Վիրդինիային հետ ի՞նչ վերաբերութիւն ունիս :

ՏԻԿ. · Որովհետեւ պղտիկուց 'ի վեր միատեղ մեծած են :

ՎԻԲ. · Եւ հիմա ալ . . . :

ՏԻԿ. · Այսպիսի ակնածելի անձանց առջեւ ալէտք է որ դուք լուռ կենաք :

ՊՈՒ. · Ուստի ձեր հօրաքոյրը կուզէ որ Վիրդինիայն անմիջապէս ֆարիզ խրկուի, որ հոն իւր աստիճանին վայելուչ կրթութիւն մը առնէ. ինձի երկու հազար դաշեկան խրկեր է որպէս զի Վիրդինիային զգեստի եւ ճամբորդութեան ծախուց գործածուի : Վիրդինիայն ընդունելու համար մասնաւոր նաւ մ'ալ խրկած է, ուստի առանց յասրաղելու ալէտք է որ պատրաստութիւն տեսնայ :

ՏԻԿ. · Ուրեմն Վիրդինեայն . . . :

ՊՕՂ. · Ի՞նչպէս :

ՎԻԲ. · Մայր իմ :

ՏԻԿ. · Լոեցք :

ԱՄՖ. · (Ի՞նչ չարագուշակ պատահար :)

ՏՕՄ. · Մեր ազնիւ օրիորդէն ուրեմն զորկ պիտի մընանք :

ՊՈՒ. · Իր օգտին համար է :

ՎԻԲ. · Զէ, դուք ինձմէ զորկ չէք մնար. ես միշտ մօրըս հետ, միշտ Պօղոսին հետ պիտի մնամ:

ՏՕՄ. · Քանի է, յարգոյ տեղակալ լսեցիք :

ՊՈՒ. · Լոէ, ասլուշ ճճի, դուք անասնոց ալէս բրշին եւ

Եւ խոփին վարժած էք, եւ ձեր կերած վայրի կաղիններէն զատ ուրիշ բան մը զանազաննելու կարողութիւն չունիք :

ՊՕՂ. Կարծեմ կուզէք կատակ ընել :

ՊԲԽ. Փեղի հետ կատակով խօսելու շափ ինքինքս չեմ ցածցներ :

ՏԻՎ. Պօղոսին կարծիքն այն է որ այսպիսի փոփոխական եւ մրրկու եղանակի մէջ ճամբորդութիւն ընելը խոհեմութիւն չէ :

ՊԱԽ. Զէի գիտեր որ նաւուղղութեան արհետուն ալ կը հասելընաս, երկայն մտածել պէտք չէ, Վիրդինիայն պէտք է որ երթայ :

ՊՕՂ. Ի՞նչպէս շմտածեմ. Վիրդինիայն մեզ չկրնար թուղուլ: Ահա հոս իւր մայրը, Ալֆօնսօն, Տօմինկօն եւ վերջապէս ես իսկ, ամենքս ալ Վիրդինիային համար տագնապի մէջ ենք, Մեր գործերը իրմակ կը կենդանանան, եւ իրեն ուղղուած են: Հարցուցէք, հարցուցէք առենուն, եւ կը տեսնաք որ մեր ամենուս ալ երջանկութեան առիթը մի միայն Վիրդինիայն է: Կաշխատինք. բայց Վիրդինիային համար կաշխատինք. վախով կը գողանք, եւ Վիրդինիային համար միայն կը գողանք: Զէ, ուտէր, չէ. մեզ այս կոկիծը մի տաք: Թէ որ իւր բարեգութ հօրաքոյրը կուզէ որ Վիրդինիայն երջանիկ ըլլայ, թող իւր հարտառութիւններն հոս խրկէ. եւ մեք առենքս իւր առատաձեռնութեան գովեստներուն արձագանքը մինչեւ երկինք կը հասցւնենք. բայց թէ Վիրդինիայն հարտացնելու համար, պէտք է որ զինքը մեզ մէ կորդէ, զրուցէ իրեն թէ Վիրդինիայն երջա-

նիկ է այս լեռանցս մէջ , բանի մը կարօտութիւն չունի . եւ թէ մեք ամենքնիս ինքղինքնիս իրեն նուիրած ենք եւ Վիրդինիայն կը սղաշտենք , եւ զինքը յաւիտեան չիկորանցունելու համար պատրաստ ենք մեր կեանքը դոհելու .

ՊՈԽ . Մեղք որ լեռնցի ես . ապա թէ ոչ բաւական իսելքի տէր մարդ կըլլայիր :

ՊՕՂ . Եւ ի՞նչ . միթէ սիրու մ'ունենալու համար հարկ է քաղաքը ծնած ըլլալ . Վիրդինիայն իմս է

ՎԻԲ . ինչպէս ես Պօղոսին

ՊՈԽ . Կարծեմ բաւականէն աւելի թոյլ տուի որ գլուխ ցաւցնէք . ուստի Տիկին հարկ է որ Վիրդինիայն անմիջապէս ինձի յանձնէք : Տէրութեան կողմանէ հրաման ունիս որ եթէ հակառակիք բռնի առնեմ տանիմ . յուսամ որ զիս չէք հարկադրէր խստիւ հետերնիդ վարւելու , եւ թէ որ ձեր աղջկան յաջող բաղդը չի կրնար ձեր տարտամ սիրով շարժել . իմ զինուորներս թերեւո

ՎԻԲ . Մայր իմ :

ՏԻԿ . ի՞նչպէս կրնան յանդգնիլ :

ՊՈԽ . Ամեն բանի կարող կըլլան , եթէ դուք չուզէք հրնազանդիլ . եւ խուլըլաքբաղդին ձայնին որ ըզ ձեզ վեր կը վերցնէ այն տիղմէն որուն մէջ ձեր անմտութիւնը զձեզ շաղտիած է :

ՊՕՂ . Ո՛հ Վիրդինիա :

ՎԻԲ . Պօղոս , մի վախնար :

ՏՕՄ . Ուրեմն ես քու հետդ կուզամ :

ՊՕՂ . Կարծեալ բռնութիւն պիտի բանեցնեն :

ՎԻԲ . Բայց ես այնչափ սկսի լամ որ

ՊՕՂ . Ո՛հ , ասոնք խուլ են :

- ՎԻՐ · Խափշիկ կնոջ տէրն ալխուլ էր , եւ սակայն իմ
խնդիրքս կատարեց :
- ՏՕՄ · Փութա , չորս հինգ անուշիկ խօսքեր առջեւը շա-
րէ , նայինք :
- ՎԻՐ · Ո՞ տէր , դուք . . . :
- ՏԻԿ · Վիրզինիա ետ քաշուէ . . . : (Պատրուիրելու:)
- ԱԼՖ · Պօղոս հետս եկո՞ :
- ՎԻՐ · Մայր . . . :
- ՊՕՂ · Իմս է վիրզինիայն :
- ՊՈՒ · Վիրզինիայն պիտի . . . : (Նշանալու:)
- ՏԻԿ · Ներեցէք , ո՞ տէր , Վիրզինիայն իր մօրը պիտի հը-
նազանդի : (Այստ գնան ՚ի հիւն:)

ՎԵՐՃ Բ · ԱՐԱՐՈՒԱԾՈՅՑՆ



ԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏԵՍԱԲԱՆ Ա.

ՏԻԿԻՆՆ ԼԵԹՈՒՄ, ԵՒ Պ ՈՒՐՑՈՒՆՔ

ՏԻԿ · Ներեցէք, ու տէր, դառն է սիրելի, առաքինի
աղջիկս զրկէս հեռացնել եւ ֆարիզ զրկել:

ՊՈՒ · ի՞նչ մեծ զոհ, ի՞նչ դժուար բան է եղեր իշխա-
նուհի ըլլալ: Զեր աղջկանը ի՞նչ կենաց ոլայման
պատրաստեր էիք. ու սիտի ըլլար իւր ամուսինը.
այն խելացի լեռնցին թերեւս՝ որպէս զի խեղ-
ձութենէն երկուքն ալ հիւղի մը մէջ մեռնին: Ան-
հաւասար ամուսնութեան յանցանքը դուք գոր-
ծած ըլլալէն վերջը, որով հորկադրուեր էք զա-
լու այս ամայի լեռանց մէջ ձեր նախատինքը ծած-
կելու, կուղէք որ հոս ձեր աղջիկն ալ թաղէք:

ՏԻԿ · Այս մտածմունքու միայն ոլարտաւորեց զիս դառն
բաղդիս զլուխս ծռելու . . . բայց ով Աստուած:

ՊՈՒ · Բայց փոխանակ հառաչելու ինչո՞ւ դուք ալ ձեր
աղջկան հետ չէք երթար, եւ ձեր հօրոքքոչ ոտ-
քը իյնար . . . :

ՏԻԿ · Հօրաքոյրս կատէ զիս: Միայն Վիրդինիայն ուղեր
է, եւ անանկ կարդադրեր է ամէն բան որ եթէ
ընդդիմանամ բռնի Վիրդինիայն իր մօրմէն բաժ-
նեն: Ո՞հ, խիստ քիչ անդամ կը հանդիսի որ հա-
րուստները սիրու ունենան:

ՊՈԽ. Եւ կանայք ալ ուզեղ ունենան :

ՏԻԿ. Թշուառներուն լեզուն միայն թշուառք կը հասկը-նան :

ՊՈԽ. Չեմ ուզեր կընոջ մը հետ բարոյականի վրայ հա-կաճառութիւն ընել : Եկէք նաւը տեսէք, կըզզ-ւոյս եզերքը երկաթ նետած է : Տեսնաք վիրգի-նիային համար ինչեր պատրաստել տուեր են, հետը ընկերանալու կանանց հետ ծանօթութիւն ըրէք, եւ ան առենք կը հասկընաք որ ձեր զդա-յուն խորհրդածութիւնները պարզ կերպով ցնորք մի են այն թշուառականներուն համար որ ա-նցի ծուխով կը յագենան . Եւ թէ երկրիս վրայ հարստութենէն զատ ուրիշ բարիք չիկայ, եւ կէք :

ՏԻԿ. Եւ ես վիրգինիայս ալ պիտի չկարենամ տեսնալ :
(Ցած յայնիւ :)

ՏԵՍԱՐԱՆ Բ .

ՊՕՂՈՍ առանձին :

ՊՕՂ. Ո՞հ Աստուած . . . ինչպէս սիրոս կը արոփէ . . .
կ'ալեկոծի . . . : Ցաւը ոչ երբէք աչքէս արցունք
մը քաղած էր :

ՏԵՍԱՐԱՆ Գ .

ՏՕՄԻԿՈ ԵՒ ՆՈՅՆ

ՏՕՄ. Տէր իս, մէկ մը տեսնայիր . . .

ՊՕՂ. Ի՞նչ բան :

ՏՕՄ. Ովկրնայ պատմել . ի՞նչ կտաւեղէններ . բայց մեր
կտաւներուն սլէս բամպակէ չէ . մեր առուակնե-
րուն ջուրերուն սլէս փայլուն , արծաթէ աստղե-
րով զարդարուն , վերջապէս մեր ծառերուն տե-
րեւներէն աւելի բարակ կտաւեղէններ :

ՊՕՂ. իսկ վիրգինխայն : (ԱՅՀԱՅԱՖ :)

ՏՕՄ. Հաճութեամբ աչքը այն կրօւեղէններուն կը դար-
ձըներ , եւ կարծես թէ մեզի ընծայ ընելու համար
գնել կուղէր :

ՊՕՂ. Արդեօք դո՞ւրս սլիտի երթայ :

ՏՕՄ. Զը դիակմ :

ՊՕՂ. Զինքը տեսնալ կուղէի . . . բայց տեղակալը լսե-
լով որ տիկին Լաթուրին հարազատ որդին չէի՝
զիս վոնտեց : Բայց դու Տօմինկօ դու ըսէ ինձի ,
այդ ի՞նչսլէս կըրնայ ըլլալ . ես կարծէի միշտ . . .

ՏՕՄ. Խոհեմութեամբ մինչեւ հիմա ճշմարտութիւնը քե-
զի դաղտնի պահեր էինք , մայրդ նրիտանխացի
էր , եւ յիրաւի թշուառ կնոջ մէկն էր . սրիկային
մէկուն սիրահարուելով անոր հետ հօրը տունէն
միախեր եւ հոս եկեր էր , բայց հայրդ քիչ ատե-
նէն մատնութեամբ զինքը երեսի վրայ եւ անօդ-
նական թողած ըլլալով , հոն տեղի հիւղը քաշ-
ուած իւր մոլորութեանց վրայ կուլար , եւ իմ
տիկնոջս հոս զալէն տարի մը առաջ հոն ծնաւ ըզ
քեզ , եւ հոն վախճանելու ատեն զքեզ յանձնեց
տիկին Լաթուրին , զոր ցարդ քեզի մայր կար-
ծէիր :

ՊՕՂ. Եւ զոր միշտ իրրեւ մայր սլիտի մեծարեմ , քանի
որ երկինք զիմ դժբաղդ մայրս գրկելու շնորհքն
զլացան ինձ , եւ բարբարոս հայր մը տուին ինձ :

ՏԵՍԱՐՈՒՆ Դ.

ԱԼՖՈՆՍՕ

Այս վերջին խօսքերն յետ լաւը

ԱԼՖ · Ո այդ ըստու քեզ , ով Պօղոս :

ՊՕՂ · Իմ սիրելի Տօմինկոս :

ԱԼՖ · Ինչով , դու . . . :

ՏՕՄ · Խօսակցութեան կարգը անանկ սլահանջեց : Ալ-

դէն Տիկին Վաթուրը տեղակալին այս նկատմամբ
ակնարկութիւն մ'ըրած էր , մնացորդն ալ ես ը-
սի . . . :

ԱԼՖ · Խեղճ Պօղոս :

ՏՕՄ · Բայց մի վհատիր , թէ որ հայրդ սրբկային մէկն
էր , սակայն մենք հոս ենք , զքեզ զաւակնէս ա-
ւելի կը սիրեմ , եւ . . . բայց տեղակալն նաւուն
վրայ ինձ կըսպասէ . նայէ որ ուրախ եւ զուարթ-
ըլլաս , լաւ ու կոծէն ի՞նչ օգուտ , — երթամք :

(Գհայ :

ՊՕՂ · Ուրեմն Վիրդինիայն կուզեն ինձմէ յափշտակել .
բայց ես ապահով եմ որ Վիրդինիայն զիս երեսի
վրայ թողլու չափ անդութ չի կըրնար ըլլալ :

ԱԼՖ · Որդեակ իմ , թոյլ տուր որ մինչեւ կենացս վերջն
զքեզ սոյն անուամբ կոչեմ . . . :

ՊՕՂ · Եւ ես քեզ միշտ ինձ հայր սլիտի կոշեմ . բայց ո-
րովհետեւ թշուառ աստիճանի մէջ ծներ եմ ,
սկզբ է որ իմ սիրելի Վիրդինիայէս բաժնուիմ :

ԱԼՖ · Վիրդինիայն ազնուասոհմ է , իսկ դու տարաբաղդ
եւ մեղապարտ կնոջ որդի :

ՊՕՂ · Հօրս յանցանաց միթէ հաղորդն եմ ես , եւ անոր

Համար հարկ է որ Վիրդինիայն կորսնցնեմ: Պէտք
է որ բաժնուիմ անկից զոր պաշտեմ յետ Աստու-
ծոյ, վասն զի հայրս յանցաւո՞ր է: Դուք ինձ չէ-
իք ըսեր, թէ առաքինութիւնը իւր վարձքը իր
մէջը կը դտնայ: Թէ յանցանքը յանցաւորին պատ-
ժովը կը լուծուի: արդեօք դուք խարեցիք զիս,
թէ չէ բնութիւնն անգամ Պօղոսին համար իւր
կարգը վրդովից: Ըսէք ամենքս ալ սիրտ մի շու-
նի՞նք մեր լանջաց մէջ: աղքատէն աւելի հա-
րուստք ի՞նչ ունին, ինչ ունին ազնուականք երկ-
րագործներէն աւելի: Ասոնք չե՞ն ձեր թելադ-
րած խրատներն, ձեր տուած դասերն ասոնք չե՞ն
արդեօք: Ինչպէս հիմա բոլորովին հակառակ կեր-
պով կը խօսիք, եւ կուզէք համոզէլ զիս թէ ա-
նարատ սիրոյ մը զօրութիւնը պէտք է որ դլուխ
ծոէ նախապաշարեալ ընկերութեան մը:

ԱՅՖ. Բարեկամ, բնաւ այդպէս խօսիլդ չէի լսած:

ՊՕՆ. Իմ ցաւոցս ձայնն է որ կը լսես, ձայն :

ԱՅՖ. Կից, բայց "չ բանադատութեան: Վիրդինիայն
գուստը է Լաթուր Տիկնոջ, եւ իբրեւ Աստուծոյ
փոխանորդին պէտք է որ մօրը հնազանդի: Ան-
հուն ժառանգութիւն մը սլատրաստուած է Վիր-
դինիային: պէտք է որ Փարիզ երթայ, քանի մը
տարի հոն մնայ, վերջը հոս կը դտոնայ եւ այն-
պիսի ստացուածոց տէր՝ որ ապահով ապրելու
համար քու եւ ուրիշին աշխատութեանը կարօ-
տութիւն չունենայ: Այն ատենն, ինչպէս որ
մայրը խոստացաւ, Վիրդինիայն քուկդ է, որդ-
եակ իմ, զգօնութեան ձայնին մտիկ ըրէ: Հան-
դիսած դէպէքերը աղէկ նկատէ, մի արտնջար

- Նախախնամութեան դէմ . ցուցուր թէ մարդ ես ,
թէ առաքինի , եւ թէ քու հայրդ կը սիրես .
- ՊՕՂ . Ուրեմն Վիրդինիայն . . . :
- ԱԼՖ . Այս լուրն եկայ քեզ հաղորդելու . արիացիր .
- ՊՕՂ . Ի՞նչ լուր . . . : (Ահաբեն :)
- ԱԼՖ . Բռնութեան անհնար է հակառակիլ . Վիրդինիայն
քիչ մատենէն գուրս երթալու է . սիրոս մի վրշ-
տագներ , եւ քու հլութենէդ ամէն աղէկութիւն
սպասէ : (Թշուառ երիտասարդ , իմ արցունքովս
շեմ ուղեր քեզ վհատեցնել) (Մէնին :)
- ՊՕՂ . Բռնութեան մի հակառակիր . . . Վիրդինիայն իմ
քոյրս էր . . . եւ ոչ եւս է . . . խօսք տուին որ
ինձ կին ըլլայ . . . արդ զրկացս մէջէն կը կոր-
զեն . . . :

ՏԵՍԱՐԱՆ Ե .

ՎԻՐԴԻՆԻԱ (ԶԱՐԴԱՐԱՆ ՇՓԵԿԻՆՆ, ԱՅԼՊԱՐԱ) ԵՒ ՆԱՅՆ

- ՎԻՐ . Պօղոս . . . Պօղոսդ իմ . . . դու ինձմէ կը փախ-
չիս . քու Վիրդինիայէդ կը խուսափիս :
- ՊՕՂ . Իմ . . . ոչ ոչ եւս իմ . . . օրիորդ , դուք . . . :
- ՎԻՐ . Ի՞նչ անուն է այդ :
- ՊՕՂ . Ինչ որ ֆարիզ գացողի մը սրատկան է , այն անունն
որ զքեզ իմ քավէս կը հեռացնէ : Գացէք , աղնուա-
կանացէք , հարստացէք , օրիորդ լաթուրի փառա-
ւոր անուամբ ոլանծացէք . . . մոռացէք ձեր Վիր-
դինիա ըլլալն . . . իսկ Պօղոս միշտ նոյն բիրս
անտառարնակ Պօղոսը պիտի մնայ . բայց իւր սիր-
ուր , իւր խոստմունքները միշտ հոս (Սբան) են .

Եւ երկրիս բովանդակ հրապուրանքը չեն կրնան
հոնկից ջնջել :

ՎԻԲ · Բայց ի՞նչու այս անգութ յանդիմանութիւններն . . .

ՊՕՂ · ինչու . Հարցուցէք, Հարցուցէք ձեր սրտին թէ որ
ձեր մեկնելուն կանխազէտ չէ : Ո՞չ զրուցէ, զր-
ուցէ ինձնոմէ բաժնուիլդ որ մտածես չես զգա՞ր
որ սիրտդ կուրծքէդ կը փրցնեն . ծովուն վտանգ-
ները աչքդ չե՞ն սուկացներ, դու որ ծովուն շարժ-
մունքն տեսնելով կը զողայիր : Վիրգինիա, Վիր-
գինիա, դու զեռ նոյնն ես, թէ չէ ուկւոյ հրա-
պոյրը արդեօք ազնուական զգացմունքներդ փր-
թացուց :

ՎԻԲ · (Լաւ) Պօղոս . . . սլարտքս կը հրամայէ ինձ որ
մօրս հնաղանդիմ :

ՊՕՂ · Բայց այդ մայրը մեզի պէս սիրտ մ'ունէր, եւ սիր-
տը յաղեցնելու համար, Հարստութիւնը թողուց,
ազնուականութիւնը հոգը չեղաւ, եւ հիմա ի՞նչ
կը պահանջէ . ինչ զո՞հ կուզէ երկու հոգիներէ որ
իրարու հետ ապրելու համար ծնած են : Այսըզ-
գեստները որ քու զեղեցկութիւնդ աւելի դուքս
կը ցաթկեցնեն, ապականեցին քու սիրտդ . Փա-
ռասիրութիւնը քան զԱլֆօնսօն, Տօմինկօն, քան
զմայրդ, քան զՊօղոսը քեզ ընտրելի կընէ այն
ազգականդ որ անշուշտ երկաթէ հոգի մի ունի,
(Լաւ) որովհետեւ այսպիսի անգութիւն մը կը
պահանջէ :

ՎԻԲ · Պօղոս մի լար . . . ես թերեւս . . . մայրս հրա-
մայեց որ երթամ . . . յանուն Աստուծոյ սլատ-
ուիրեց ինձ . . . պէտք է որ հնաղանդիմ . բայց

սիրտս . . . , ո՞չ, Պողոս, ո՞ր էր թէ կարենայիր
սրտիս խորը թափանցել

ՊՕՂ. Ես իմ սիրտս դիտեմ . . . անդամթ, զիս թողլու
համար այնչափ փաստեր կրցար գտնալ, իսկ հոս
մնալու համար բնաւ փաստ մը չի գտա՞ր . . .
տկար ոգւոյ վրայ հարստութիւնն եւ ազնուա-
կանութիւնը զարմանալի ձգողութեան զօրութիւն
մը ունին :

ՎԻԲ. Զէ, ես չեմ փափաքիր

ՊՕՂ. Միթէ հոն, այն երթալու նոր աշխարհքիդ մէջ պի-
տի գտնան մէկը որուն կարենաս տալ եղրօր սի-
րելի անունն, այն անունն որ ինձ դրժեալ է հի-
մա :

ՎԻԲ. Ես Պօղաէն զատ ուրիշը բնաւ չի պիտի սիրեմ :

ՊՕՂ. Պօղոս՝ փափուկ, զգացուն սիրտ մը քեզի կը նուի-
րէ, բայց ռամկորդի ըլլալուն պատճառաւ կը մեր-
ժուի, երեսի վրայ կը թողուի :

ՎԻԲ. Ես մահուամբ միայն կրրնամ թողուլ զքեզ :

ՊՕՂ. Ո՞ր երկրին մէջ յուսաս որ երջանիկ ըլլաս, բայց ե-
թէ հոն ուր ծնած ես. ո՞ւր յուսաս գտնալ աւե-
լի հաճոյ ընկերութիւն մը, քան զքեզ սիրողնե-
րուն ընկերութիւնը

ՎԻԲ. Եւ որոց գիրկը նորէն պիտի դառնամ :

ՊՕՂ. Ի՞նչալէս պիտի կարենաս ասլրիլ առանց մօրդ փա-
ղաքշանացը . ի՞նչ մեծ կոկիծ պիտի ըլլայ իրեն
թէ որ կենաց վերջին օրերուն քեզ իւր քովը չու-
նենայ . եւ ես դժարդու, ով անդութ, ո՞չ, ես
որ միայն քեզի համար կապրիմ, ի՞նչ պիտի ըլ-
լամ. Քու բացակայութեանդ միջոցին ամէն ան-
գամ որ մայրդ լայ, ես ի՞նչ պիտի ըսկմ իրեն :

ի՞նչ ըսեմ Պօղոսին, Երբոր արեւը ծագէ եւ Վիրզինիայն իւր հետք չըլլայ: Երբոր երեկոյն հասնի Վիրզինիայն իւր հետք չըլլայ, ի՞նչ զրուցեմ այս երկու ծառերուն որ մեր ծննդեան օրը տնկուած են, որոնց վրայ մեր անունները փորուած են, եւ մեր բարեկամութեան յարատեւ վկայք են եղած: Ի՞նչ ըսեմ իրարու հետ հիւսուած այն ճիւղերուն (գուշակք սիրոյն որ մեզ մինչեւ ցմահ պիտի միացնէր) եւ զոր շողոքորթ փառասիրութիւնը անգթութեամբ կը խորտակէ . . . Ճի գիտեմ թէ քու սիրտդ կը զօրէ ինձմէ բաժնուելու, բայց իմ սիրաս Ճի դիմանար: Ողջամբ կացէք ո՛ հովիտք ողջամբ կացէք լերինք, բարեաւ մնացէք հայրենիք, Տօմինիօ, Ալֆօնսօ, ես ահա կը չուեմ . . . կերթամ . . . Վիրզինիային հետ, իրեն ընկեր, հետեւորդ, իրեն գերի. Երանի՛ թէ Վիրզինիային ոտից առջեւ ներելի ըլլար ինձ վերջին շունչս աւանդել:

ՎԻՐ · Պօղոս, իմ արիութիւնս մի նուազեցներ:

ՊՕՂ · Քու արիութիւնդ Ճի նուազեցնեմ. Վիրզինիայն ինձմէ յափշտակելու չափ սիրտ ունենալէն վերջը միթէ արիութեան կարօտութիւն ունիս, Ոնզութ, դու մանաւանդ զիս կը վհատեցնես, ես պէտք է Վիրզինիայէն քաջալերութիւն խնդրեմ:

ՎԻՐ · Գիտցիր որ քեզի համար ութ տարիի չափ դուրս կերթամ, որպէս զի կենաց սլայմանս բարելաւցընեմեւ 'ի դարձին դու իմ ամուսինս ըլլաս:

ՊՕՂ · Եւ Ես առանց քեզի պիտի կարենամ ութ տարի ապրիլ:

ՎԻՐ · Դու իմ մոտածութեանցո առարկայն պիտի ըլլաս,

միշտ . թէպէտ հեռի բայց սիրտս Պօղոսին հետ
սլիտի ըլլայ , իմ միակ ընկերու սլիտի ըլլայ այս
քու սկասելերդ զոր մեր սիրելի հայրն ինձի հա-
մար օրինակեց . քու անունդ դրոշմած է իմ սըր-
տիս մէջ , ինչպէս աստեղք երկնից հաստատու-
թեանց վրայ : Ո՞հ , դու չես գիտեր թէ որչափ
ինձի դառն է թողուլ զքեզ , չես գիտեր թէ որ-
չափ ծանր է ինձի հոսկից մեկնելու որոշմունքս :

ՊՕՂ. Բայց որոշեցի՞ր վերջապէս :

Վ.Ի.Բ. Իրրեւ անհրաժեշտ սկարտաւորութիւն մը , սկարտք
հնազանդութեան . ով գթած իմ բարեկամ , հա-
ւասարիմդ իմ ընկեր , դու օղնէ ինձ որ այս մեծ
զործս 'ի գլուխ հանեմ . . . քու քովդ առաքի-
նութիւնս կը նուազի , սէրը միայն կը խօսի սըր-
տիս . . . զիս հոս կ'արգելու . . . կը բռնադա-
տէ :

ՊՕՂ. Կը բնանմ յուսալ որ . . . :

Վ.Ի.Բ. Վ ճռէ ի՞նչ կուզես որ զործեմ :

ՊՕՂ. Կը մնան Պօղոսին հետ :

Վ.Ի.Բ. Քու վաղաքշանացդ կարող եղայ ընդդիմանալու ,
բայց ցաւուդ չեմ կընար դիմանալ :

ՊՕՂ. Վ իրզինիա :

Վ.Ի.Բ. Մտերիմդ իմ :

ՊՕՂ. Պիտի երթա՞ս :

Վ.Ի.Բ. Ի՞նչ գիտնամ :

ՊՕՂ. Իմ հետս է :

ՊՕՂ. Բայց կը թողուս զիս :

Վ.Ի.Բ. Երկինք . . . :

ՊՕՂ. Սակայն դու :

ՎԻԲ · Ես Պօղոսէն զատ ուրիշինը չեմ ըլլար , բայց պէտք
է որ երթամ ,
ՊՕՂ · Ես ալ Վիրդինիային հետ կերթամ : (Ուղացամբ :

ՏԵՍԱՐԱՆ Զ .

ՏԻԿԻՆՆ ԼԱՅՈՒՄ ԵՒ ՆՈՅՆՔ

ՏԻԿ · Ո՛հ , որդեակ իմ , եթէ դու ալ մեզ թողուս , մենք
ի՞նչ կը լլանք :

ՊՕՂ · Որդեակ իմ . Դու իմ մայրս , դու որ միատեղքու
կաթովդ ոնուցեալ երկու անձինք անզթաբար
իրարմէ կը բաժնես , մեզ որ քու ծնդացդ վրայ
կը խաղցնէիր եւ այն ատենէն 'ի վեր լսելով թէ
մեք իրարու համար ծնած ենք , վարժեցանք զի-
րար սիրելու : Խակ հիմա կուզես Վիրդինիային
գրկէն զիս կորդել , ու զինքը բարբարոս Եւրո-
պիոյ երկիրը խրկել , այն երկիրը , որ թշուառու-
թեանցդ մէջ քեզի օթեւան տալու զլացաւ , մինչ-
դէռ Պօղոս իւր քրտինքովը ջանաց քու Դառնու-
թիւններդ մեղմել : Վիրդինիայն իմս է :

ՏԵՍԱՐԱՆ Է .

ՊՈՒՐՏՈՆՆԵ · ՎԵՐ ՃՐ ԱԼՖՈՆՑՕ , ՏՈՄԻԿՈ

ԵՒ ՆՈՅՆՔ

ՊՈՒ · Անմիտ , դու Վիրդինիային վրայ իրաւունք մը
չունիս , իւր աղնուականութիւնը իւր ծնունդը կը

պահանջեն որ ֆարիզ երթայ :

ՊՕԴ. Իմ իրաւոնքներս աւելի զօրաւոր են :

ՊՈՒ. Եւ քու իրաւոնքներդ որո՞նք են :

ՊՕԴ. Մի բնակարան, մի օրրան, եւ սիրտ միաշունչ, աւ պա ուրեմն մի ալ գերեզման պէտք է զմեզ միացընէ : Ուր որ երթայ ես պէտք է որ հետը դամ :

ՊՈՒ. Անօդուտ ջանք :

ՊՕԴ. Արդեօք դու ինձի արդելք ալխոի ըլլաս :

ՊՈՒ. Այս ես :

ՊՕԴ. Ապա ուրեմն ինքզինքս ծովը կը նետեմ, լողալով ետեւէն կերթամ. ծովը քեզի չափ անգութ չէ : Եւ թէ Վիրդինիային քովը ապրելու ինձի թոյլ չի տրուի, ոչ ոք կը բնայ արեգլուլ որ իր աչքին առջեւը մեռնիմ, բայց հեռու քու աչքէդ, ու անգութ մայր : Իցիւ թէ Ովկիանոս որուն քու ազջիկդ կը յանձնես քու բազկացդ մէջ զանի բնաւ ետ չի դարձնէ, փրփրաժայթ ալիքներ բերեն քեզի մեր գրկախառն գիակունքը, յաւխենական խայթ խղճի եւ կշտամբանք քու անգութութեանդ :

ՊՈՒ. Փքուռուցիկ խօսքեր, օդը յաջող է, ճամբայ եւ լանք :

ԱՆՁ. Որդեակ իմ. (Կառեցաւանէ պՊօղու :)

ՏԻԿ. Գուստը իմ, ինչ կընես :

ՎԻԲ. Մայր իմ, յանուն Աստուծոյ պատուիրեցիր ինձ, կը հնազանդիմ, եւ ցաւոցս դառնութենէն կը լնաք հլութիւնո դառել : Ութ ապրուընէ վերջը կը դառնամ, եւ այն ատենը Պօղոսին հետ սիրտի ամուսնանամ : Բարեկամք որ իմ ծննդեանս վկայ եղած էք եւ հիմա իմ տառապանքս ու արցունքներս կը տեսնէք, եւ թերեւս օր մը մահուանս ալ ա-

կանատես ըլլաք, ձեզի կը յանձնեմ մայրս եւ
Պօղոսը: Անհուն է զգացած ցաւերնին, դուք զիւ-
րենք միմիթարեցէք, բարեկամ էք: Եւ դու մայր
որ ինձ երթալ կը հրամայես, նայէ որ ճշմար-
տութեան եւ ոչ թէ սնափառ կրից ճայնն այդ
պատուէրը բերնէդ հանած ըլլայ, որպէս զի օր մը
չի զղաս:

ՊՈՂ. Բայց շուտ ըրէք:

ՎԻՐ. Վայրկեան մ'ալ համբերեցէք: Վերջասլէս մօրմէս
Պօղոսէն սլիտի բաժնուիմ: Բարեկամք խօսքերուս
աղէկ ուշ դրէք: Կերդնում առաջի Աստուծոյ որ
ճայնո կը լոէ, կերդնում հանդէալ ծովուն, որուն
վրայ հանդերձեալ եմ ուղեւորիլ, եւ շնչած օդոյս
վրայ կերդնում որ Պօղոսը, Պօղոսը միայն կը սփ-
րեմ, եւ իւր հարսն օր մը սլիտի ըլլամ եւ կամ
մահուան:

ՊՕՂ. Վիրդինիա, դնա՛.

ՎԻՐ. Պատուիրեմ քեզ, ինձի սլէս սլարտոցդ հնա-
զանդ եղիր:

ՊՕՂ. Երկնային նշոյլ մը կը պատէ զքեզ . . . Բնչ ան-
սովոր արիութիւն

ՎԻՐ. Մայր դրկեմ զքեզ . . զիտէ

ՏԻԿ. Գուստը իմ, Երկինք օրհնեն զքեզ . . . եւ քեզի
պաշտպան ըլլան, մինչդեռ որտովս

ՎԻՐ. Համբուրեմ ձեռքդ . . . Պօղոս :

ՊՕՂ. Վիրդինիա: (Կառավարութիւն, այւանին արգելուան.)

ՎԻՐ. Ո՛ զիտէ թէ նորէն կը տեսնուինք . . . ո՞ւ այն
ատենք

ՊՕՂ. Դերեւս ես մեռած ըլլամ, զոնէ վերջին անդամ

(Դիմու գրիակառնիւ եւ զիայ առնառն :)

ՎԻՐ · Այս . . . ոչ , չի վայլեր . (Անկանի ՚ դիրիւ հօրն :)

ԱԼՅ · Որդեակ . (Զայն ընդառնօբի ՚ ներտուագ :)

ՏՕՄ · Տէր իմ :

ՊՈԽ · Երթանք, նաւը մեղի կըսպասէ :

ՎԻՐ · Պաղոս , Պօղոս : (Մայրն եւ աեղական ընտ ժարշածեւ ՚ ի բաց կարեն չեւ :)

ՊՕՂ · Վիրգինիա Վիրգինիա : (Ազգանու Տօմիս ՚ ի բաց կարեն չեւ :)

Վ.ԵՐՃ Գ. ԱՐԱՐՈՒԱԾԱՌԵՆ

ԱՐԱՐՈՒԻ ԱՆ Դ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՏՕՄԻԿՈ

(Լէտան ծայրէն հեռավիա, նուեւը բիուեւլ:)

ՏՕՄ · Ահա հոն է . . . , դէմքը տժգոյն . . . սիրտս կարծէս թէ կը Փշրի . իրաւունք ունի , շատ իրաւունք ունի . . . Վիրդինիայն կորսնցուց , միթէ դիւրին է համրերել:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏԻԿԻՆՆ ԵՒ ՆԱՅՆ

ՏԻԿ · Ի՞նչ կընէ :

ՏՕՄ · Կայեցէք , հոն լեռան մէկ կողմը կեցած դէու ՚ի նաւը կը նայի :

ՏԻԿ · Կաւը դէռ կը տեսնուի :

ՏՕՄ · Ոչ բնաւ , կարծէս թէ թեւեր ունէր , վայլակի պէս կը վազէր , շատո՛նց կղզւոյն հրուանդանն անցաւ :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱԼՖՈՆՍՈ ՀԵՂԻՆ ԵՒ ՆԱՅՆՔ

ԱԼՖ · Ի՞նչ աղետալի դիսլուած :

ԱԼՖՈՆՏՈ :

ԱԼՖ. Ահա իմ խօսքերս հաստատուեցան :

ՏԻԿ. Ի՞նչ :

ԱԼՖ. Զեր աղջիկը դուրս գնաց եւ ո՛ զիտէ թէ նորէն սլիտի տեսնանք : Պօղոս . . . ո՛հ սիրտս կը կեղեքի , իմ Պօղոսս , իր զգացմունքը կորսնցուցած խենդի ոլէսէ , եւ թէ չի սթափի , ես ալ զաւակ մը կորսնցուցած սլիտի ըլլամ :

ՏՕՄ. Երթամ Պօղոսը գտնամ . . . շիտակը դուք տիկին սլէտք չեր որ երբէք . . . բայց ես անմտին մէկն եմ . . . եւ դուք . . . Պօղոսը անշուշտ զիս սլիտի լացնէ , ես ալ սլիտի լամ . (ԵՌԵԱՅ :

ՏԻԿ. Խղճի խայթեր սիրտս կը կեղեքեն , իմ արցունքս յաւիտեան սլիտի չղաղրին :

ԱԼՖ. Վերահաս վտանգէն վերջն արցունք անօդուտ են :

ՏԵՍԱՐԱՆ Դ .

ՊՈՒՐՑՈՒՆՔ ԵՒ ՆՈՑՆՔ

ՊՈՒ. Ո՞վ կրնար երբէք դուշակել որ Վիրզինխային դուրս երթալը այնչափ վրդովման պատճառ սլիտի ըլլար : Մինչեւ անդամ ես որ ուրիշին թշուառութեանց վրայ երբէք կոկիծ չեմ խմացած , սկսայ կարեկցութիւն ըսուած բանը կենացս մէջ առաջին անդամ ըլլալով խեղճ Պօղոսին վրայ զգալ , եւ դութըս շարժեցաւ :

ԱԼՖ. Յարգոյ տէր , թշուառները ամենէն խուլ եւ կարծրացած սրտերէն անդամ կարեկցութիւն պահանջելու իրաւունք ունին :

ՏԻԿ. Ո՞ւր էր թէ կարենայիք տեսնալ՝ ո՞րչափ կիրքեր այս սիրտս կը տանջեն :

- ՊՈՒ · Բայց Պօղոսին վիճակը անհասկընալի կրծիմն է ինձի
համար : Իր այնպէս սաստիկ եւ միանգամայն սրբ-
տաշարժ կերպով ցնորիլը , իր այնչափ . . . ես
շիտակը չեմ կրնար զգացածս բացատրել , բայց
Վիրդինիայն այնպէս շուտով ճամբայ հանելու հա-
մար վրայ տալուն հազար անդամ զղջացի :
- ՏԻԿ · Բայց մօր մը խղճի խայթը . . . իր աղջիկը մէյ մ' ալ
չի տեսնելու տարակոյմը . . .
- ՊՈՒ · Այս մասին ես խօսք կուտամ որ կարելի եղածին
չափ շուտով ետ կը դառնայ .

ՏԵՍԱՐԱՆ Ե .

ՏՕՄԻՆԿՕ ԼԵՆԵՆ ԱՃԱՊԱՔԵՐՀԵՏԻ ՆՈՅՆՔ

- ՏՕՄ · Տեարք իմ . . . շտապաւ եկայ . . . ձեզի լուր տո-
լու . . . թէ Պօղոսը դէալ 'ի հոս կուգայ :
- ԱԼՔ · Երթամ զինքը դիմաւորեմ :
- ՏՕՄ · Թողէք որ ուզածն ընէ . հետը խօսելու որ ըլլաք ,
աւելի կը դէշնայ . խեղճը տեսնաք , ոչ զոք այլ
կը ճանչնայ . մէկը տեսածին սիս Վիրդինիային
վրայ հարցմունքներ կընէ , թէ սլիտի գայ արդ-
եօք , թէ ուր գնաց , եւ ասոր նման խօսքեր ,
ու վերջը կատաղութիւնը կը բռնէ , եւ անանկ
բռնցի կը զարնէ որ կարծես թէ արմաւենիներն
պիտի փշրէ խորտակէ , վերջապէս իր ըրածին
նմանն այս կղզւոյս մէջ տեսնուած չէ : Թէ որ
Տօմինկոյին կեանքը կարենայ բանի մը ծառայել ,
ահա պատրաստ եմ , միայն թէ Պօղոսը աղէկնայ :
- (Լու :)
- ՊՈՒ · (Այս ալ սիրտս կը շարժէ) Աս ի՞նչ տեսակ բան է . ա-

մենքդ ալ այսօր զմարդ տխրեցնելու ճարտարու .
թիւնն ուսկից մէջ տեղն հանեցիք :

ՏԻԿ · Ահա ծանրուքայլ հոս կուգայ, խեղճ որդեակ . . .
չեմ կըրնար իւր այս դէմքը տեսնելու զօրել . . .
ո՛հ վիրդինիա, վիրդինիա :

ԱԼՖ · Հիմա ջանալու ենք որ արիութեամբ զինուինք, եւ
մեր ձեռօք նիւթուած չարիքը մեղմացնենք :

ՑՕՄ · Ահա նոյն ինքն — հեռացէք :

ՊՈԽ · Աչքս վրան դառձունելու չեմ համարձակիր :

ՏԻԿ · Աիրտոս կըսալատի :

ԱԼՖ · Կայինք դէպ ՚ի ո՞ր կերթայ, քիչ մը ետ քաշուինք :

ՏԵՍՈՐԾՆ Է :

ՊՕՂԱԾ

Լէռան ծայրը՝ իւ իւնայ, չուշը սուսը իւնգայ :

ՊՕՂ · Վիրդինիա . . . Վիրդինիա, դու ինձի չես պա-
տասխաներ . . . ո՛հ իրաւ է որ կը քնանաս . դի-
շերը կը մօտենայ . . . եւ դու դէռ չի տեսար քու
ընկերդ, քու բարեկամդ . քնացիր, քնացիր հան-
գարտիկ . . . եղբայրդ քեզ կըսալատէ . . . կըսալա-
տէ, եւ որչափ ատեն ալ . . . ինչ կը յիշեմ . . .
ով պատիր ցնորք . . . գնաց . . . Վիրդինիայն
դուրս գնաց . ու զիս կըցաւ երեսի վրայ թողուլ .
իմ քոյրս էր, եւ թողուց զիս : Զէ - քու մայրդ,
այն գաղանը, իր աղջիկը կըցաւ մոռնալ, այն . .
բայց ան ինքը չէ . . . ես ալ բնաւ զինքը չպիտի
տեսնամ . . . Վիրդինիայն գնաց . . . գնաց . . .

արձագանգն իմ ճայնիս դարձուած կուտայ . . .
աւանդ գնաց :

ՏԻԿ · Ով տեսիլ աղեկէզ :

ՏՕՄ · Զայն մի հանէք . աւելի կը ցնորի :

ԱԼՖ · Խեղճ պատանի , սիրտ չեմ ըներ ցնորեալ վիճակէն
զինքը սթափելու :

ՊՕՂ · Լսեցի . . . այո՛, չեմ խարուիր , իր ճայնն էր որ
հնչեց ականջիս . . . զիս կանչեց . . . եւ դու ով
ես (— Ալֆօնս) ո՛ բարի մարդ , ըսէ , ըսէ զինքը
տեսա՞ր : Ես լսեցի իր ներդաշնակ ճայնն որով զիս
կը կանչէր .. հիմակ ալ դժկամակութեամբ կը սպահ-
ւրտի : Զրուցէ որ դայ , իրեն մխիթարական բա-
ներ ունիմ ըսելու . . . մայրը ըսաւ թէ , Վիրդի-
նիայն իմ քոյրս չէ , բայց ինձի հարս սլիտի ըլլայ .
կարծես որ այս լուրը զինքը չի՞ մխիթարէր :

ԱԼՖ · Ո՞նչուշտ , եւ ես . . .

ՊՕՂ · Այո՛ դու ամենուն իմաց տուր թէ Պօղոսը Վիրդի-
նիայն սլիտի առնէ , կանչէ Ալֆօնսօն իմ սիրելի
հայրս , կանչէ Տօմինկօն . . . :

ԱԼՖ · (Ի՞նչ է մարդս , երբոր խելքը ցնորի :)

ՊՕՂ · Հոս , հոս եկու . տես մեր անունները միատեղ
դրուած են այս ծառերաւն վրայ , մենք ալ այս-
պէս իրարու սերտ սլիտի միանանք եւ այսպէս ալ
մէկ տեղ սլիտի մեռնինք :

ԱԼՖ · Ետ կեցէք . (— Քիչն էւ — այս :)

ՊՕՂ · Ի՞նչ բազմութիւն . . . իմ հարսանեացս եկացք . . .
ամէնքդ ալ կուրախանաք որ Պօղոսը Վիրդինի-
ային փեսայ եղաւ . . . ամէնքդ ալ խմբովին տ-
նոր ուրախութիւնը տեսնալու դիմեցիք . . . եկէք
զիրկս . . . սլաղտուինք . . . : Զէ , Վիրդինիա-

յին մայրն ու տեղակալը թող այս հարսանեացա
շիգան . Այն բարրարոսները վիրդինիայն ինձմէ
յափշտակել կուզէին . . . ես կըսէր , ես Պօղոսինն
եմ . . . վիրդինիա . . . լոռթիւն կը տիրէ . . .
վիրդինիա . . . ուր է վիրդինիայն :

ԱԼՖ . Որդեակ խմ : . . .

ՊՕԴ . Որդեակ . . . չէ , այլ շիկան որդիք , քանի որ այլ
շիկան մայրեր . . . այդ անդութները երկուքն ալ
մէկ օրրանի մէջ կաթողին կը սնուցանեն , կը
պատուիրեն որ զիրար սիրեն , անոնք ալ զիրար կը
սիրեն , իր սկաշտեն . Եւ սիրոյ գործը կատարելու-
թեան հասնելու վայրկենին , զանոնք իրարմէ կը
զատեն , կը բաժնեն . . . զանոնք . . . ով բնու-
թեան սոսիս մահկանացուք , ես զձեզ կատեմ ,
ձեզմէ կը գարշիմ . . . այլ հաւատք շիկայ - շիկայ
ճշմարտութիւն . հարստութիւնը , ազնուակա-
նութիւնը , հպարտութիւնը ամէն բան կը լափէ :
(Վայ վիրդինիային անունը գրառած ծառը իւ Գրիէ :)

ՏԻԿ . Ո՞հ շատ իսկ այս վայրկենիս կըզգամ այս սոսկալի
ճշմարտութեան զօրութիւնը :

ՊՈՒ . Արդեօք դեղ մը ճարելն անկարելի՞ է :

ԱԼՖ . Ո՞հ . սրտի ցաւոց դեղ՝ մահն է միայն :

ՏԻԿ . Ուրեմն սիմոնի հարկադրիմ . . . :

ԱԼՖ . Անսալ զգօնութեան խրատուց - Եւ թէ մինչեւ հի-
մա ձեր երջանկութիւն կարծած փառասիրութեան
ականջ դրիք , հիմա ալ բոլորովին յուսահատու-
թեան անձնատուր մի ըլլաք : Եղած չարիքը փոր-
ձեցինք , դարմանը հոս մեր սրտին մէջն է , որ է
չարեաց յորձանքին դէմ դնելով . Աստուծոյ կա-
մացը հպարտակիլ :

- ՏԻԿ ՏԵՇՈ , Պօղոս , տես քու մօրդ արցունքներն :
ԱԼՖ . Իմ բարեգէալ թմրութենէն չըլլայ որ արթնցնէք :
ՏՕՄ . Թէ որ իմանայ որ դուք էք , կըսկսի անմիջապէս
կատղիլ ու մռնչել :
- ՊՈՒ . Յուսամ որ ժամանակ անցնելով եւ ԱՅֆօնային խը-
նամքով խելքը դլուխը դայ :
- ՏՕՄ . Կերեւայ թէ ձեզ կը ճանչնայ :
- ՊՈՒ . Ես քիչ մը ատեն հոսկից հեռանամ , շըլլայ որ իմ
ներկայութիւնս զինքը աւելի զայրացնէ :
- ՏԻԿ . Աեզ երեսի վրայ մի թողուք :
- ՊՈՒ . Մինչեւ վաղեանս օրը հոս կը մնամ , ինչ որ ձեզի
պէտք ըլլայ , հրամայեցէք . (ՀԵ-ՆԵ ԽԸՆԱՅ :
- ՊՈՂ . (ՀԵ-ՆԵ ՃԱՆԱԾԱՀՆ) Ա.յո Վիրդինիային տունն է , կը
ճանչնամ . . . դու իմ սիրելի հայրո ես , անունդ
. . . չեմ յիշեր . . . փոյթ չէ . . . բաւական է որ
քեզ ճանչնամ : իսկ այն կինը : . . . (ԱՆ ՔԻՒՅՆ :
- ՏՕՄ . Հեռացէք : (Ա-ՀԵ-ՆԵ ԽԸՆԱՅ :
- ՊՈՂ . Դու Վիրդինիայն ես . . . դու . . . ո՞հ կարծեմ դու
իր մայրն ես :
- ՏԻԿ . Ո՞վ որդեակ , որդեակ իմ : (ԳԵՒԵ-ՆԵ-ՎՆ :
- ՊՈՂ . Միւս աղջիկն ուր է , Վիրդինիայն :
- ԱԼՖ . Զեզի ըսի որ հեռանաք , զինքը պիտի զայրացնէք :
- ՊՈՂ . Ես ձեզմէ կուզեմ Վիրդինիայն :
- ԱԼՖ . Պօղոս , Պօղոս : (ԹԵ-ԵՆ Բ-ՆԵ-ՎՆ :
- ՏՕՄ . Գացէք կըսեմ : (ԱՆ ՔԻՒՅՆ :
- ՏԻԿ . Ա.յո միսիթարանքն ալ . . .
- ՊՈՂ . Քեզ կը ճանչնամ , դու այն չար կինն ես . . .
- ՏՕՄ . Եկէք , կաղաչեմ : (ԴԵԿ ԴԵ-ՆԵ ՎԻՒՅՆ ԽԸՆԱՅ :
- ՏԻԿ . Ո՞ւր ես ո՞վ մահ : (ԳԱՅՆ ԵՐԿՐՈՒՅՆ :

ՏԵՍԱՐԱՆ Է ·

ՊՕՂԱԾ ԵՒ ԱՅԹՈՒԱԾ

- ՊՕՂ · Ո՞ւր զնաց :
- ԱԼՖ · Քիչ ատենէն կուգայ
- ՊՕՂ · Ու Վիրդինիայն հետք պիտի բերէ
- ԱԼՖ · Այս, կը բերէ
- ՊՕՂ · Բայց դուք զիս առահով կընէք որ :
- ԱԼՖ · Այս, այս · (ալ չեմ կըրնար դիմանալ :
- ՊՕՂ · Որչափ բաներ ո՞նիմ իրեն զրուցելու . . . կը լսեմ
թէ կուղեն դուրս խրկել
- ԱԼՖ · Կըսկսի հանդարտիլ :
- ՊՕՂ · Եւ առանց ինձի պէտք է որ երթայ :
- ԱԼՖ · Կարծեմ, այնպէս :
- ՊՕՂ · Փարիզ :
- ԱԼՖ · Այս :
- ՊՕՂ · Նայէ, նայէ միտքս ի՞նչ կուգայ : կուզեմ իր ետեւէն երթալ, մինչեւ Փարիզ . արքունեաց ծառայութիւն կընեմ, կը հարսաանամ, ինչպէս որ ըսկը թէ ամէնքը հոն կը հարստանան, ու անստեն Վիրդինիային հօրաքոյրը մեր հարսանեացը հաւանութիւն կուտայ : (ՕՇ Է ՏԱՆԱՅ :
- ԱԼՖ · Գու անձանօթ ծնունդ կարդիլէ որ այնպիսի երեւելի մարդկանց մէջ մտնաս :
- ՊՕՂ · Կերթամ, պաշտպան մը կը գտնամ :
- ԱԼՖ · Պաշտպանութիւն գտնալու համար, պէտք է որ շողքորթ, եւ որիշի գոռողութեան գործիք ըլլաս : Գու համեստութեամբ հոն չես կընար յաջողիլ :

ՊՕՂ. Ես արխական գործեր կը նեմ, խօսքիս հաւատարիմ, պարտուցս մէջ ճշգրիտ, բարեկամութեան մէջ յարատեւ կը լլամ, եւ ասանկով հարուստ մը զիս իրեն որդեգիր կառնէ, ինչպէս որ պատմութեանց մէջ տեսեր եմ:

ԱԼՖ. Որդեակ իմ, Հէլլէնք եւ Աթենացիք առաքինութիւնը կը մեծարէին, այսօրուան օրս ամէն բան ուկիով կը դնուի:

ՊՕՂ. Ան ատենը զրքերու վրայ աչքս կը մաշեցնեմ, իմաստուն մարդ մը կը լլամ, ասանկով առանց մէկու մը վնասելու իմ հայրենեացս ծառայութիւն կը նեմ, եւ հանձարովս Վիրդինիայն կառնեմ: (Ի հետուագ ուղարձունք լին:)

ԱԼՖ. Հարստութենէն աւելի դժար է ուսմունքն եւ առաքինութիւնը ստանալ, բայց զրքերու վրայ տքնելէն, եւ հաղուաղիւտ բաղդովի խմաստուն ըլլալէն վերջը ի՞նչ կը յուսաս:

ՊՕՂ. Հռչակաւոր մարդ մը կը լլամ, եւ Վիրդինիային հետ կը կարգուիմ:

ԱԼՖ. Ալ աւելի թշուառ կը լլաս: Հանձարոյդ վրայ ամենուն նախանձը պիտի զրգուի, նախանձորդներուն եւ տղէտներուն աւելի կը լլաս, եւ զքեզ կը հալածեն: Վերջապէս զիտցիր որ առաքինի մարդը այս աշխարհը իրենց տիսեղծ սկատկերը տեսնելով կը ջանան խոկոյն զայն փշել, որպէս զի չըլլայ որ մէկը իրենց յանցանքը երեսնին զարնէ: (Ուղարձունք յառելուն:)

ՊՕՂ. Ըսել է թէ ես դժբաղդ պիտի ըլլամ. . . Վիրդինիայն դուքս պիտի երթայ. . . ոչ դու ալ մատ-

Նեցիր զիս . . . Վիրդինիայն զնաց . . . զինքը
հոս . . հոս . . տեսայ . . Պօղոս, ըստւ, մնաս բա-
րով ես քուկդ պիտի ըլլամ, բայց ո՛ զիտէ թէ ալ
զիրար պիտի տեսնանք : (Մռնկէն աւեայ, Քայլագա-
խանք, ուստինանք :)

ԱԼՖ. (Նորէն կը ցնորի) . . . որդեակ հոսկից երթանք
. . . երկինք մթնցաւ, ողը սպառնալիքներ կընէ :
ՊՕՂ. Ի՞նչ, կուզէք մինչեւ անդամ զատել զիս այն տե-
ղին ուր էր երբեմն Վիրդինիայն . . . այս քարիս
վրայ կը նատէինք . . . հոս ես իրեն կըսէի, Վիր-
դինիա ի՞նչպէս զեղեցիկ ես . . . եւ ինքն ինձի
պատասխան կուտար, Պօղոս կը սիրե՞ս զիս — այս
կը պաշտեմ զքեզ . . . հիմա որո՞ւն այն խօսքերը
կրկնեմ . . . ով պիտի սրբէ իմ քրտինքու ինչպէս
երբեմն եթէ բոլոր օրը յոգնելէն վերջը անձկու-
թեամբ կը դիմէի ժողված պտուղներս իրեն բե-
րելու . . . ո՞չ լացէք, լացէք ամէնքդ ալ, Վիր-
դինիայն, հոս չէ Վիրդինիայն . (Քայլանէր) տե-
սէք ինչպէս տարերք Վիրդինիային կորուստը
կուլան : (Ծառաւ իւ Գրիք, հրեին սաստիանայ . Եւ ծովն
նադանօնի յայնէր իւ լսո՞ին :)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏԻԿԻՆՆ ահաբեկ ԵՒ ՆՈՅՆՔ

ՏԻԿ. Ալֆօնս, Պօղոսը ներու առ, երկինք սոսկալի մը-
րրիկ կըսպառնան : (Ըստանակին Քայլանէր :)

ԱԼՖ. Տեսէք ծառը գրկեր է . . . ես . . . ո՞չ ի՞նչ փայ-
լակներ . . . Պօղոս . . . Պօղոս ներս երթանք : (Թըն-
դանօնի յայնէր :)

ՏԻԿ · կարծեմ հեռուէն թնդանօթի ձայներ կուզան :
 ԱԼՅ · Երթամ նայիմ, - Պօղոսը խնամեցէք, (Երես, և
 առ ճամբէն :)

ՏԻԿ · (Մըսէից իս-եւայ) ի՞նչաղէս այս շառաշխանք մաղերո
 գլխուս վրայ կը խռուեցնեն, մրրիկը կաւելնայ -
 (Զայն Շնորհանունի) թնդանօթի ձայները կը յաձախեն
 . . . արդեօք տարաբաղդ նաւ մը օդնութիւն կը
 խնդրէ . թերեւս իր . . նաւը . . վտանգէ ազատ
 է : =

ՏԵՍԱՐԱՆ Բ:

ՏՕՄԻՆԿՕ. Հիւզեն գրան զարնելով և նոյնք :

ՏՕՄ · Տեղակալը, վաղեցէք, շուտ հասէք :

ՏԻԿ · Տօմինկօ, ի՞նչ կայ :

ՏՕՄ · Չեմ կրնար . . թողէք զիս . . տեղակալ օդնու-
 թեան հասէք :

ՏԵՍԱՐԱՆ Ծ :

ՊՐԻՎ ՏՕՆՆԵ ԵՒ ՆԱՑՆՔ

ՏՕՄ · Փութացէք, ո՞ տէր, նաւ մը ընկղմելու վտանգի
 մէջ է, եւ օդնութիւն խնդրելու համար թնդա-
 նօթներ կարձակէ : (Երես :)

ՊՐԻ · Շուտ, ամենքդ ալ ծովեղերքը վաղեցէք — դուք
 զանգակատունը ելէք — շուտ . հարիսը ոսկի ճամ-
 բորդները ազատողին — ծավեղերքը, ծովեղերքը :
 (Զանգակատի յայնը իւ լուսի նշան կը տանգի) :

ՊՕՂ . (Կըմթի) ի՞նչ , նաւ մը բնկղմելու վտանգի մէջ է
· · · զրուցեցէք :

ՊՈՒ . (Եկան Վրայէն) շուտ ըրէք , վազեցէք , աղատեցէք · · · հարիւր ոսկի : (Շաբ ճարտի դարձու կելան անդաշներու , լուսներու , ջահերունեւ դեպ ի լեռը կերնան)

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ԱԼՖՈՆՍՕ աղաղակելով ԵԽ ՆԱՅՆՔ

ՎԱՅ . (Առ ժեղախն :) Վազեցէք , վազեցէք , մրրիկը նաւը պիտի ջախջախէ , ոչ ոք ծով ելլելու ու խեղձերը աղատելու կը համարձակի . Վիրդինիային նաւն է :

ՊՈՒ . Աղատել կրցողին հարիւր ոսկի :

ՊՕՂ . Վիրդինիային :

ԱԼՖ . Ո՛չ ի՞նչ ըսի :

ՊՕՂ . Թող ոչ ոք (իւ Արիանա , Կենաչները) ոչ ոք ծովը նետուի , անդունդին բերնէն ես զինքը կառնեմ :

ՏԻԿ . ի՞նչ կընես (Կառէ իշխնէ :)

ՊՕՂ . Ամէնքնիդ ալ ինձմէ հեռու կեցէք :

ԱԼՖ . Արդեակ իմ : (Կայնակ :)

ՊՍՂ . ի ծով , ի ծով , Վիրդինիայն աղատելու , եւ կամ մեռնելու : (Ծանոթագութիւն :)

ՎԱՅ . Պօղնս , Պօղնս : (Երեսէն երեւալու :)

ՏԻԿ . Վիրդինիա . (Կը ճարի — Զծ վայրապիւն , խայտակը և իրգինիային ծառը իւ ժւրեւ : — Երեսոյն նաև իւսուսութան :

ՎԵՐՃ Դ . ԱԲԱԲՈՒՄՅՈՒՑ



ԱՐԱՐՈՒԱԾ Ե

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Հաստ մը կոտրտած ծառեր, քարեր, ՏԻԿԻՆ ԼԱԹՈՒՐ հիւ.
ղէն դուրս կելայ և կընսախ :

ՏԻԿ · Ոտքի վրայ կայնելու անգամուժ չունիմ : Աստ-
ուած, Աստուած, դու որ իմ սիրտս կը կարդաս,
փրկէ իմ Վիրզինիայս :

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏՕՄԻՆԿՕ ԵՒ ՆՈՅՆ

Ծովուն կողմէն բարձրաձայն աղաղակելով գայ

ՏՕՄ · Պօղոս, քու Տօմինկօյիդ պատասխան տուր :

ՏԻԿ · Տօմինկօ, Վիրզինիայս, Պօղոսը . . . նաւը . . .
խօսէ, դթա տառապեալ մօր մը :

ՏՕՄ · Թողէք զործիս Երթամ. Պօղոս, Պօղոս. (արցուն-
քըս չեմ կրնար զսպել :)

ՏԻԿ · Աղջիկո :

ՏՕՄ · Այու, տիկին, ձեր աղջիկը :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՊՈՒՐՏՕՆՆէ մարդոցը հետ լեռնէն

ՊՈՒ · Տօմինկօ, Տօմինկօ :

ՏՕՄ · Հրամմեցէք :

ՊՈՒ · Պօղոսը դտնուեցա՞ւ

ՏՕՄ · Զէ տէր :

- ՊՈԽ . ՄԵՆՔ , ՄԵՆՔ զինքը կը գտնանք : (ԼՀԱՆԱ ԵՐԵՎԱՅ :)
- ՏԻԿ . Խօսէ՛ Տօմինկօ , աղջիկո . . . Պօղոսը . . :
- ՏՕՄ . Պօղոսն ալեկոծութենէն ուկորները ջախջախած ,
դլուխը պատռած , քթին ծակերէն ականջէն ,
բերնէն դուրս արխւն պոռտկալով . . . վերջապէս
մեռնելու մօտ է :
- Տ . Կ . ՄԵՌՈՆԵԼԸ , իսկ ՎԻՐՊԻՆԻԱՅ :
- ՏՕՄ . Տեղակալն ասլոսպեց վիրարուժներուն որ Պօղոսը
խնամեն , բայն թէ յոյս չիկայ , քիչ մ'առեն վէր-
քերը կասլեցին , մեղմիչ դեղեր տուին , բայց
յանկարծ բոլոր ուժը հաւաքելով ստք ելաւ , եւ
չեմ զիտեր ուր փախաւ . անոր համար չորս դին
կը վազվզենք . . . բայց թողէք որ երթամ ,
զիս հոս մի կեցնէք , եւ թէ Պօղոսը իյնայ . . :
- ՏԻԿ . Բայց իմ աղջիկս . . .
- ՏՕՄ . Զեր աղջիկն է . . .

ՏԵՍԱՐԱՆ Դ .

ԵԼՅՈՒՆՍՈ ծովուն ճամբէն եկ ՆԱՅՆՔ

- ԱԼՖ . Տօմինկօ , Պօղոսը :
- ՏՕՄ . Անկարելի եղաւ որ գտնամ :
- ԱԼՖ . Լաթընէրի ճամբէն զնա , թերեւս հոն ըլլայ — ես
ալ ասկողմէն կերթամ , եւ վերջը ամենքս իրար կը
գտնանք : (Տօմինկօ, ին ականջն իւ իսուի :)
- ՏՕՄ . Հասկըցայ , ո՞ր էր թէ տարի մ'առաջ մեռած ըլ-
լայի . Պօղոս , Պօղոս : (ԵՐԵՎԱՅ :
- ՏԻԿ . Կաղաշեմ , գթացէք , խօսեցէք , տուէք իմ վեր-
ջին հարուածս . ՎԻՐՊԻՆԻԱՅ :
- ԱԼՖ . Մաիկ ըրէք , եւ սրտերնիդ հանդարտ պահեցէք :
- ՏԻԿ . Ուրեմն իմ սիրտս . . .

ԱՆՁ · Խնչալէս որ տեսաք Պօղոս առանց իր վտանգէն ակնածելու վազեց Վիրդինիային օղնելու, կուզէր ծովը նետուիլ, թեւէն բռնեցի . ինքդինքը մեռցնել կուզեն, ըսի, այս, ըսաւ, կամ պիտի զինքը ազատեմ կամ մեռնիմ: Կը որովհետեւ ցնորք եւ յուսահատութիւն իւր մտացական լոյսը խաւարեցուցեր էին, ես եւ Տօմինկօն զինքը մէջքէն կապեցինք, չուանով մը ծայրէն ամենայն ուժով բռնելով: Այն ատենը Պօղոս կայծակի պէս նաւուն վրայ յարձակեցաւ, բայց ալիքները զինքը ետ կը մղէին, եւ շատ դժուարութեամբ հազիւ թէ կրցանք զինքը ցամաքը քաշել: Նոյն միջոցին Ամալը կղզւոյն նեղուցին մօտ ծովարեկ նաւուն կողերը բացուեր եւ խօրտակեր էին, գործարանք ու կայմերն ամէնք ծովը թափեր, ու կեանքերնին դոնէ ազատելու համար նաւուն մարդիկը որը կայմէ կտոր մը, որը տախտակ մը ձեռք ձգեր էին, կխակործան խելքին տախտակամածին վրայ Վիրդինիայն միայն մնացեր էր, փայլատականց լուսոյն մէջէն Պօղոսը տեսնալով երկու ձեռօք նշան ընելով իրեն վերջին բարեւը կուտար:

ՏԻԿ · Ուրեմն Վիրդինիայն :

ԱՆՁ · Նաւաստի մը որ Վիրդինիային գժբաղկութենէն սիրոը շարժելով մինչեւ նաւուն խելաց կողմը հասեր էր, սպառմեց թէ հոն Վիրդինիային քով հասած ատենը որսէս զի զանի կարենայ ազատել ուզեր է որ՝ Վիրդինիային զգեստները վրայէն հանէ, բայց ինքը այնպիսի պահու մէջ ալ իր առաքինական ոգւոյն հաստատութիւնը պահելով նաւաստին մէկ զի հրեր է :

ՏԻԿ · ԱՆՍԼԱՄԵՇ առաքինութիւն .

ԱԼՖ · ՄԵԿ ձեռքով զգեստներն ամփոփած , միւս ձեռքովը Պօղոսին պատկերը կը սեղմէր . նաւաստի մը այս յուսահատ վիճակը տեսնելով , Վիրդինիայն կը գրկէ ու միատեղ ծովը կը նետուի , եւ հոն աւլեաց խաղալիք կըլլան , մինչեւ արշալյուսին մօտ ցամաքը կիյնան .

ՏԻԿ · Ո՛՛ Վիրդինիայդ իմ .

ԱԼՖ · Ահա հիմա է որ ցուցնելու էք Աստուծոյ կամաց ունեցած հալատակութիւննիդ , արիացիր , ո՛ տիկին . հիմա միայն Պօղոսը վիճուելու ենք , բաւական է թէ ատենին կարենանք իրեն օգնութեան հասնիլ . . . Պօղո՞ս . . . : (Տէինի 1)

ՏԻԿ · Ուրեմն Վիրդինիայն մեռած է : (Լէտուն Զայքէն իւրթոց :

ՏԵՍԱՐԱՆ Ե ·

ՊՕՂՈՍ

Գլուխը կապած , Վիրդինիայի հիւղին կը նայի և գետինը կը փռուի :

ՊՕՂ · Վիրդինիա . . . Վիրդինիա . . . աւաղ . . . կենացա վերջին ժամը հասայ . . . Յուսայի ո՛ Վիրդինիայդ իմ որ դու իմաչքերս քոցէիր . . . եւ դու . . իրան է , անգութ , որ Փարիզ գացիր եւ Պօղոսի մահուան տագնասը չեստեսներ . . . Հոգեսպառ Պօղոսը քչիկ մի հողի տակ կերթայ պառկիլ առանց քենէ լսելու Ներթասըարով Պօղոս . . . պիտի դաս , ու զիս մեռած գտնաս : Իմ գերեզմանս պիտի վինտրես , ու վրան լաս . . . բայց ես պիտի չի կարենամ քու ձայնդ լսել . . . պիտի չի կարե-

նամ . . ինչ կը տեսնամ . Վիրզինիայի ծառին
ճիւղերը կոտրեր ու Պօղոսին ծառէն բաժնուեր
են . . ուրեմն բնութիւն, տարերք զմեզ կը բաժ-
նեն . . յաւիտեանս կը զատեն : Թերեւս դու
Պօղոսը մտածես . . բայց ինչպէս : Եւ դու Պօ-
ղոս չե՞ս յիշեր Վիրզինիայն որ ալեկած եւ մահ-
ւան վտանգի մէջ է, ու զինքը աղատելու չե՞ս
վաղեր . (ջանք իշնէ ու ժանք) Վիրզինիա . . կուդամ
. . . սպասէ . . սէրը հրաշագործ է . . . վրկեմ
Վիրզինիայն ու վերջը դոհ մեռնիմ . (էռանց վր-
իսողէ եւլու, ու ժիշ յը բազէրանալէն վերջը հիյնայ) :

ՏԵՍԱՐԱՆ 9.

Չորս նաւաստի ՎԻՐԳԻՆԻԱՅՆ տեսարանը կը բերեն ,
ՏԻԿԻՆՆ , ԱԼՖՕՆՍՕ , ՏՕՄԻՆԿՕ ,
ՊՈՒՐՏՕՆՆԻ և Ժողովուրդ .

ՊՈՒ · ինչո՞ւ զինքը հոս կը բերէք . ինչո՞ւ մահւան մօտ
խեղճին այս վերջին տանջանքը կուտաք :

ԱԼՖ · Մօրմէն խնդրեց իրրեւ շնորհք որ իր հիւղին մօտ
մեռնի :

ՏՕՄ · Սիրելի Տիրուհիո , ահա ձեր հիւղը :

ՏԻԿ · (ալբէ) Թէ որ ողջ ատենը չի կրցայ զինքը դոհ ը-
նել՝ մահւան ատենն իր կամքը կատարեմ . . . ով
Աստուած . . . (գրի ալիքագիր) :

ԱԼՖ · Բայց այս զինքը յուսահատեցնել է : (Առ Տիկն :)

ՎԻՐ · (Նորաշայայ) Այս է իմ տնակս . . . եւ Պօղոս . . . հոն
չէ . . . մայր իմ . . . մեռան արդեօք :

ՏԻԿ · Զէ . դստրիկ .

ԱԼՖ · Զի կրցանք գտնալ :

- ՎԻՐ · ինչո՞ւ . . . թէ որ Պօղոս ողջ է . . . ինչո՞ւ շիգար . . .
տեսնելու . . . իր . . . վիրդինիայն .
- ԱԼՖ · Դուստր իմ, տես ի՞նչ վտանգի մէջ ես .
- ՎԻՐ · կը տեսնամ . . . քանի մը վայրկեան ալ . . . ու
ձեզ յաւխտեան կը թողում :
- ԱԼՖ · Ուրեմն մոռցիր ամեն մտածմունք :
- ՏԻԿ · Դուստր իմ, ներէ՛ քու մօրդ, գիտեմ, ես եմ պատ-
ճառ քու . . .
- ՎԻՐ · Լոեցէք . . . իմ . . . սիրաս միշտ ձերն է :
- ՊՕՂ · (Կամաց իամաց անունները Վիրդինիայն իշխեանա) Վիրդինիա :
- ԱԼՖ · Պօղո՞ս, ի՞նչ մահադոյժ հանդիպումն :
- ՊՕՂ · Վիրդինիայդ իմ : (Ընդ առաջ ընդ եւներ)
- ՎԻՐ · (Վէտ եւլու) Պօղոս քեզ տեսայ, հիմակ գոհ կը մառ-
նիմ : (Մարտ գրիտ մէջ առանդի :).
- ՏԻԿ · Ո՞վ Աստուած, մեռան : (Առաջանիկ :)
- ՊՕՂ · Մեռան Վիրդինիայն . . . մեռան Վիրդինիայն (Աւ-
քնաօյին յետեւ առներ) Ալֆօնս . . . մահը պսաեց
զմեզ . . . երկինք զիրար սիխի տեսնանք . . .
(Առանդէ սգին՝ գիւղ Ալֆօնսի :)
- ՏՕՄ · Պօղոս ալ կը մեռնի : (Ձետերը հաւերան իւ բանի :)
- ՊՈԽ · ի՞նչ տիսուր տեսիլ :
- ՏԻԿ · Պօղո՞ս, Պօղո՞ս :
- ԱԼՖ · Փառասէր մահացուք, ձեզ օրինակ ըլլան Պօղոս եւ
Վիրդինիայն :

ՎԵՐՋ

ՅՈՒՂԱՎԱՆԵ

ՎՐԵՄԻ	Ո-ՂԻՇ
Է.Զ.	Տ.Դ.
4	4 շրջ
10	6 արտասւոք
12	26 խորափուտ
14	3 Զերբն
19	14 'ի զուգոյն
26	19 Իցե՛ս
27	4 ըղբեցին
"	17 Եւ գրկախառն :
29	12 Ազատաց :
30	8 զնա
32	4 բարելիդ
54	16 զեհեն
42	11 զիարդ
"	19 ընդ դարշ
45	10 ըղխոսամունո
59	15 վրայ
"	26 աեսնայ

ՊՕՂՈԾ ԵՒ ՎԻՐԳԻՆԻԱԾ

19	4 քաշուած էր :	քաշուած էր . . .
25	10 ուստի :	ուստի . . .
51	4 Ո	Ո'
55	25 Վերդինիա	Վերդինիա
54	25 լու	լու
56	2 չըլլայ : Երբոր	չըլլայ . Երբոր
"	5 չըլլայ , ի՞նչ	չըլլայ . Ի՞նչ
39	14 մեռնիմ	չի մեռնիմ
40	5 արդ	այդ
"	15 վրեյ	վրայ
"	29 Դերես	Թերես
47	11 էր	էր
48	11 վաղեանս	վաղուանս
49	Հարստանամ	Հարստանամ

